



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1449

Kinashirky 7549
(n.s.)

ph\$chu.
1877

83
296



ԿՈՒՐԻՑ ԳԵՂԻ ԼՈՅԱ

Գործ Ֆրանց Հոֆմանի

II

ԹԱՐԴՈՒԱՇՈՒԹԻՒՆ

ՅՈՐՈՒԹԻՒՆ ԳՈՐԾ Օ. Խ. Օ. Փ. Ե. Խ. Ա. Ն. Յ.

Տ Փ Խ Բ Ս

ՅՈՒՐՈՒ ՅՈՎԱՆԻՆՈՒ ՄԱՐԵՐՈՒԱՆՈՒ

1877

9011

83
Հ-96

ԿԱԿԱՐԻՑ ԴԵՂԻ ԼՈՅՆ

224

Գործ Ֆրանց Հովմանի

II

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԴՊԲԻ ԱՌԱՔԵԼԵԱՆՑ

100/5208 R

ՏՓՒՄ

ՏՊԱՐԱՆ ՑՈՎՀԱՆՆԻՍԻ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑ

1877

2003

Дозволено цензурою. Тифлисъ, 15 Июля 1877 г.

Типографія Мартиросіанда, на Орбеліановской улицѣ № 5.

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Կրթութեան գործը միշտ առաջ ու առաջ է գնում:

Իւրաքանչիւր փոքր ՚ի շատէ լուսաւորուած ազգ միջոցներ է որոնում կրթութիւնը դիւրամատչելի անելու ամեն մի անհատին, դասատուութեան նոր եղանակներ գոտնելով, դպրոցները բազմացնելով ու բարեկարգելով, նոցա մէջ մանկական մատենադարաններ հիմնելով ու բարգաւաճելով.....

Ուսոք չե ուրանայ, որ այդպիսի ձգտում ու եռանդ ահա մի քանի տարի է, ինչ մեր ազգն էլ սկսել է ցոյց տալ նա էլ շաապում է նորաձեւ դասագրքեր յօրինել դպրոցների թիւը բազմապատկել բարեկարգել ու ապահովել. կրթութեան վերաբերութեամբ խօսել գրել կարդալ... բայց շատ քիչ մոտածող կայ մանկական գրադարաններ կազմելու և նոցա հարստացնելու մասին Խրան է, վերջին տարիների ընթացքում սկսան մի քանի այդպիսի զբքեր հրատարակել սակայն նոքա մի քանի հատ միայն լինելով, անկարող են կազմել գոնէ մի թեթև մանկական մատենադարան — ընթերցարան:

՚Ի հարկէ մեծ բազտաւորութիւն է իւրաքանչիւր ազգի համար ունենալ այդպիսի գրադարաններ՝ բաղկացած յատկապէս կամ մեծ մասամբ իւր միջից բղնած, իւր մէջ կատարուած և իւր հեղինակների գրչի տակ կերպարանք առած վէպերից, սակայն ցաօք սրտի պիտի ասել, որ դեռ մեր ազգը, ինչպէս

նկատում է և ներկայ հայ հեղինակներից մինը իւր
մի կրիտիքական քննութեան մէջ, խիստ աղքատ է
այդպիսի նիւթերով, նորա կեանքը գեռ այնքան հա-
լուստ ու գարգացած չէ, որ կարողանար հայ հե-
ղինակին և գրականութեան բաւականաշափ մնունդ
տալ և հայ ընթերցող մանուկներին հոգեկան և
մտաւոր կերակուր, ինչպէս և հայ աղքատ կեանքի
մէջ եղած փոքր նիւթն էլ սնձանօթ է մեր հեղի-
նակների մեծ մասին. ուրեմն ստիպուած ենք գեռ
և րոպական մոքերի թարգման հանդիսանալ որոց
համար ամենամեծ յարմարութիւն ունին վէպերը,
և նոցանով հետպէտէ հարստացնել մեր աղքատիկ
կեանքը և ապա թէ կթել նոցանփց նոյնպիսիներ
նոյն խակ մեր մանուկների գրականութեան համար:

Մենք այդ նպատակին կամենալով ծառայել
ամենայարմար գատեցինք այդ ճիւղին վերաբերեալ
զանազան զրբերի հետ թարգմանել և հռչակառը
ֆրանց Հօֆման գերմանացու վիպասանական աշխա-
տութիւնները, որոց բազմալեզու թարգմանութիւն-
ներն անդամ նշանաւոր տեղ են բռնում զանազան
ազգաց մանկական մատենադարաններում:

Թարգմանող.

Մայիս

1877

Գևորգ Առաջին

Դարագործը չարութիւն է որոնում:

Բարկացոտ հայեացքով բազկաթոռի վերայ նըս-
տած էր մի միջահասակ մարդ և երբեմն երբեմն
տիրութեամբ նայում էր սեղանի վերայ կուտած
բազմաթիւ թղթերին ու նամակներին: Սենեկի զար-
դարանիքներից կարելի էր եղբակացնել որ տանտէրը
եթէ հարուստ չէր՝ զոնէ միջակ կարողութեան տէր
էր: Այն սենեկը աւելի մի ճեմելիքի նման էր, քան
գործարանի: Մի քանի ընդարձակ պատուհանների
միջեց, որոնք զարդարուած էին ընտիր մետաքսեայ
վարագոյներով, առանւում էր մի գեղեցիկ, պտղա-
լից և ջրանցքներով լի այգի: Առանձնասենեկի պա-
տերից կախած էին երեկելի գեղարուեստների նկար-
ներ, յատակը ծածկած էր պարսկական գորգերով.
ահազին հայելիները, գահաւորակներ և բազկաթոռ-
ները թաւշապատ բարձերով, մարմարեսց վառարան-
ները—այս բոլորը նշան էին նորա լաւ ապրելուն:

Ապային տանտերը բոլոտվին հանգիստ չէր.
Նա խիստ շփոթուած էր երկում. նորա բարձր ու
հպարտ ճակատը կնծիռներով էր ծածկած, աչքերը
մի տեսակ տիսուր էին փայլում, շրթունքները սրդ-
մուած էին: Նա երկար ժամանակ նստած մտածում
էր, վերջապէս վեր կացու և արագ քայլերով սկսաւ
մանգալ սենեկում:

Սիր Թովմաս Լոռվէլը (այսպէս էր նորա ա-
նունը) բաւականին կարողութիւն ունէր, մինչև ան-
գամ շատերը նախանձում էին նորան, բայց երբէք
չէր կարելի նորան երջանիկ և իւր վիճակից բաւա-
կան համարել գոնէ այսպէս էր մեր յիշած առա-
ւոր, երբ նա տիսուր մտածմունքներով նստած էր
իւր գեղեցիկ Լոռվէլ-Կաստլ ամրոցի առանձնասենե-
կում:

Սիր Թովմասը շատ ման եկաւ սենեկում, երբեմն
երբեմն ինքն իրան հայհոյանքներ արձակելով բերա-
նից և գողարվ սղմելով բուռը: Վերջապէս, կար-
ծես մի լուսաւոր միաք յղացած՝ վրայ ընկաւ զան-
գի թելին և արագ զանգահարեց: Խսկոյն զանից ե-
րևաց սենեկապետի նիշար գէմքը: Մոսիօ ժանր-
այս էր նորա անունը՝ ազգով Փրանսիացի էր. նա
արգելն մի քանի տարի ծառայում էր սիր Թովմասի
մօտ և յաջողել էր զրաւել իւր ափրօջ լիսակատալ
համակրութիւնը:

— Ժան, ասաց վերջինը, ես շատ յուսահատ
դրութեան մէջն եմ, նայիք այս ահազին թղթա-
կոյտին. սոքա բոլորը հաշեւներ և նամանիներ են, որոն-
ցով պահանջում են վճարել պարտքերս: Տասն հա-

զար Փունդ ստերլինգ պիտի վճարել այն ինչ զրբ-
պանումն հազիւ թէ մի հարիւր շելլինգ լինի: Մի
խորհուրդ տուր սորա մասին:

— Պարտատէրները պիտի համբերեն, սիր Թով-
մաս, խորը ողջունելով ասաց սենեկապետը, ձերդ
մեծութիւնը շուտով փող պիտի ստանայ վարձա-
ւորներից և այն ժամանակ կարող էք ազատուիլ
այդ ձանձրացնող պարտատէրերից:

— Բայց նոքա այլ ևս չեն ուզում սպասել այլ
ընդհակառակին սպառնում են ինձ բանտարկել: Դեռ-
նավարձը հազիւ հինգ հարիւր Փունդ լինի: Կա-
րող է արդեօք մի որևէ հրաշք քանի անզամ մե-
ծացնել նորան: Քիչ է մնում, որ սպանեմ ինձ. մի բան
մտածիր, ժան:

Սենեկապետը ուսերը վեր քաշեց:

— Զերդ ողրոմածութիւն, չէք կարող առ ժա-
մանակ գրաւ զնել ձեր կալուածները, հարցրեց նա:

Սիր Թովմասը դառնութեամբ ծիծաղեց:

— Ո՛չ դորա մասին մտածել անգամ անհնար
է: Իմ տան առաստաղի իւրաքանչիւր քարը վա-
ղուց արգէն գրաւ է գրած: Նոցա փոխարէն ինձ
ոչ մի կոպէկ չեն տալ: Մի ուրիշ ձար գտիր:

— Դժուար է գտնել միլորդ, վրայ բերաւ սե-
նեկապետը: Ես գրամ չեմ կարող ձեռք բերել իսկ
եթէ, ձերդ ողրոմածութիւն, մի քանի տարի ժա-
մանակով արտասահման գնայիք, այնտեղ գոնէ չին
անհանգստացնի ձեր պարտատէրները:

— Կարծում ես թէ այն անպիտանները ձեռք
կվերցնեն ինձնից, գոչեց սիր Թովմասը: Հենց առա-

Ձեն իսկ փորձին նոքա ոստիկանութեան միջոցով
ամբողջ Անդղիայում կ'որոնէին ինձ: Ո՛չ այդ էլ ան-
կարելի է:

—Եթէ այդպէսէ, կարծեմուրիշոշինչ չի մնում
ձեր ողորմածութեան անելու, բայց եթէ այս ամբո-
ջից երբէք դուրս չգալ ասաց ժանը: Այստեղ ոս-
տիկաններից ոչ ոք չի կարող ներս մտնել, որովհե-
տեւ օրէնքով Անդղիացի ազնուականի տունը ամրոց է:

—Եւ դու առաջարկում ես ինձ ամբողջ կեանքս
բանտարկութեան մէջ անցնել: Ի՞նչ յիմարութիւն:
Միենայն չէ արգեօք, թէ բանտառմ նստել և թէ փա-
կուել այս պատերի մէջ: Երկու դէպքումն էլ ես չեմ
կարող ինձ ազատ համարել իսկ ինձ համար ամեն-
նազլաւորն այս է: Քո միտքը հնարագէտ է, ժան,
լաւ մտածիր, օգնիր ինձ այս վասնդից ազատուե-
լու: Ես Անդղիական Ծորդի զաւակ եմ, ուստի և ա-
ւելի շուտ կ'համաձայնեմ ինձ սպանելու, ձեռքս
չի դողայ, բայց երբէք բանտ չեմ մտնի:

Սիր Թովմաս Լոռվիլը սկսաւ արագ քայլերով
ման գալ սենեկում: Ժանը ուշադրութեամբ հետե-
ռում էր իւր ախրօջ ամեն մի շարժուածքին:

—Ես մի երրորդ միջոց էլ գիտեմ, ասաց նա եր-
կարատեւ լրութիւնից յետոյ. բայց կասկածում եմ,
կ'համաձայնէք, ողորմած տէր, ընդունել իմ ա-
ռաջարկութիւնը:

—Մի վախիր, ժան, բաց խօսիր: Ես ամեն բա-
նի կ'համաձայնեմ, միայն թէ ազատուեմ այս ան-
տանելի պարտատէրներից, որոնք ինձ շան պէս ձանձ-
բացնում են:

—Զերդ ողորմածութիւն, դուք ունէք եղբայր
Լօրդ Էննէլէյ անունով, նա շատ հարուստ է:

Սիր Թովմասը բացասական նշան տուաւ գլխով
ու պատասխանեց.

—Ո՛չ ժան, եղբօրիցս ոչինչ յոյս չունիմ: Նա
տկար է և համարեայ բանականութիւնից զուրկ,
գոնէ վաղուց արդէն առողջ մտքի չէ: Նա ինձ կո-
պէկ չի տալ, որովհետեւ այնքան ժլատ է, որ բոլ-
ովին անտարբեր կ'նայէր, թէ ինչպէս ինձ պարտ-
քերիս համար կ'բանտարկէին:

—Դատ ճշմարիտ է, Միլօրդ, շարունակեց ժանը.
Նա հիւանդ է, շատ հիւանդ է, բժիշկներն ասում
են, որ Լօրդ Էնննէլէյն հազիւ թէ մինչև միւս
գարուն ապրի: Եթէ նա մեռնէր....

—Ինձ ի՞նչ շահ գորանից. Նորա մահը ինձ ոչ-
ինչ չէր օգնի, ապացած կտրեց Թովմասը ժանի
խօսքը: Չէ՞ որ ես չեմ ժառանգը, նա որդի ունի
Արտուրը անունով: Բացի դորանից նա ամուսնացած է:
Արտուրը եօթ ասրեկան առոյդ ու առողջ մանուկ է
և նա գեռ կենդանի կլինի, երբ իմ ոսկրները արդէն
կ'փթին: Ո՛չ, այդ կողմից էլ չեմ կարող օգնութեան
սպասել:

—Դորս մասին, ողորմած տէր, շատ Ճիշտ էք
խօսում, ասաց սենեկապետը: Դուք գիտէք, որ Լօրդ
Էնննէլէյն շատ վատ յարաբերութեան մէջ է իւր
ամուսնոյ հետ:

—Ի հարկէ գիտեմ: Նա մի աշխարհասէր կին է,
մաածում է միայն բաւականութիւնների մասին,
ման է գալիս Լօնդոնի խնջոյքներն ու ժողովները

և երբէք չի հոգում իւր հիւանդ ամուսնոյ մասին։ Նրա խելքիցն է, այն յիմարի։ Ինչո՞ւ լաւ ընտրութիւն չարաւ։ Բայց ի՞նչ դորանից ինձ ի՞նչ օգուտ։

— Ոչի՞նչ Միլորդ, պատասխանեց սենեկապետը. Ես միայն կամեցայ ձեր ուշադրութիւնը դարձնել այն հանգամանքի վերայ, որ լեզի էննէսէյն ոչի՞նչ ազգեցութիւն չունի իւր մարդու վերայ, և որ դժուար չէր նորա եղանակը՝ ինքն ազգել հիւանդի վերայ։

— Ի՞նչ օգուտ այդ ազգեցութիւնից, եթէ նա ինձ դրամ չի տալ նեղանալով գոչեց սիր Թովմասը, բռլորովին Հասկանալով, թէ իւր սենեկապետի այս խօսակցութիւնները ուր պիտի վերջանային։ Ես այժմ իմ եղբայր Զարլսի հետ լաւ յարաբերութեան մէջ եմ, բայց ես այն էլ գիտեմ, որ նա շատ ժշտ է։ Ոչ նորանից անկարելի է դրամ ստանալ։

— Միայն այդ չէ, եթէ նա մեռնէր, վրայ բերաւ ժամը։

— Քեզ ասում են թէ նա որդի ունի, բարկացած գոչեց սիր Թովմասը ուար գեսնին զարկելով։ Այսօր դու ինչպէս որ անհասկացող ես դարձել, ժան։ Սենեկապետը նենդութեամբ ծիծաղեց։

— Ես միայն կարծում եի, ձերդ ողորմածութիւն, ցածր ձայնով ասաց նա, որ լաւ կ'լինէր, եթէ օգուտ քաղէկը ձեր ազգեցութիւնից կօրդի վերայ, Արտուրի վերաբերութեամբ։ Նորա խորթ մայրը բոլորովին չի հոգում նորա մասին, նա միանդամայն ծառաների հակողութեանն է յանձնուած, որոնցից,

ի հարկէ, ոչի՞նչ լաւ բան չի սովորի. Հայրը հիւանդութեան պատճառաւ ոչ կարող է իւր որդու վերայ հսկել և ոչ հոգալ նորա կրթութեան համար. այս պատճառաւ, ձերդ ողորմածութիւն, դուք մի բարի գործ արած կ'լինէք, եթէ յանձն առնեկք այն խեղջ մանկան մի լաւ ուսումնարան տալ։

Սիր Թովմասը զարմացած նայում էր իւր սենեկապետի վերայ, կարծես ուզում էր հարցնել, առողջ մաքի՞ն նա թէ ոչ։

— Ի՞նչ գոչեց նա վերջապէս։ Ես հոգամ այն անպիտանի համար, որ ժամանակով խլի ինձանից էննէսէյների գեղեցիկ ժառանգութիւնը. դու ցնորուել ես. Ի՞նչ գործ ունիմ այն մանկան հետ. ինձ համար միւնոյն չի՞ թէ նա լաւ կամ վատ կրթութիւն կ'սահնայ։

— Ձերդ ողորմածութիւն, ինձ լաւ չէք հասկանում, վրայ բերաւ սենեկապետը։ Այսեղ բանը երեխայի կրթութեան վերայ չէ, այլ նորան հեռացնելու հայրական տնից, ուր նա շըջապատուած է ծոյլ դասարկապուաների խմբով։

— Բայց ինձ ի՞նչ օգուտ կարող է բերել նորա բացակայութիւնը, հարցրեց սիր Թովմասը, գեռ բռլորովին Հասկանալով ժանին։

— Դեհէ, ձերդ ողորմածութիւն, երեխաները մահկանացու են, ասաց սենեկապետը, մի առանձին տեսակ շեշտելով վերջին խօսքը։ Ուրեմն ինչո՞ւ այնպէս չանել որ մեռնի կամ զնէ անցայտանայ և միստէր Արտուրը։ Սիր Թովմասը դեղնեց և զարհուրելով մի քայլ յետ գնաց։

— Խնչպէս, գոչեց նա, ուզում ես սպանութեամբ
ինձ արատաւորեմ։ ոչ, երբէք, երբէք, ես լօրդի
զաւակ եմ։

— Այս ո՞վ է ասում, սիր Թովմաս։ Աստուած
ազատի մեզ այդպիսի զարհուրելի շարագործութիւ-
նից, հանդարտութեամբ ասաց ժամը։ Բայց չէ որ
կարող է պատահել որ մանուկը մեռնի կամ դռնէ
մեւած կ'թուայ։ Զէ որ այն ժամանակ, ձերդ ողոր-
մածութիւն, իրու լօրդ Էննէսլէյի ժառանդ հան-
գիսա կ'լինէք ձեր պարտատէրներից։

— Անկասկած, ասաց սիր Թովմասը։ Բայց ես
չեմ հասկանում, դու մի բան մտածում ես, բաց
խօսիր... տէր Աստուած, ասա շուտ, մի տանջըր
ինձ։ Ի՞նչ մտադրութիւն ունիս։

Չերդ ողորմածութիւն, թոյլ կտաք ինձ բաց
խօսելու։

— Խօսիր։

— Ուրեմն լսեցէք ինձ, սիր Թովմաս։ բանն
այնքան հեշտ է, որպան և հասարակ, ասաց սենե-
կապեար։ Դուք համովեցէք ձեր եղբօրը յանձնել
ձեզ իւր որդու կրթութեան հոգացողութիւնը և
խոսացէք նորան երեխային մի ուսումնարտն տա-
լու։ Ի հարկէ դուք չէք տալ նորան մօտիկ տեղ
այլ կաշխատէք ուղարկել յիսուն կամ հարիւր մղոն
հեռաւորութիւն ունեցող ուսումնարան։ Եթէ դուք
կ'ասէք Լորդ Էննէսլէյին, թէ որքան անհրաժեշտ է
երեխային խիստ հսկողութեանը յանձնել այն ժա-
մանակ չէք դժուարանայ նորա համաձայնութիւնը

ստանալու դորա համար և այնուհետեւ Արտուրը մեր
ձեռքին կ'լինի։

— Յետոյ ի՞նչ կ'լինի, ի՞նչ կարող ենք անել
նորան, գոչեց սիր Թովմասը շփոթուած։ Դարձեալ
կրկնում եմ, որ ես երբէք նորան մահուան պատ-
ճառ չեմ գառնալ։

— Ամենամեծ յիմարութիւն կ'լինէր այդ, վասն
զի յանցանքը խսկոյն կ'յայտնուէր, տասց ժամնը։
Ո՛չ իմ միտքս ուրիշ է...

— Ի՞նչ է միտքդ, ի՞նչ... շուտ ասա...՝ մի
տանջելու ինձ։

— Այ լսեցէք, ձերդ ողորմածութիւն, շու-
տով ասաց ժամնը։ ես կարծում եմ, որ հենց միտէր
Արտուրը հեռացրած կ'լինի հայրական անից, այնու-
հետեւ այլ ես ոչ ոք հոգացող չել լինի նորա մասին։
Եւ ով կանէր այդ։ — Նորա խորթ մայրը։ Ոչ, նա
երբէք չել թողնի Լոնդոնի ինջոյքներն ու բա-
ւականութիւնները մանկան համար, որին առանց
այն էլ չել սիրում։ — Լորդ Էննէսլէյն։ բայց նա
հիւանդ է և ոչ մի հնար չունի ճանապարհ
գնալու, մնում են միայն ծառաները։ Նորա էլ ոչ
ժամանակ ունին և ոչ փող, բացի գորանից նոցա
հարկաւոր է թոյլտուութիւն այցելելու տղային, որ
երբէք չեն կարող ստանալ։ Այսպէս ուրեմն տես-
նում էք, որ միտէր Արտուրը բոլորովին ձեր ձեռ-
քին կ'լինի։

— Ի հարկէ տեսնում եմ, վրայ բերաւ սիր
Թովմասը, բայց գեռ բոլորը չեմ հասկանում, թէ
դորանից ես ի՞նչ օգուտ կարող եմ քաղել։

— Համբերեցէք, համբերեցէք, ձերդ ողորմաւծութիւն, լսեցէք մնացածն էլ, շարունակեց ժանը: Որովհետեւ մենք բոլորովին հաւատացած կարող ենք լինել, որ միտեր Արտուրին շրջապատողներից ոչ ոք չէ վրդովուի նորա մասին և որովհետեւ, բայց դորանից, կասկած չկայ, որ այն ուսումնարանի վերատեսուչը, ուր որ գուք կ'առք երեխային, երբէք տեսած չել լինի իսկական Արտուրին այս պատճառաւ ձեզ ոչինչ չել խանգարում մի կեղծ Արտուր հանդէս բերել:

Սիր Թովմաս Լոռվէլը զեղնեց և զարհուելով աղաղակեց.

— Այժմ սկսում եմ քեզ հասկանալ:

Ժանի դէմքի վերայ վայրենի ժպիտ երեաց:

— Այս, ասաց նա, իմ գաղափարը ուղիղ է և անվանգ: Վերցնենք մի հիւանդ և թոյլ տղայ, որի օրերը արդէն համարուած լինէին և տանք ուսումնարան: Տեսուչը չել կարող կասկածել ձեր խօսքերի Շմարտութեան մասին և կեղծ-Արտուրը կ'մուծուի մատենի մէջ Արտուր Էննէլէյ անուամբ: Նա կ'սկսի հիւանդանալ կ'մեռնի, կ'թաղուի և ձեզ օրինաւոր վկայական կ'ուղարկեն Արտուր Էննէլէյի մահուան մասին: այսպիսով, ձերդ ողորմածութիւն, կմնաք ձեր եղբօր տիտղոսի և կարողութեան միակ ժառանգ:

Սիր Թովմասին այնքան հարուածեց նորա խորամանկ սենեկապետի վայրենի և ուղիղ համարուած գաղափարը, որ նա թուլացած ընկաւ բազկաթոռի մէջ: Իւ Շմարիտ, որ այս գաղափարը ուղիղ էր և կարող էր բոլորովին անվտանգ կատարուիլ: Նորա

կատարելուց էր կախուած սիր Թովմասի վիճակը: Անգլիայի ամենահարուատ մարդերից մինը լինել, թէ պարագերի համար բանտը նստել: Նա երկար չմոտածեց—փորձանքը խիստ մեծ էր:

— Բայց ո՞ւր գտնենք մի այնպիսի տղայ, որպիսին մեկ հարկաւոր է, ասաց նա վերջապէս երկար լուութիւնից յետոյ:

— Իսկ նա արդէն գտնուած է, ձերդ ողորմածութիւն, պատասխանեց ժանը:

— Ո՞ւր է նա... այդ ո՞վ է... այստեղ բեր տեսնենք:

— Այստեղ մեր գիւղում մի բանուորի այլի կին կայ, նա մի որդի ունի ծիշտ ձեր եղբօրորդու չափ: Այն տղայն, ինչպէս ինձ բժիշկն ասաց, հազեւ թէ վեց ամիս ապրի: Խեղճ երեխան տանջլում է անբուժելի կրծքացաւով: Նա գեռ ման է գալիս և խաղում, իսկ մի երկու ամսից յետ ստիպուած կ'լինի պառկերու և այլ ևս տեղից չել վերկենայ: Ես խոստացել եմ փոքրիկ Զօնի մօրը (այս է նորա անունը) ձեզանից խնդրել իւր որդուն մի լաւ հիւանդանոց տալու: Ի հարկէ, ձերդ ողորմածութիւն, ստիպուած կ'լինէք բոլոր ծախսերը հոգալ բայց դուք անկասկած չպիտի ասէք այլուն, թէ ո՞ր հիւանդանոցն էք տալիս նորա որդուն:

— Բայց նա անպատճառ կցանկանայ այդ իմանալ: Նա միշտ կուգի իւր որդուն տեսնել:

— Սորան այդ մտաղըութիւնից հեռացնելն էլ դժուար չել: պէտք է իմանալ, որ նորա օրերն էլ համարած են. նա գեռ երեխայից վաղ կ'մեռնի: Հենց այս բանը ստիպեց նորան ձեր ողորմածութեան

Դիմելու: Նս զքօմնելիս պատահմամբ ծանօթացայ
այդ այրու հետ, և իսկոյն մաածեցի, որ այս ծառ
նօթութիւնը շատ օգտակար կարող է լինել ձեր ո-
ղորմածութեան համար: Այժմ ձեզ է մնում վճռել
թէ ո՞վ պիտի լինի Լորդ Էննէսլէյի ժառանգը:

Սիր Թովմաս Լոռէլը մեծ քայլերով ման էր
զալիս սենեկում, նրա երեսին սառը քրտինք դուրս
տուեց, շրթունքները կապահցան, աչքերը մի տե-
սակ վայրինաբար էին փայլում, ձեռները դողումէին:

— Իսկ ի՞նչ պիտի անենք իսկական Արտուրին
հարցըեց նա յանկարծ:

— Այն ժամանակ, ձերդ ողորմածութիւն,
դժուար չի լինի նորան հեռացնել վրայ բերաւ սե-
նեկապետը: Արտուրը գեռ երեխայ է, ուստի և շուտ
կմոռանայ իւր նշանաւոր ծագումը: Նա իւր ան-
ցածը շատ մոռթը կերպով կյիշէ և շուտով նոր
կեանքին կ'ընտելանայ: Ակզբում նորան կարելի է
բանտարկած պահել իսկ յետոյ մի հեռու ուսում-
նարան տալ Զոն Ամիս անունով, իսկ այնտեղ երե-
խան ինչ կամենայ խօսի, ոչ ոք հաւատացող չի լի-
նիլ: Մի քանի բարի հարուածներ էլ կատիպեն նոռ-
րան շուտով մոռանալ իւր ծագումը: Նա ինքն իրան
խելքի կգայ և վերջապէս այն մոռքի կգայ, որ ան-
ցեալ կեանքը երազ կթուաց իրան: Այս կողմից,
ձերդ ողորմածութիւն, բոլորովին հանգիստ կարող
էք լինել...

— Բայց եթէ նա մեծանայ ու չմոռանայ իւր
անունը, ի՞նչ կլինի այն ժամանակ, ընդհատեց սիր
Թովմասը: Վերջապէս նորա ուսումնարանից դուրս
զալու օրը կգայ: Ի՞նչ կլինի, եթէ նա ազմուկ բարձ-

րացնի, եթէ նա ինձ սկսի մեղադրել և ինձ վերայ
գանգատի, եթէ նորան հաւատան և քննութիւնն
սկսեն: Ահա քո գաղաւ արի թոյլ կողմը:

Սենեկապետը նենգութեամբ ժպտաց:

— Զէ՞ որ դուք Շէ՞ որ զի՞այական կունենաք
Արտուր Նորէլիյի մահւան մահն, պատասխանեց
նա: Դիշուք Շէ իրաւ երեխան սկսէր քեզ մեղա-
դրել չէ՞ որ նա ոչինչ ապացոյց չունի, նորան ոչ
ոք չէր հաւատավալ ինելագարի կամ խաբեբայի տեղ
կդնէին և կ'վարուէին նորա հետ այնպէս, ինչպէս
վարում են այնպիսիների հետ: Բացի դորանից որ-
քան միջոցներ և ձանապարհներ ունի Անգղիայում
հարուստ և երեւելի Լորդը ազատուելու մի ձանձ-
րացնող շրջմոլիկից, որ ոչ փող ոչ ազգականներ և
ոչ անգամ պաշտպաններ ունի: Աշխարհը մեծ է, իսկ
Անգղիան էլ ընդարձակ գաղթականութիւններ ունի:
Երեխային կարելի է ծովի այն կողմն ուղարկել և
այնուհետև կտեսնենք, թէ ի՞նչպէս յետ կդառնայ:
Եւ եթէ, ձերդ ողորմածութիւն, կամենում էք ձեր
եղօրորդուն մի մեծ բարերարութիւն անել, կարող
էք նորան մի մասնաւոր ռոճիկ նշանակել այն պայ-
մանաւ, որ նա երբէք ոտք չկոխի Անգղիայի հողի
մէջ: Այն ժամանակ դուք բոլորովին անվտանգ կլի-
նէք, իսկ բացի դորանից ամբողջ աշխարհը կսկսի
ձեր վեհանձնութիւնը փառաւորել:

— Իրաւոր, կարծես դու Ճշմարիտ ես խօսում,
ասաց սիր Թովմասը և նորա գէմքը պայծառացաւ:
Ամենից առաջ ես պիտի տեսնեմ այրի Ամիտին և
նորա որդուն: Եթէ քո խօսքերը Ճշմարիտ են, եթէ

իրաւ փոքրիկ Զօնին մահ է սպառնում, ևս վաղն և
եթ կերթամ եղքորս մօտ և կրերեմ Սրտուրին: Գնանք
այլու մօտ, ժան:

Սենեկապետը, ի հարկէ, բոլորովին համաձայ-
նեցաւ սորան:

— Ասկայն զդոյշ կացէք, սիր Թովմաս: Ամիտը
չպէտք է կասկածի նորանում, թէ գուք նորա որ-
դին տալիս էք Հիւանդանոցը: Ժամանակ առ ժա-
մանակ պէտք է հաղորդել նորան տղայի առողջու-
թեան որսիսութեան մասին և խեղճ մայրը մեռնե-
լոց առաջ որքան միսիթարուած կլինի իմանալով,
որ իւր որդին աւողջանում է:

Սոքա գնացին գիւղը և ժանրը ներս տարաւ
իւր տիրօջ մի փոքրիկ ու կիսաւեր տուն: Այնտեղ
պատահեց նոցա մի գեղնած հիւանդ կին, որին
հէնց առաջին տեսնելուց իմացւում էր, որ կարող
էր միայն մի քանի շաբաթ էլ ապրել:

— Բարե ձեղ միստրիս Սմիտ, ասաց նորան
ժանրը: Նո իմ խոստումն կատարեցի. ահա մեր բարի
տէրը, սիր Թովմաս Լոուլէլը: Ձեր աղքատիկ և ան-
օգնական զրութիւնը սորանում կենդանի կարեկցու-
թիւն զարթեցրին դէպի ձեղ: Սիր Թովմասը կամե-
նում է ձեղ օգնել:

— Այո՞, տիկին, ասաց յետոյ վերջինը կեղծ
ծաւոր փաղաքշանկով: Իմ սենեկապետը պատմեց
ինձ ձեր խղճուկ զրութիւնը և ես ինձ պարտք եմ
համարաւմ ձեղ մի օգնութիւն անել:

— Ո՛չ, որքան բարի և ողրմած էք գուք,
պատասխանեց կինը և նորա չորացած ու գեղնած

այտերի վերայից զլորուեցան արտասուքի կաթիներ:
Աստուած Հարիւրապատիկ վարձարի ձեղ այն ամենի
համար, ինչ որ գուք կամենում էք ինձ անել: Այս,
ես շատ աղքատ եմ և գժբաղտ: Այնուշետե, երբ
անցեալ տարուանից մեռաւ իմ մարդս, սկսեցի հի-
ւանդանալ և որքան էլ աշխատում էի՝ հազիւ էի
կարողանում կերակրել ինձ ու իմ խեղճ Զօնին:
Պակասութիւնն ու զրկանքները խեղճ երեխիս էլ
թուլացրին և միանգամայն խանգարեցին նորա ա-
ռողջութիւնը: Բայց նրա համար գեռ էլի յոյս կայ,
եթէ միայն նորա մասին լաւ հոգացողութիւն անեն:
Դոնէ ես այսպէս եմ կարծում: Ո՛չ, սիր Թովմաս,
եթէ գուք ուզում էք ինձ ամենամեծ ողրմութիւն
անել, տարեք ուրեմն զորան որեխցէ հիւանդանոց:

— Լաւ, սիրելիս, ես անպատճառ կանիմ այդ,
ես ձեղ համար էլ կհոգամ, որպէս զի այսուհետե
ձեր կարողութիւնից վեր չ'աշխատէք, ասաց սիր
Թովմասը կեղծ կարեկցութեամբ: Ցաւում եմ, որ ա-
ւելի վաղ չեմ իմացել ձեր աղքատիկ զրութիւնը,
բայց յոյս ունիմ, որ էլի ուշ չէ: Խոկ ուր է երեխան
նորան չեմ տեսնում:

— Աս քնած է այնտեղ տնակում: Խեղճ Զօն,
նա շատ շուտ է յոգնում:

— Ես պիտի տեսնեմ նորան, որպէս զի իմա-
նամ, թէ ի՞նչ կարող եմ անել նորա համար, ասաց
սիր Թովմասը և մօտեցաւ տնակի դռան, որտեղից
այդ խոկ բոպէին լառեցաւ սաստիկ և խուլ հազ:

— Մտէք, ներս մտէք, սիր Թովմաս, ասաց
այլին: Այդպէս խիստ հազելուց իմանում եմ, որ

արդէն որդիս արթնացել է։ Անպիտան հազը ինչ
պէս նա տանջումէ այն խեղճին։ Բաւական էր միայն
ազատուէր Զօնը այս հազեց, այնուհետեւ ամեն բան
լաւ կլինէր և անպատճառ կառողջանար խեղջ զա-
ւակա Բայց աշխ և նո։ այստեղ արի, որդի։ Ահա
մի բարի պարզն, որը կամենում է քեզ օգնել։ Սօս
գնա, չ բռնիւլիքիւն արա նորան։

Եր Բովմաս Լուսիլը անդադար նայում էր ման-
կան, որը գանգալ քայլերով դուրս եկաւ տնակից և
սկսեց խիստ հազար այս հազը վերջապէս այնքան
դադրեցրեց նորան, որ թուլացած նստեց մօր ոտ-
ների մօտ։ Զօնը ինքն ըստ ինքեան գեղեցիկ էր, նո-
րա մազերը գեղեցիկ, սև և գանգուր էին և աչերը
կապոյտ։ իսկ նորա ներս ընկած՝ ջերմախտից կար-
մրած այտերը և աչքերի անբնական մետաղեայ փայ-
լունութիւնը պարզ ցոյց էին տալիս, որ նորա վե-
րայ արդէն մահուան կնիք էր գրոշմուած։

— Այս, սիրելիս, ասաց նորան սիր Թովմասը
փաղաքշելով, ես ուզում եմ քեզ օգնել։ Քեզ կ'բժշկի
մի ընտիր և խելօք բժիշկ և շուտով կառողջանաս։
Հանգստացէք, բարի միստրիս Սմիտ։ Այդպիսի տարի-
քում, երբ ինքը բնութիւնն էլ օգնում է առողջա-
նալուն, բաւական է միայն մի փոքր լաւ հոգացո-
զութիւն և լաւ կերակուր՝ ուժերը ամրացնելու հա-
մար։ — Այժմ դեռ մի փոքր պիտի ձանապարհոր-
դեմ։ Երեք օրից յետոյ կվերադառնամ և իսկոյն ինքս
կտանեմ ձեր որդուն հիւանդանոց։

— Թուք շատ ողորմած էք, սիր Թովմաս, պա-

տասխանեց խեղջ կինը։ Բայց ես կարո՞ղ եմ տեսնել
որդուս։

— Երբ կամենաք, և բացի դորանից, դուք իւ-
րաքանչիւր շաբաթ տեղեկութիւն կոտանաք նորա
առողջութեան դրութեան վերաբերութեամբ։ Բոլո-
րովին հանգիստ կացէք, ձեր որդին ոչինչ պակասու-
թիւն չի ունենայ։ Ցտեսութիւն ուրեմն, երեք կամ
չորս օրից յետոյ կտեսնուենք։

“Եա սեղանի վերայ մի ոսկի դրաւ և շուտով
հեռացաւ, ուշադրութիւն չդարձնելով խեղջ կնօջ
օրհնութիւններին և շնորհակալութեան արտասուք-
ներին։ Ժանը հետեւեց իւր տիրօջ։

Դեհ, սիր Թովմաս, ասաց նա, երբ նոքա մի
քանի քայլ հեռացան խրճից, ասածներս Շշմարիտ
էին թէ ոչ։

— Այս, ժան, շնորհակալ եմ քեզանից։ Երբէք
չեմ մոռանայ քո այս ծառայութիւնը։ Այդ երեխան
ձիշտ իմ ցանկացածի նման է։ Դու Շշմարիտն ա-
սացիր։ Վեց ամսից յետոյ ես Լորդ Էննէսէյի ժա-
ռանգը կլինիմ։ Վազը կ'երթամ եղքօրս մօտ։

— Աստուած բարի ձանապարհ տայ, սիր Թով-
մաս, ասաց սենեկապետը։ Ենրկաթը տաք ժամանակը
կծեծեն» ասում է առածը, հարկաւոր չէ ժամա-
նակը կորցնել։

Անենեկապետին այլ ևս հարկաւոր չէր իւր տի-
րօջ նախանձը գրգռելու։ Սիր Թովմասը այժմ ինքը
չերմ ցանկութիւն ստացաւ իւրեանից գծած նախա-
գաղաքարը կատարելու համար։ Այժմ յաջողու-
թիւնը հեշտ և անկասկածէլի էր թւում նորան, ոչ

ոք, մտածում էր նա, երբէք չի իմանայ՝ խաբէութիւնս: Բայց սիր Թովմասը մոռացաւ, կամ աւելի լաւ է ասել աշխատում էր մոռանալ որ Աստուած կայ, Որի ամենատես աշքից ոչինչ չի ծածկւում: և Որը չարագործներին երբէք առանց պատժելու չի թողնում:

Գլուխ Երկրորդ:

Գի ժ տղան:

Առաւօտեան արշալոյսը հազիւ թէ բացուել էր, երբ Լուլէկատլի դոներից դուրս գնաց՝ սիր Թովմասի կառքը և սահում էր գէպի իւր եղօր, երելի ու հարուստ Էննէսլէյ Լորդի կալուածները: Նրկու եղայրները արգէն մի քանի տարի չէին տեսակը միմեանց, թէպէտ, ինչպէս երեւում էր, միմեանց հետ հաշտ յարաբերութեան մէջ էին, բայց նոցա բնաւորութիւնների զանազանութիւնը պատճառ դարձաւ այս յարաբերութեան սառնութեան: Փոքր եղբայր սիր Թովմասը թէպէտ և այնքան հարուստ չէր, որքան Լորդ Էննէսլէյն, սակայն ապրում էր ճնի, շռայլ պարապում էր թթալասաղով, բաւականութիւններով և զրօաննքներով: Էնդհակառակն, Լորդ Էննէսլէյն անդրանիկութեան պատճառաւ ահազին ժառանգութիւն ստանալով՝ նոյն իսկ երիտասարդութիւնից թոյլ էր, հիւանդու, և այս պատճառաւ էլ աշխատից հեռու էր ապրում, բոլորովին սէր չու-

նենալով գէպի բաւականութիւններն ու փայլուն ժողովները. նա ահազին եկամուտներ ունենալով, աւելի խնայող էր քան ժատ: Սիր Թովմասը շատ լաւ զիտենալով իւր եղօր բնութիւնը, անօգուտ էր համարում նորանից օգնութիւն ինդրել բայց այնուամենայնիւ նա կարծում էր, որ Էննէսլէյ—Կառալում լաւ ընդունելութիւն կդանի:

Նա բոլորովին չախալուեց իւր հաշում: Եղբայրը ուրախանալով նորա գալստեան վերայ, զրկաբաց գուրս եկաւ նորա առաջ:

— Շնորհակալ եմ, շնորհակալ քեզանից Թովմաս, գոչեց Լորդ Էննէսլէյն, համբուրելով եղօրը: Որքան ձանձրացել էի միայնութիւնից, շատ լաւ ժամանակ եկար:

— Ինձ շատ հաճելի է ձեր խօսքերը, պատասխանեց սիր Թովմասը կեղծ փայփայանքով, այս խօսքերն ասելիս նայելով իւր եղօր նիշար դէմքի, ալեոր մազերի և ներս ընկած ու հիւանդութիւնից հանգած աչքերի վերայ: Սակայն ևս նկատում եմ, որ դու առողջանում ես, շատ ուրախ եմ գորա համար: Յոյս ունիմ, որ լեզի Էննէսլէյն էլ առողջ կ'լինի, իսկ իմ սիրելի եղօրորդիս՝ առողջ պատանի. այդպէս չէ:

— Ապասիր Թովմաս, սպասիր, ասաց Լորդ Էննէսլէյն: Ի՞նչպէս ես ասում թէ ես առողջանում եմ, մինչդեռ վաղուց մի ոտս գերեզմանումն է: Ոչ այժմ ինձ այլ ևս ոչ մի բժշկական միջոց չի օգնի, բժիշկները վաղուց ձեռն են վերցրել ինձանից: Նայիր իմ չորացած մարմնին, նիշար և դողդոչուն

ձեռներիս: Այո, Թովմաս, ես լիսկատար իրաւունք ունիմնախանձել քո ամուր կազմուածքիդ վերայ:

— Ե՛հ, բարեկամ, դու խիստ մեծացնում ես այդ աննշան տկարութիւնը, միսիթարում էր կեղծաւոր կարեկցութեամբ սիր Թովմասը իւր եղօրը: Այդ բոլոր կանցնեն աննդարար կերակրով ու քնքոյշ հոգացողութեամբ: Դու բոլորովին երջանիկ ես. ունիս որդի, բարեգործ ամուսին....

— Ի ուր Աստուծոյ, Թովմաս, ոչինչ մի ասի նուրա մասին, տենդային բարկութեամբ ասաց Լորդ Էննէլէյն: Դու գիտես, որ լեզի Էննէլէյն խիստ պրաղուած է և ժամանակ չունի իւր հիւանդ մարդուն խնամելու և ասպելու այս միայնութեան մէջ. ես արդէն վեց ամիս է չեմ տեսել նորան: Նա ապրում է Լոնդոն, բաւականութիւնների ու զուարձութիւնների մէջ, գնում է թատրոններ, խնջոյքներ, ժողովներ և շատ քիչ է մտածում իւր հիւանդ մարդու վերայ: Նորա վերայ որբան քիչ խօսենք, այնքան լաւ է:

— Խեղճ եղբայր, ասաց սիր Թովմասը համարեա արտասուելով. ես շատ ցաւում եմ այդ մասին: Բայց ինձ թւում է, որ բաւական է միայն զրես նորան և նա խիցն կշտապի կատարել քո ցանկութիւնը:

— Ուս ոչ, աւելի լաւ է նա Լոնդոն մնայ, ասաց Լորդ Էննէլէյն վշտացած: Գոնէ այնտեղեց չի կարող ինձ անհանգիստ անել և իւր գանգատներով չի վրդովի իմ հոգին: Նս սիրում եմ խաղաղութիւն, առանձնութիւն և մեր բարեկամական խօսակցութիւնը եղբայր, ինձ համար ամենամեծ զուարձութիւն կլինի:

— Շնորհակալ եմ քեզանից, բարեկամ, ասաց սիր Թովմասը. ես պատրաստ եմ ամեն բան զրհել միայն թէ վերադարձնէի քո առողջութիւնը: Բայց դու բաղադաւոր ես, դու գոնէ զաւակ ունիս, որ կարող է քեզ միսիթարութիւն պատճառել և քո առանձնութեան մէջ ամենալաւ զուարձութիւն լինել:

Լորդ Էննէլէյի շրժունքների վերայ դառն ժպիտ երեաց: Նա գլխով բացասական նշան տուաւ և ասաց:

— Ես շատ ուշ ուշ եմ տեսնում նորան: Նա շատ չար է և կամակոր: Նորա աղմուկը սաստիկ ներգործում է նեարդերիս վերայ. ես չեմ կարողանում աղմուկը տանել իսկ աղաս մի րոպէ հանգիստ չե կարող մնալ:

— Հմ. այդ լաւ բան չէ, եղբայր, ասաց սիր Թովմասը: Նա առաջ շատ հանգիստ ու հեղեխեայ էր, և որքան սիրում էի նորան: Զգիտեմ թէ ի՞նչ պատճառաւ նա էսպէս յանկարծ փոխուեցաւ:

— Դժուար բան չէ, որ նա ապականուի էլ պատասխանեց Լորդ Էննէլէյն: Նորա մասին ոչ ոք չի հոգում, ոչ ոք չի սովորցնում նորան, ոչ ոք չի կրթում: Նս այդ չեմ կարող անել վասն զի առողջութիւնս չի ներում գործ շինել: Խորթ մայրն էլ Լոնդոն է. թէպէտ և այստեղ էլ լինէր նա, այնու ամենայնիւ երեկը չէր հոգայ Արտօւրի մասին, որովհետեւ չի սիրում նորան: Երեկ ամսի ընթացքում Արտօւրը երեկ դաստիարակ ունեցաւ, բայց նոցանից ոչ մինը չկարողացաւ նորա հետ ապել. նա առաջնին ատրճանակով սպանեց, երկրորդին

Հրամայեց լիծը ձգել և երևակայիր, ծառաներից էլ երկու անպիտաններ գտնուեցան, որոնք կատարեցին տղայի կամքը: Պարզ բան է, որ ես իսկոյն դուրս արի նոցա: Երբորդ դաստիարակին, որը մի թեթև քննութեան ենթարկեց Արտուրին, սա վըէժն առնելու համար հրացանով զարկեց նորան, միայն բազգաւորաբար չգիպաւ: Այս տղայի վատ վարքի լուրը ամբողջ շրջակայքում տարածուեց և այստեղ արդէն ոչ մի դաստիարակ չի գալիս, թէպէտ և ես նոցա եռապատիկ վարձ եմ առաջարկում:

— Լաւ չէ, լաւ բան չէ, Զարլս, ի՞նչպէս եղաւ որ այդ տղայն այդպէս փշացաւ, ասաց սիր Թովմասը տխուր ձայնով ու կարեկցութիւն ցոյց տալով, թէպէտ և նորա հոգին ուրախութիւնից համարեա դուրս էր թռչում; որովհետեւ իւր եղօրորդու վարքը բոլորովին համապատասխանում էր իւր գաղափարի հետ. այժմ նա կարող էր յուսալ որ Լորդ Էննէսլէյն սերով կ'համաձայնէր իւր որդուն իրան յանձննելու:

— Այժմ ի՞նչ է շինում Արտուրը. ո՞ւմ հրաշութեան տակ է. ո՞վ է նորա մասին հոգս քաշում, հարցրեց սիր Թովմասը:

— Ո՛չ ոք: Նա ինչ ուզում է անում է. ամրոցումն ամենքը պիտի կատարեն իւրեանց ապագայ հրամանատարի կամքը: Նա դատարկաշրջեկ թափառում է ախոռները՝ ծառաների ու կառապանների հետ, այզիները՝ պարտիզապանների հետ և սարերն ու անտառները՝ որսորդների հետ: Երբէք ճիշտ չի կարելի ասել, թէ նա այս ինչ տեղ է գտնուում: Ար-

տուրի կամակորութիւնը սահման չունի. ոչինչ խրատ, ոչինչ յորդոր չեն ներգործում նորա սրտին, եթէ նոքա իւր կամքի լնղղէմ են լինում: Նո գորա գէմ ոչինչ չեմ կարող անել, իսկ ծառաները. — նոքա էլ Աստծուն փառք են տալիս, երբ Արտուրը նոցա հանգիստ է թողնում:

— Ասկայն պէտք է մտածել թէ այդ վարժումները ի՞նչ հետեանք կունենայ, ասաց սիր Թովմասը կեղծ հոգացող գէմքով: Ի հարկէ, եղայր, դու անտարբեր չես կարող նայել գորան. որդիդ առանց խիստ հսկողութեան մի չարագործ կ'գառնայ, որովհետեւ, եթէ քո բոլոր ասածները ճշմարիտ են, հազիւ թէ նա մի օրինաւոր բան գառնայ: Բայց ես էլի չեմ հաւատում այդ բոլորին, ոչ եղայր, դու իրաւ որ խիստ շատ ես մեծացնում քո որդու անկարգութիւնները:

— Որդ էննէսլէյն խորը հառաջեց:

— Ինքդ տես նորան, Թովմաս, երկու օր հետեւիր և կհամոզուես, որ իմ ասածներս աւելի քիչ եին, քան թէ շատ, պատասխանեց նա: Արդարեւ, եղայր, մեծ ծառայութիւն առած կլինիս ինձ, եթէ երեխիս մի փոքր հետեւ և մի փոքր խրատես նորան: Գուցէ Արտուրը ամենից աւելի քեզլախ, վասն զի նա զեռ փոքրութիւնից քեզլիշում է: Արտուրը շուտով կմտաբերի իւր բարի հօրեղայր Թովմասին, որը խաղում էր նորա հետ, և ընծայում էր նորան խաղալիքներ, քաղցրեղիններ ու ուրիշ մանրիկ ընծաներ: Միթէ չգիտես, բարեկամ, որ երեխաները միշտ գիտեն շնորհակալութիւն անել:

Սիր Թովմասի աչքերը փայլեցին գաղտնի ու բախութեամբ, եթէ իրաւ բանը այնպէս լինէր, ինչպէս պատմում էր իւր եղբայրը, այն ժամանակ նոյն իսկ իրան զօհին կարող էր գրաւել որը համակրելով իրան՝ եթէ Լորդ Էննէսլէյն չհամաձայնէր էլ իւր որդուն թողնելու, ինքն կիսնդրէր հօրից այդ բայց յայտնի բան է, որ սիր Թովմասը առ ժամանակ թափցնում էր իւր ներկայ մուադրութիւնը և ամենից առաջ խոստացաւ միայն գործ զննել իւր բոլոր ոյժերը Արտուրին ուղիղ ճանապարհի բերելու համար: Սորանից յետոյ շուտով թողեց նա իւր եղբօրը այն նպատակով, որ Արտուրին գտնի և նորոգի նորա հետ իւր ծանօթութիւնը:

— **Ամեն** բան, որքան կարելի է, լսւ է զնում, մըմնջաց սիր Թովմասը, դուրս գալով սենեկից ու մըտնելով նախասենեակը: Հանգամանքները կարծածից աւելի շատ են օգնում: Նթէ տղան արդարեւ այդպիսի մի անպիտան է, ինչպէս նկարագրեց ինձ Զարլոր, ուրեմն նոյն իսկ նորա համար օգտաւէտ կլինի մի երկու տարի խիստ հսկող ուսումնարան տալու: Ամրոցի դահլիճներից մէկի մէջ պատահեց նորան Լորդ Էննէսլէյի կալուածների կառավարիչը, որ յարգութեամբ ողջունեց իւր ակրօջ եղօրը:

— **Ահ,** իմ սիրելի ֆրանցիսկ, գոչեց սիր Թովմասը, հը, ի՞նչպէս ես, էլի զուարթ ու առոյգ ես, այնպէս չէ:

— **Փառք** Աստուծոյ, ձերդ ողորմածութիւն, չեմ կարող գանգատուել պատասխանից ալեղարդ Ֆրանցիսկը: Աստուծ իմ բարի ակրօջն էլ թող

այնպիսի առողջութիւն տար, ինչպէս ես եմ... բայց աւաղ. Ձերդ ողորմածութիւն, յիրաւի Միլը շատ փոխուեցաւ:

— **Եհ,** ես տեսայ նորան, բանն այնքան վատ չէ, որքան ձեզ թւում է, պատասխանեց սիր Թովմասը: Հաստատուն բնութիւնը հիւանդութեանը յաղթում է: Բայց ես Արտուրին եմ որոնում, ուր է նա:

— **Պէտք** է խոստովանուեմ, ձերդ ողորմածութիւն, որ Ճիշտ չգիտեմ, կարելի է ախոռումը լինի, կարելի հէնց անտառում կամ պարտիզումն է, խայցն կերթամ որոնելու:

Ոչ ոչ, մի աշխատիր, թող ինքս կերթամ, ընդհատեց սիր Թովմասը. նա առողջ է, այնպէս չէ:

— **Այո,** փառք Աստուծոյ, բոլորովին առողջ է, սիր Թովմաս:

— **Լ**աւ, իսկ ի՞նչպիսի մանուկ է, անպատճառ խոնարհ, հնազանդ ու կամակատար կլինի, ինչպէս առաջ, չէ... լուռում են Ֆրանցիսկ... ինչո՞ւ չես պատասխանում:

— **Ա-**խ... Աստուծած, խորը հառաշելով ասաց ծերուեկր... Գեհ, ձերդ ողորմածութիւն, ինքներդ տեսէք, թէ ի՞նչպիսի է նա:

— Բայց ինչո՞ւ ես տիրութեամբ պատասխանում: շարունակեց սիր Թովմասը: Զլինի՞ թէ երեխան իրաւ այնպէս փչացել է, ինչպէս եղբայր պատմեց: Ասա՛, բարեկամ, ինչ որ գիտես Արտուրի մասին. ուրեմն նա մի յայտնի անբարոյական է դարձել:

—Ախ, գեռ մի բան էլ աւելի, ձերդ ողորմածութիւն, նա կատարեալ չարագործ կդառնայ, ասաց Ֆրանցիսկը, ուրախանալով, որ իւր մտքումն ունեցած բոլոր բաները կարողանում է արտայայտել: Երեակայեցէք—նա իւր դաստիաբակներից մէկին ատրճանակով սպանեց, իսկ միւսին՝ լիճը ձգել տուեց. բոլոր ծառաներին անողորմ տանջում է և միայն զուարծութեան համար մտրակում է պարտիզապանի երեխայց, խոհարարին և բոլոր ծառաներին: ԱՌի Աստուած, ի՞նչ պիտի լինի մեր հալը, եթէ Աստուած մի արացէ.... մեր բարի օրդը աչքերը փակի: Այս, վաս օր կլնի մեզ համար, մատաղահաս պարոնը մեզ ուղղակի կարտաքսի ամրոցից: Հենց երեկ նա ծառայի երեսը չանկուց ու քիչ մնաց աչքն էլ հաներ, որովհետեւ նրա ձին այնպէս շուտ չէր թամքել, ինչպէս ուզում էր: Նա իսկ սատանայ է, սիր Թովմաս: Բայց նորան աւելի լաւ կճանաչէք, եթէ միքանի օր այստեղ մնաք:

—Կտեսնենք, կտեսնենք, բարեկամ, պատասխանեց սիր Թովմասը: Եթէ բոլոր նորա մասին լսածներս Շշմարիտ են, այն ժամանակ ես անպատճառ մի հնարք կ'գտնեմ նորան ուղղելու: Ես կարծում եմ ամենից լաւ այն կլնի, որ Արտուրին մի որեիցէ ուսումնարան տանք, ուր նորա հետ խիստ կ'վարուեն, սորա մասին կիսում եղբօրս հետ:

—ԱՌ, ձերդ ողորմածութիւն, եթէ այդ կատարէիք, շտապով գոչեց ծերուկը, Շշմարիտ որ բարերարութիւն արած կ'լինէիք թէ մեզ թէ Միլորդին և թէ

ամենից աւելի երեխային, որը ի հարկէ գեռ չե հասկանայ այդ:

—Տեսնենք, տեսնենք, աւելացրեց սիր Թովմասը և փաղաքշելով զլուխ տալով Ֆրանցիսկին՝ դուրս գնաց:

—Խսկապէս ինձ թւում է, թէ բարի գործ կանեմ, եթէ այս խեղճ մարդոց ազատեմ տղայի կամակորութիւնից ու խստութիւններից, մրմնջաց նա, ամրոցի հայաթից անցնելով ախոռը: Այս բանը շատ հեշտացնում է իմ գաղափարիս կատարումը, և խղճի խայթոցը թեթև կլնի.....

“Սա մոնելով ախոռը հարցրեց ախոռապետին Արտուրի մասին, բայց ոչ ոք հաստատ չկարողացաւ ասել թէ ո՞ւր է նա: Սիր Թովմասը անցաւ այգին և արդէն մօտեցաւ ջերմասեննեկին, երբ յանկարծ սուր ձայներ լսեց: Նա շտապեց և մտաւ այնտեղ: Այստեղ նորան մի այնպիսի տեսարան երեաց, որ կարող էր ճիշդ հասկացողութիւն տալ Արտուրի բնաւորութեան մասին. յատակի մարմարեայ սալաքարերի վերայ թափուած էին կոտրտած ծաղկէ գարշոններ, կտրտած ծաղկիններ ու տերեններ. այս բոլորը ներկայացնում էր խիստ բազմազան տեսարան: Այս առարկաների մէջ բղաւելով ու լալով կուչ էր գալիս ու թեքւում էր մի երեխայ, որին կատաղած ծեծում էր մեծ ու հաստ փայտով մի ուրիշ եօթնամեայ տղայ: Անբաղա զոհի ձեռներն ու երեսը արդէն արինուտ էին զարձել բայց չնայելով դորան զեռ ևս թունդ ծեծում էր անողորմ տիրօջ ձեռքի գաւաղանով:

—Այս ի՞նչ է. երեկ սիրելի եղբօր որդիս ու-

զում է մի փոքր զուարձանալ ասաց սիր Թովշմասը՝ մօտենալով խստ դահճին. յետոյ նա շուտով աւելի մօտեցաւ նորան և բռնչց. Արտուր, բարեկամ, դու արդէն բոլորովին մոռայիլ ես հօրեւայր Թովմասիդ:

Արտուրը թողեց մանկան ծենելուց, շուռ եկաւ և տեսաւ իւր ետեւ սիր Թովմասին: Վրայ ութեան աղաղակով թողեց նա իւր փայտը, վարեց հօրեղօր մօտ և սիսնց գրկել ու համբուրել նորան:

— Հօրեղըայր, սիրելի հօրեղըայր, ինչքան ուրախ եմ, որ դու դարձեալ եկար, գոչեց տղան քնքշութեամբ համբուրելով սիր Թովմասի դէմքն ու ձեռները: Ինչքան ձանձրանում էի առանց քեզ, գիտե՞ս, թէ որքան շուտ շուտ էի մտարերում քեզ և ցանկանում էի քեզ տեսնել: Դեհ, այժմ կուրախանանք ու կցնծանք: Դու դարձեալ այստեղ ես: Միասին կզբունենք, միասին կառքով ու ձիաներով կմանգանք: Ախ, իրաւ, պիտի ցոյց տամ քեզ իմ ձիս. նա գեղեցիկ է, սև ու սպիտակ բծերով: Հայրիկս անցեալ շաբաթ ընծայեց ինձ: Գնանք, շուտ գնանք ախոռը:

— Մեծ ուրախութեամբ, սիրելիս, փայփայելով ասաց սիր Թովմասը և քնքշութեամբ համբուրեց տղային, որպէս թէ շատ սիրում է նորան, այն ինչ նորա միտքը սև մտածմոնքներով լիքն էր:

— Փո բոլոր ցանկութիւնները կկատարուին, սիրելի Արտուր. մենք միասին կիսաղանք, կիսունք, կմանգանք ոտով ու ձիով, նոյնպէս ինչպէս և առաջ: Բայց առաջ պատմիր, թէ ի՞նչ էիր ուզում այս երեխայից:

— Ա՛ս, հօրեղըայր, երեակայիր—անխովի՛ Սամ, պատասխանեց Արտուրը չարութեամբ—նա համարձակեց ինձ հակառակիել երբ ես կամենում էի միքանի ծաղիկներ ու պատուղներ քաղել ասելով, որ այդեպանը արգելել է այդ: Բայց ես նորան ցոյց տուի, որ նա չե կարող ինձ ոչ ընդդիմանալ և ոչ էլ արգելել: Նթէ դու համարձակել ես գարձեալ հակառակիել ինձ, աւելացրեց նա, դառնալով գէպի մանուկը և բուռը ցոյց տալով նորան, այն ժամանակ այսպէս արժան չես պրճնիլ ինձանից—տեղն ու տեղը կ'սպանեմ քեզ:

Ինեղծ տղան վերկացաւ և արտասուելով կանդնեց ծաղիկ գարշոների կտորտանքների մէջ տեղը:

— Եատ վաս ես արել Սամ, ասաց սիր Թովմասը: Դու ի՞նչպէս համարձակեցար քո մատաղահաս պարոնիդ հակառակիել: Նթէ միւս անդամ էլ էղպիսի միքան արել ես, կարտաքսին քեզ: Իսկ այժմ այն հարուածները որպէս արգար պատիժ ընդունիր քեզ:

— Ա՛ս, ձերդ ողորմածութիւն, մրմնջաց երեխան լաց լինելով.... այգեպանը... պատուիրեց ինձ.... ոչ ոքի չժմողնել ծաղիկներ ու պատուղներ քաղելու....

— Եա ոչինչքան չե կարող քեզ հրամայել, նթէ մատաղահաս պարոնդ հրամայում է լոել խստութեամբ պատասխանեց սիր Թովմասը: Դու էլ ու նոյն իսկ այգեպանն էլ պիտի հնագանդէք Միատէր Արտուրի հրամաններին: Ուրիշն ըմոռանաս այս ուրիշ անդամ, սորա մասին այգեպանին էլ կասեմ: Գնա և ասած ըմոռանաս: Այժմ Արտուր, գնանք քո ձին ահմանեռու:

— Արելի, բարի հօրեղըայր, գոչեց Արտուր

ուրախացած, տեսնելով, որ հօրեղբայրը իւր կողմը պահեց: Դու աշխարհում ամենից լաւ հօրեղբայր ես, և ոչ ոք չի կարող համեմատուել քեզ հետ: Ամենքը բղաւում են վրէս, առնենքը մեղադրում են ինձ, ամենքը ինձ հակառակ են, միայն դու ես, որ մշտ արդարացնում ես ինձ: Եթէ միայն դու այստեղ մնայիր, մենք ցոյց կտայինք այս անպիտանին: Ի՞նչ խաղ կ'լինէր է:

—Ես շատ կ'ցանկայի, սիրելիս, կամքդ կատարել բայց գործերիս պատճառով միշտ չեմ կարող մնալ այստեղ, աւելացրեց սիր Թովմասը: Իսկ եթէ դու ինձ մօտ գայիր—որքան լաւ կլինէր:

—Ա'գամ քեզ մօտ, անպատճառ կ'գամ, գոչեց տղան, ուրախ ուրախ խիելով ձիուն: Բայց դու ել ունին սորա նման ձիաներ: Ունիս դու կառքեր, ջերմասենեակներ, փոքրիկ թուանքներ, ատրճանակներ: Եւ կարող ե՞նք այնտեղ որսի գնալ ու թռչուններ որսալ:

—Բոլորը, այդ բոլորը և դեռ աւելի ել կը գտնես դու ինձ մօտ, փաղաքշելով պատասխանեց սիր Թովմասը: Բայց դորա մասին մտածել անգամ պէտք չէ. Հայրդ երբէք չի համաձայնի, որ նորան թողնես ու ինձ հետ գաս: Արդարեւ ցաւալի է. մենք միասին շատ լաւ կապրէինք: Անցեալներն ել երկու լաւ եղջերուններ առայ, որոց կարելի է փոքրիկ կառքի հետ լծել: Դու նոցանով ման կ'գայիր—նոքա թռչուններից արագ են գնում: Իսկ Հայրդ... է՛հ, վերջապէս այդ բանը դում չի գայ, ուստի և աշխատիր մոքիցդ հանել այն:

—Ի՞նչպէս թէ չէ, գոչեց Արտուրը: Ոչ, այդպէս չի լինի: Հայրըն. ի՞նչ ասել է հայր: Նա պիտի այն ուզել, ինչ որ ես եմ ուզում: Իսկ եթէ կհակառակի, այն ժամանակ չեմ էլ հարցնի նորան: Ես կզամ քեզ հետ, հօրեղբայր, վաղը կամ հէնց այսօր, և ոչ չի համարձակի ինձ բան ասել:

Սիր Թովմասը զգուելով ժպաց, տեսնելով, որ վոհը ինքն իրան է գնում գէպի ցանցը:

—Ինձ հաճելի է, շատ հաճելի է, որ դու կամենում ես ինձ այցելել ասաց նա: Բայց գիտեն, սիրելիս, ինչ ուզում է լինի, այնու ամենայնիւ առանց քո հօր թոյլտուութեան մենք ոչինչ չենք կարող անել: Բայց ինձ թող այդ թոյլտուութիւնը ստանալ: Ես նորա հետ կ'խօսեմ և յոյս ունիմ, որ կարող ենք նորան մեր կողմ ձգել:

—Եթէ նա չհամաձայնի էլ այդ ինձ համար միւնդյն է, ես անպատճառ կ'գամ քեզ հետ, կամակորութեամբ ասաց Արտուրը: Ես պիտի տեսնեմ քո եղջերունները և նոցա վերայ ման գամ: Նոքա գեղեցիկ ու մեծ եղջիւններ ունեն, չէ:

—Ունին ու այդպէս—խառակ հրաշք է—կը տեսնես էլի, պատասխանեց սիր Թովմասը և յետոյ սկսեց տղայի հետ զանազան բաների վերայ խօսել, որպէս զի նորան հակէ իւր կողմը: Նա այնպէս ձեւացրեց իւրեան, որպէս թէ հիանում է նորա ձիով, սակայն Արտուրին ասաց, որ իւր ախոռում աւելի լաւ ձիանել ունի, որոնք բոլորն էլ պատրաստ են նորան ծառայելու համար,—նա պատմեց նորան

մեծ մեծ անտառներում որսերի, ձկներ պրալու, և ուրիշ զանազան բաների մասին, շատ բաներ էլ պատահած ժամանակ սուտ ասելով։ Այս բոլորը այն աստիճան զարթեցրին Արտօւրի հետաքրքրութիւնը, որ նա ինքն առաջարկեց հօրեղօր մի որեխցէ սուտ բան ասել իւր հօրը, որպէս զի նորա համաձայնութիւնն առնի Էնելուց Կաստլց դուրս գնալու մասին։

— Ես հօրդ կասեմ, ասաց սիր Թովմասը, որ դու ուզում ես մի ուսումնարան մանել ժամանակին լուսաւորեալ մարդ դառնալու համար։ Նա սորա համար շատ կուրախանայ և քո գնալուդ մասին երբէք չի հակառակի։ Փոխանակ մի ձանձրացնող ու միակերպ ուսումնարան զնալու, մենք միասին կերթանք Լոռովէլ Կաստլ և դու այնտեղ կմնաս մինչեւ այն ժամանակ, մինչեւ որ կ'ձանձրանաս եղ ջերուներից, որսից, ձկներ որսալուց և ուրիշ բաւականութիւններից։ Խոչ ես ասում սորա մասին Արտուր։

— Ո՞հ, հօրեղբայր, ես ամեն բանի պատրաստ եմ, միայն թէ կարողանամ քեզ հետ գալ ասաց զիւրահաւան տղան։ Հօրս ինչ կամենաս ասա, ես ամեն բանի համաձայն եմ։ Այժմ սիր Թովմասը բոլորովին հասաւ իւր նպատակին։

Գլուխ երրորդ

Արտօւրը սթափուում է։

Այն օրը երեկոյեան սիր Թովմասը իւր եղբօր հետ նստած էր առանձնասենեկում։ Նորա խօսումը էին Արտօւրի մասին։

— Արդարեւ, ես չեմ հասկանում, եղբայր, ասաց սիր Թովմասը. ի՞նչպէս խիստ սխալում ես դու որդուդ վերաբերութեամբ։ Նա մի բարի, պարզամիտ, հնազանդ տղայ է, որ միայն անկիրթ է։ Այստեղ, ի հարկէ, ուր նորան նայում են ինչպէս ապագայ տիրօջ և այդ պատճառով նորա բոլոր ցանկութիւնները կատարում են, ամեն յանցանքները ներւում են՝ այստեղ նա երբէք լաւ մարդ չի գառնայ։ Ինչ ուրեմն դու նորան ուսումնարան չես տալիս։ Այնտեղ նա օգտակար պարագնունքներ կ'գտնէր, իւր նմանների հետ յարաբերութիւն կունենար և մինչեւ անգամ խաղալով էլ կզարդանար ու կստանար անհրաժեշտ զիտութիւններ։ Հարկաւոր է միայն հիմքը ձգել, իսկ երեխան այնտեղ ինքն իրան կզգայ իւր օգուտը և ինքն իրան կաշխատի ուսանել։

— Այդ բոլորը ճշմարիտ է, պատասխանեց Լորդ Էնելուցն։ — միայն ցաւալի է, որ Արտօւրը երբէք չի համաձայնի մի այդպիսի ուսումնարան գնալու, թէպէտ այդ նորա համար շատ օգտակատ լինէր և մեզ համար էլ խիստ հաճելի։ Չինի՞ թէ դու կարծում ես, որ ես այդպիսի խորհուրդներ չեմ տալիս

նորան: 'Ե զուր, --նա լսել անգամ չի կամենում:

—Դու անպատճառ այնպէս չես սկսել ինչպէս հարկն է, եղբայր, ասաց սիր Թովմասը: Ես այսօր դորա մասին խօսեցի Արտուրի հետ. նա արդարեն սկզբում չէր համոզվում, իսկ եթե ես հասկացրի նորան ուսման բոլոր օգուտները, նա ասաց, որ պատրաստ է փորձի համար գնալ ուսումնարան:

—Չեմ կարծում, գոչեց Լորդ Էննէսլէյն հիացած: Դու խոտակ կախարդ ես, Թովմաս:

—Իրան Արտուրին հարցրու, եղբայր, պատասխանեց սիր Թովմասը հանդարտութեամբ: Նա քեզ կասի, որ ամեն բովէ պատրաստ է քո կամքին հնազանդելու:

—Դա կատարեալ հրաշք կլինէր և ինձ շատ կուրախացնէր. ասաց Լորդ Էննէսլէյն: Եւ դու, եղբայր, կհամաձայնեն հոգալ նորան մի ուսումնարան տալու:

—Ես այդ իւրաքանչեւր բարի եղբօր պարտականութիւն եմ համարում, մանաւանդ որ հիւմնդութիւնը քեզ արգելում է տանից դուրս գալ պատասխանեց սիր Թովմասը:

—Շատ կ'պարտաւորես ինձ, եղբայր, ասաց Լորդ Էննէսլէյն, բարեկամաբար սզմելով սիր Թովմասի ձեռքը: Դու չ'գիտե՞ս մի որ և իցէ ամեն կողմից լաւ ուսումնարան:

—Ամենից լաւ է Արտուրին միստեր Բրովի գիշերօթիկ վարժարանը տալ Բրադֆորդում. — ես այդ ուսումնարանին եմ հաւատում: Ճշմարիտ է, Բրադֆորդից շատ հեռու է Էննէսլէյնաստը, բայց իմ

կալուածքին մօտիկ է: Ես Արտուրին իմ յատուկ հովանաւորութեան տակ կ'վերցնեմ:

—Դու շատ բարի ես, Թովմաս, ասաց Լորդ Էննէսլէյն: Սակայն ես դեռ էլի չեմ հաւատում, թէ իմ որդիս համաձայնի ուսումնարան գնալու: Նա այնքան կամապաշտ, թեթեամիտ ու փոփոխամիտ է, որ այսօր մի բան է ասում, վաղը մի ուրիշ:

—Դեհ, կտեսնենք, ասաց սիր Թովմասը հաստատութեամբ: Վաղը առաւօտ Արտուրին քեզ մօտ կանչեր և իրան հարցրու: Ես էլ իմ կողմից չեմ կասկածում, որ նա քեզ մօտ նցնը կ'կրկնի, ինչ որ այսօր ինձ ասաց, իսկ այժմ բարի գիշեր ձեզ, եղբայր, և քաղցր քուն: Արդէն բաւական ուշ է, ես էլ ձանապարհից դեռ էլի մի փոքր դադրած եմ:

—Քեզ լցո բարի, Թովմաս, քեզ լցո բարի, պատասխանեց Լորդ Էննէսլէյն: Եթէ ես այսօր լաւ կքնեմ, դորա համար ես յատկապէս պարտական եմ քո տուած բարի տեղեկութեան Արտուրի մասին: Եթէ մեր յոյսերը կատարուեցան, պարտական չեմ մնայ քեզ մօտ. բարի գիշեր քեզ, եղբայր:

Եղբայրները սղմեցին միմեանց ձեռները և սիր Թովմասը գնաց իւր համար պատրաստած սենեակը, ուր նորան արդէն սպասում էր Ժանը:

—Ամեն բան կարելի եղածին չափ լաւ է գընում, ասաց սիր Թովմասը: Արտուրը կուրօրէն գնում է գէպի մեր կազմած ցանցը, իսկ եղբայրս էլ ասում է, թէ շատ և շատ պարտաւոր կ'լինի ինձ: Վաղը կաւարտենք գործը, Ժան: Դիժ երեխան կեանքի ուսումնարան կ'մտնի: Ուրիշ ոչինչ նոր բան չեն լսել:

— Ուրիշ ոչենց, բայց նորանից, որ մատակարահաս միստեր Արտուրը զուարձութեամբ պատմումէր ամենին, թէ դումէ հօրեղօր հեա: Ամբողջ ծառաները, կառավարչեց սկսած մինչև ամենայետին խոհարարք՝ ուրախ են, որ աղաստում են վերջապէս այն փոքրիկ հոգէհանից:

— Հը, նա այլ եւս իւր ամբողջ կեանքումը չեղարող չարշարել նոցա, ասաց սիր Թովմասը: Ճշմարիտ որ մենք բարեգործութիւն ենք, անում, ժան, խելք մարդկանց աղատելով այս անպիտանի ձեռքից: Նթէ նա այստեղ մնայ, կատարեալ բռնսուոր կդառնայ շրջապատողների համար: Ուստի և նորան անմնաս պիտի գարձնենք: Գիշերուայ հագուստս տուր, ժան: Ես քնում եմ և յոյս ունիմ; որ լաւ կ'քնեմ, որովհետեւ այս օրուայ խնդիրս ոլքան կարելի էր լաւ կատարեցի:

Անեկապեար իւրեան յատուկ ճարտարութեամբ կատարեց իւր պարտաւորութիւնը և սիր Թովմասը զուարձութեամբ քնեց փափուկ անկողնի մէջ: Փանը ոտների պճեղների վրայով սենեկից դուրս գնաց: Նորա տէրը մի քանի ըրպէից արդէն այնպէս քաղցր ու խորը քնեց, որ կարծես ճշմարիտ մի բարի գործ գործած լինէր:

Միւս առաւօտ, երբ սիր Թովմասը կօրդ Էննէսլէյի հետ նախաճաշում էր, վերջնոր զանգահարեց և եկող ծառային պատուիրեց Արտուրին կանչել:

— Դեհ, այժմ կտեսնենք, եղայր, թէ մինչև որ աստիճան կարդարանան երեկուայ յոյսերդ, ա-

սաց կօրդ էննէսլէյն: Վախում եմ, թէ իսկատ խաչ բուած լինենք մեր հաշիւներում:

— Ոչ Զարլս, մոտածել անգամ հարկաւոր չէ այդպիսի մի բան: Ես միայն ցաւում եմ, որ այսպէս շուտով պիտի տանեմ Արտուրին. ամենահարկաւոր գործերս ստիպում են ինձ այսօր և եթ վերադառնալ կօւպէլ Կատու: Ես կցանկայի մինչև ճաշը դուրս գնալ, որ երեկոյեան տանը լինէի:

— Ուրքան վաղը այնքան լաւ է, պատասխանեց կօրդ էննէսլէյն, միայն եթէ Արտուրը կդայ քեզ հետ. իսկ եթէ նա չի գալ, իսկատ ցաւալի է ինձ այգակս շուտ բաժանուել քեզանից: Բայց երեխաս շատ թեթևամիտ ու գիւրահաւան. այսօր մի բան է ուզում, վաղը մի ուրիշ. սորա համար էլ, եթէ կտեսնենք, որ նա հաստատ է իւր խօսքին, մենք չպիտի ուշացնենք, ընդհակառակն պիտի շտապեցնենք նորա մտադրութիւնը կատարելու, որպէս զեժամանակ չտանք նորան իւր այդ միաքը փոխելու: Բայց ահա և նա գալիս է, — սուս — բան մի՛ խօսիր:

Լօրդ Էննէսլէյն չսխալուեց: Մի բոպէից յետոյ Արտուրը ուրախութիւնից փայլուն գէմքով մտաւ սենեակը և իսկոյն վաղեց հօրեղօր մօտ, որը գըրեկց նորան և համբուրեց: Երեխան համարեա ոչինչ ուշադրութիւն չ'դարձեց հօր վերայ, մինչև անգամ մօտ չգնաց նորան և միայն շտապով տասց. գրարի լոյսա:

— Դեհ, հօրեղը այր, հարցրեց Արտուրը, երբ ենք դուրս գնում: Ես ամեն բոպէ պատրաստ եմ քեզ հետևելու, որովհետեւ ես իսկատ ձանձրացած եմ տանը

նստելուց։ Հայրիկ, դու էլ չեմ կարծում թէ արգելես
ինձ հօրեղբօրս հետ գնալու։

— Ընդհակառակն, սիրելիս, ես շատ ուրախ եմ,
որ փոխուել ես ու բարի դիմաւորութիւն ես ընդու-
նել—յոյս ունիմ, որ դա քեզ համար ամենալաւ հե-
տեանք կունենայ, պատասխանեց Լորդ Էննէսլէյն։
Ուրեմն դու ուզում ես էլի հօրեղբօրդ հետ գնալ
ու մի ուսումնարան մանել ու լաւ սովորել, որ ժա-
մանակին լուսաւորեալ մարդ դառնաս։

— Այս, հայրիկ, ես ուրախութեամբ կ'կատա-
րեմ ամեն բան, ինչ միայն հօրեղբայրս կ'պահանջի,
պատասխանեց երեխան։

— Ուրեմն Աստուած օրհնի քեզ ասաց Լորդ Էն-
նէսլէյն։ Գնա և լաւ բաներ սովորիր. երբ իմ առող-
ջութիւնս կներէ, անպատճառ կգամ քեզ տեսնելու։
Իսկ քեզ համար, եղբայր, բառ չեմ դանում շնոր-
հակալութիւն անելու։ Երբ դու վերջին անգամ ինձ
մօտ էիր, կարծեմ հաւանեցիր իմ քառաձի կառքս,
ինչպեմ ընդունես այն, ինչպէս մի նշան իմ երախ-
տագիտութեան։

— Շնորհակալեմ, շատ շնորհակալ եմ, եղբայր,
պատասխանեց սիր Թովմասը կեղծ խոնարհութեամբ։
Զէ՞ որ ինձ համար ամենամեծ բաւականութիւն է
քեզ մի փոքր ծառայութիւն մատուցանելը։ Ես այս-
պէս եմ կարծում, որ իւրաքանչիւր բարի հօրեղ-
բայր պարտական է հոգալ իւր եղբօրորդու կրթու-
թեան համար։ Բայց ես արդէն ասացի, որ ժամա-
նակը թանգ է, ուստի գնալու ժամանակ է արդէն։

— Մի ժամից յետոյ, դորանից առաջ չես կարող

գնալ ասաց Լորդ Էննէսլէյն։ Ներունի Փրանցիսկու-
կարգի կ'ձգի Արտուրի շորերը, իսկ դու էլ որդիս,
գնա ու ասա, որ Ճանապարհի նախաձաշիկ պատ-
րաստեն ձեզ համար։

— Այս բովելիս, պատասխանեց մանուկը, ես Փրան-
ցիսկին կ'ստիպեմ, որ մի ժամուայ մէջ ամեն բան պատ-
րաստի։ Ուրքան մենք այստեղից վաղ գնանք, այն-
քան ինձ հաճելի կ'լինի։

— Այս ասելով Արտուրը սենեկից դուրս վազեց։

— Ուրդուս սէրը մեծ չէ զէպի ինձ, խորը հա-
ռաչելով տասց Լորդ Էննէսլէյն։ Նորա համար բոլո-
րովին նշանակութիւն չունի հօրից բաժանուիլը,
որին գուցէ երբէք չի էլ տեսնի։ Երեխաս գեռ ու-
րախանում էլ է գորա համար։

— Դու էլ խիստ մեծ բանի տեղ ես գնում այդ,
Չարլս, ասաց սիր Թովմասը, հանդարտեցնելով եղ-
բօրը։ Երեխայք միշտ այդպէս են լինում. նոքա ցան-
կանում են ծնօղներին թողնել քանի որ նոցա մօտ
են։ Ամեն մի նոր բան նոցա զուարձացնում է։ Երբ
Արտուրը մի երկու տարի օտարների մէջ կապի,
երբ կմէծանայ, այն ժամանակ անպատճառ կ'փոխուի
ու կ'գնահատի հօր քնքոյշ հոգացողութիւնները։
Հաւասացիր, որ այսպէս կլինի։

— Երկու տարի. — բայց երկու աարուց յետոյ
ես ուր կլինեմ, պատասխանեց Լորդ Էննէսլէյն մտա-
ծելով։ Ես կարծում եմ, որ իմ մահուան ժամը ար-
դէն հեռու չէ։ Խոստացիր, եղբայր, անհոգ չթող-
նել այն ժամանակ իմ խեղջ ու որբ մանկան։

— Ա՛յս, թող այդ տխուր մտածմանքները, բա-

րեկամ, ասաց սիր Թովմասը ծիծաղելով: Դու դեռ
շատ կապրիս ու երջանիկ: Իսկ Աստուած միայն գի-
տէ, թէ ինչ կարող է պատահէլ: Եթէ Արտուրը
արդարեւ մի կարօտութիւն կունենայ, ես միշտ կհո-
գամ նորա մասին այնպէս, ինչպէս իմ հարազատ
որդուս վերայ: Այդ կողմից բոլորովին հանդիստ կա-
րող ես լինել, եղքայր:

— Ենորհակալ եմ քեզանից, եղքայր, դու ինձ
միսիթարեցիր, ասաց Լորդ Էնդէլէյն, որի աչքե-
րում երեացին արտասուքի կաթիլնիր: Կիսս, ինչ-
պէս քեզ յայտնի է, Արտուրին չէ սիրում, ուրեմն
ում պիտի նա սիրէ, եթէ ոչ քեզ, իւր ամենամօ-
տիկ ազգականին: Ենորհակալ եմ այդ խոսամանդ
համար, եղքայր.—իրաւ, դիտես արդեօք, թէ տա-
րեկան որքան պիտի վճարել Միստեր Բրոֆին դիշե-
րօթիկ վարժարանին:

— Բարոլովին Շիշտ չգիտեմ, ասաց սիր Թովմասը;
Սի քիչ թանգ կլինի, է՛տ, դու հօ հարուստ ես, քեզ
չի պատկանի դորա մասին մոտածել:

— Ե հարկէ, եղքայր, չի պատկանի, մինչև ան-
գամ եթէ տարեկան հազար ֆունդ ստերլինգ նստէր
ինձ վերայ—ես պատրաստ եմ ինչքան հարկաւորէ
վճարել, միայն թէ իմ որդիս լաւ կրթութիւն
ստանար: Որքան դրամ կամենաս կտամ ու յետոյ
կհաշուենք:

Սիր Թովմասը գաղտնի ուրախութեամբ լսեց
այս խօսքերը—նա յցս ունէր երկու կամերէք ֆունտ
ստերլինգ իւր համար հանկէլ այնաեղից: Նուազ
երեաց Արտուրը և ասաց, որ բոլորովին պատրաստ

է հանապալ հ ընկնելու համար: Սիր Թովմասը
վերկացաւ մնաս բարեաւ ասելու եղբօրը:

— Յահութիւն, Զարլս, ասաց նա: Արտուրի մասին
շուտ տեղեկութիւն կ'ստանաս, ես ամեն շաբաթ
կ'գրեմ քեզ նորա յառաջադիմութեան մասին ուսման
մէջ և առաջին պատեհութեան՝ ինքս կպամ այսուել:
Առ այժմ ցահութիւն:

Լօրդ Կննէսլէյն վաղաքշելով սեղմեց եղբօր
ձեռքը, կրկին շնորհակալութիւն արաւ և գարձաւ
դէպի երեխան:

— Աստուած պահի քեզ, որդիս, ասաց նա,
արի և համբուրիր ինձ:

Արտուրը հնապանդուեց, բայց զգալի անտար-
բերութեամբ մօտեցաւ հօրը, շապով համբուրեց
նորա դժգոյն ու նիհար այսը և հազիւ արտասա-
նելով ցցահութիւն խօսքը, վաղեց հօրեղբօր մօտ:

— Շուտ, հօրեղբայր, շուտ, ասաց նա, ձիա-
ները մեղ են սպասում: Այս ասելով նա սկսեց սիր
Թովմասին գոների կողմը քարշել:

Վ երջնը միանգամ էլ սպիտեց եղբօր ձեռքը,
միանգամ էլ խոստացաւ ամենակարծ միջոցում գալ
նորա մօտ և գուրս գնաց սենեկից:

Լօրդ Կննէսլէյն տիկրութեամբ նայում էր նո-
րա ետեկից: Դուռը փակուեց և Արտուրը մշտապէս
բաժանուեց այն մարգուց, որը միայնակ սիրում էր
նորան անկեղծութեամբ: Նա ուրախ ուրախ վեր
թռաւ կառքի մէջ և ուրախ ուրախ գուրս գնաց
տան գոներից, ուր նա ծնուել էր և ուր սիրում էին
նորան և անհոգութեամբ դիմեց դէպի նոր աշխարհ:

Եթէ նա գուշակէր, թէ իրան ինչ է սպասում, զարհուրելով ու զզուանքով գուրս կ'պրծնէր իւր հօրեղօր ձեռքից, որին ամենալաւ բարեկամէր համարում իրան և որը իրօք նորա ամենաչար թշնամին էր: Բայց հօրեղայրը դեռ ևս փոյփայում էր նորան, դեռ ևս աշխատում էր նորան հաճոյանալ որովհետեւ վախենում էր իւրեանից դիմակը վերցնել քանի որ իւր շահասիրութեան զոհը դեռ բոլորովին իւր իշխանութեան տակ չէր: Նա դեռ այնպէս քընքշութեամբ էր վարում նորա հետ, ինչպէս անում էր Եննէսլէյ—Կաստլումը, մինչեւ որ մտաւ Արտօւրի հետ իւր հին ու մոայլ ամրոցի դռնից. մանուկը երբ տեսաւ նորա մութ ու զարհուրելի խոռոչները սարսուռ անցաւ ամբողջ մարմնով: Նա կարծես նախագուշակեց այն ամենը, ինչ որ նորան պատահելու էր այս ամրոցում:

—Դու այստեղ ես բնակւում, հօրեղայր, հարցրեց նա, զուրս զալով կառքից, որ կանգնած էր մի նեղ, ցեխոս ու հին շնութիւններով շրջապատած տան գւան մօտ:—Ես քո ամրոցը սորանից շատ ու շատ գեղեցիկ էի երեակայում ինձ: Մեզ մօտ են նէսլէյ—Կաստլում աւելի լաւ է ու դուրեկան:

—Ապասիր, սպասիր, այստեղ հաճոյ կթուայ քեզ սիրելիս, պատասխանեց սիր Թովմասը, Առը քսելով տղայի թշին: Քարձրանանք սենեակը, այնտեղ գեղեցիկ տեսարան կներկայանայ քեզ:

Նա բռնեց երեխայի ձեռքից և մի նեղ քարէ սանդղառվարաւ նորան իւր սենեակը: Արտօւրը յաղթեց իւր անհաճոյ տպաւորութեան, որ ընդունել

էր Լօռւլիլ—Կաստլի տեսնելով: Հօրեղօր սենեակը նորան հայաթից շատ ու շատ լաւ դուր եկաւ: Նա նայեց պատից կախած պատկերներին ու գեղեցիկ գէնքերին, պատուհանից դուրս նայեց, որտեղից եւրեաց պարտիզի ու դաշտի չքնաղ պատկերը: Բայց Արտօւրը սոցանում միայն բոպէական զուարձութիւն գտաւ: Այդ միջոցին սիր Թովմասը ցածր մի քանի խօսք ասաց իւր սենեկապետին: Երբ նա հեռացաւ հօրեղայրը մօտեցաւ իւր եղօրորդուն ու հարցրեց նորան քաղցր ձայնով:

—Նը, սիրելիս, քեզ ի՞նչպէս է դուր գալիս այս տեղերը:

—Եհ, վատ չէ, գոռոզութեամբ պատասխանեց մանուկը. իսկ մեզ մօտ Եննէսլէյ—Կաստլի մէջ աւելի լաւ է: Զեմ կարծում թէ ես այստեղ երկար մնամ, ես իսկըն կերթայի տուն, եթէ այստեղ չլին գեղեցիկ եղջերուներ, որոց մասին դու ինձ հետ արդէն խօսել ես: Իսկ ուր են նոքա: Գնանք, գնանք նոցա մօտ, հօրեղայր, ցոյց առւր եղջերուները:

—Դեհ, մի փոքր սպասիլ, թող մի քիչ հանգստանամ ձանապարհից, պատասխանեց սիր Թովմասը: Ամեն բան կտեսնես: Ժանը իսկոյն նեղքեցնաց, որպէս զի պատուիրի, որ լծեն եղջերուները: Մի քանի բոպէից յետոյ ամեն բան պատրաստ կը լինի...

—Բայց ես էլ չեմ ուզում սպասել, ընդհատեց մանուկը նորա խօսքելն ու բարկութեամբ ուզ այնպէս սաստիկ զարկեց գետնին, որ ապակիները շար-

ժուեցին: Այս բոպէիս եղջերուների մօտ տար ինձ,
չէ որ ինձ խոստացար, որ կցոյց տաս եղջերուները:

Սիր Թովմասը նորա վերայ այնպիսի հայեացք
ձգեց, որ նա վախեցաւ և քիչ էր մնում վայր լնկ-
նէր գետին:

— Զէ, դու այլ ևս բարի հօրեղայր Թովմասը
չես, զու վաս մարդ ես, աղաղակից մանուկը: Թող
ինձ, ես մի բոպէ էլ չեմ մնայ այստեղ, տար ինձ
տուն հօրս մօտ: Ես ուզում եմ կննեսէյ—Կասալ
գնալ:

Յիմար Արտօնւր, մի բոպէ էլ սպասիր, քաղցրու-
թեամբ ասաց սիր Թովմասը, ոլր ցաւում էր, որ մո-
ռացաւ իրան: Ժանը իսկոյն կվերադառնայ ու յետոյ
կերթանք ափոռը եղջերուների ու ձիաների մօտ...,
Ահա ժաննէլ գալիս է, աւելացրեց նա:

Արդարե այդ բոպէին սենեկի շեմքում երեաց սե-
նեկապեար: Սիր Թովմասը երկար նայեց նորա վե-
րայ և ժանը զլուխ տուեց նորան:

— Այժմ գնանք սիրելիս, ասաց հօրեղայրը իւր
եղքօրորդուն, դու շատ բաւական կմնաս...

Արտուրը մոռացաւ իւր բոպէական բորբոքումը
և ուրախ ուրախ գնաց սիր Թովմասի ետևից:

— Առաջ գնա, ասաց նա իւր սենեկապեատին:

Երեքը միայն դուրս գնացին սենեկից, անցան
նեղ ու մութ նախասենեկով և ցիսոտ սանդղառվ
ներքեւ: Կիսաւեր սանդղառից, որի վերայ զեռ ևս
թափուած էին նորանից քանդուած քարերի կտորներ,
կարելի էր իմանալ որ այն սանդղառով շատ ուշ ուշ

են մանգալիս, կամ որ գոնէ գորա վերայ բաւական
ժամանակ է ինչ ոչ չէ անց ու դարձ արել:

— Ի՞նչ անպիտան ամրոց ունիս, հօրեղայր,
ասաց Արտուրը իջնելով սանդղառից: Այստեղի օդը
խոնաւ է, ես խիստ մրտում եմ:

— սկզին հայաթը գուրս կերթանք, սիրելիս,
պատասխանեց սիր Թովմասը հանգստացնելով նո-
րան:

“Եոքա սանդղառից իջնելով, անցան բաւական
մեծ հրապարակ: Ժանը բաց արեց մի ցածր գուռ,
որը ասնում էր դէպի մի դատարկ ու մութ սենեկակ:
Այս սենեկալ համարեա բոլորովին մութն էր, լոյս
մտնում էր միայն երկու մանր լուսանցոյց պատու-
հաններից, որոնք զետեղուած էին պատերի վերին
մանում: Այս պատերը այնչափ խոնաւ էին, որ տեղ
տեղ սկսուել էր մամռով ծածկուել: Արտուրի ամբողջ
մարմնով սարսուռ անցաւ, երբ ժանը հրաւիրեց նո-
րան մտնել այն զգուելի սենեկակը:

— Զեմ մտնի, բոլորովին չեմ մտնի, գոչեց նա:
Ես կամենում եմ եղջերուների մօտ գնալ: Դու ի՞նչ-
պէս ես համարձակում ինձ այստեղ ներս տանել.
Գարշելի, չար հօրեղայր, չեմ մտնի այստեղ:

— Ժամանակն է արդէն կատակերգութեանը վերջ
տալ, ասաց այժմ սիր Թովմասը, բոլորովին փոխուած
ու այնպիսի ահալի ձայնով, որ Արտուրը դողաց և
զարհուրելով նայեց նորա վերայ: Նա տեսաւ կնճիռ-
ներով ծածկած ձակատ ու վայրենաբար փայլող տչ-
քեր, որոնք զարհուրելի կերպիւ նայում էին իւրեանց
զոհի վերայ:— Բանտումն ես, բանտում, այ տղայ,

գոչեց սիր թովմասը: Կատակերգութիւնը վերջացած է և դու շուտով կիմանաս, թէ քեզ այստեղ ի՞նչ է սպասում:—Արտուրը երկիւղեց ու զարհուրանքից աղաղակեց:

—Չեմ գնալ չեմ ուզում մտնել բոլորովին չեմ գնալ, գոչեց նա: Դու իմ հօրեղբայրը չես, այլ մի չար մարդ: Ել մի լոպէ անգամ չեմ մնայ այստեղ: Հօրս մօտ եմ գնում, եննէսլէյ կաստլ...

Այս ասելով նա շատ աշխատեց հօրեղբօր ձեռքից դուրս պրճնելու: Բայց սիր թովմասը օձիքից բռնեց և այնպէս ուժգնութեամբ դռնիցը ներս զցեց սենեակը, որ խեղծ երեխան թռաւ դիմացի պատի մօտ և համարեայ անզգայ ընկաւ գետին: Նա մեծ դժուարութեամբ նորից վերկացաւ ու փորձեց փախչելով ազատուել: Բայց այդ փորձն էլ անյաջող անցաւ. Սիր թովմասն ու Փանը միասին բռնեցին նորա ձեռներն ու նորից ձգեցին բանտի մէջ: Սենեկապեար ամրոցի դուռը ներսից փակեց կողպէքով և Արտուրն այժմ իմացաւ, որ ինքը գերի է և բռլորովին ենթարկուած իւր անկարեկից հօրեղբօր իշխանութեան: Նա նեղութիւնից ընկաւ պատի մօտ զրուած փայտէ աթոռի վերայ, լաց եղաւ, բղաւեց, ձեռները կոտրեց, բարկութիւնից ու յուսահատութիւնից բարձր գոռաց, մինչև որ հօրեղբօր ձեռքի սաստիկ հարուածը նորից վախեցրեց նորան:

—Այժմ լոիր, անպիտան, հրամայական ձայնով գոչեց սիր թովմասը: Գոռալդ երբէք չե օդնի քեզ, որովհետեւ այս պատերից դուրս ոչ չե լսի ձայնդ: Այն միայն կասեմ քեզ, թէ ինչ է քո գալիքը: Դու

այս տնակից մինչեւ այն ժամանակ չես դուրս գալ, մինչեւ որ բոլորովին խոնարհ ու հնազանդ կ'գառնաս, և կ'խոստանաս ամեն բանում կատարել իմ կամքը: Հօրդ էլ երբէք չես տեսնի և երբէք էլ չես վերադառնալ եննէսլէյ կասալ ամրոցը: Այս օրուանից անունդ չէ թէ Արտուր եննէսլէյ է, այլ Զօն Սմիտ, և վայ քո հալին, եթէ երբ և իցէ կեանքումդ կյիշես, թէ դու եննէսլէյների ցեղեց ես: Երեք օր մտածելու ժամանակ եմ տալի քեզ—աշխատիր լաւ սովորես նոր անունդ: Առ այժմ ցաեսաւթիւն:

Սիր թովմասն ու ժանը դուրս եկան բանտից և ծանր դուռը փակուեց: Արտուրը անզգայացած նատեց աթոռի վերայ և երկար ժամանակ չէր կարողանում ուշքի գալ այն հարուածից, որ այնպէս անսպասելի կերպով ու ճարտարութեամբ պատրաստել էր հօրեղբայրը նորա համար:

Գլուխ ջՈՐՋՈՐԴ

Խորին մժութիւն:

Երկու ժամ անցաւ, մինչեւ որ Արտուրը կարողացաւ մի փոքր ուշքի գալ: Նորա վիճակը այնպէս շուտով ու յանկարծ փոխուեցաւ, որ ամենահեռատիս ու ամենախելօք մարդն անգամ կ'ուշաթափուեր: Դեռ մի քանի ժամ առաջ նա իւր հօր տանը բացարձակ հրամանատար էր, ամենքը առանց հակառակիլու շտապում էին կատարել նորա հաճոյքը.

—իսկ այժմ... Այժմ նա անօգնական է, ամենքից թողնուած, ստոր գերի, խարռւած իւր ամենամօտիկ ազգականից, զուցէ միակ մարդոց, որին սիրում էր և որին լիապէս հաւատ էր ընծայում: Եւ ի՞նչպէս կեղտոտութեամբ էր խաբու ած նա: Բոլը կարեկցութիւնը, բոլոր փայփայանքները, որ նա առաջութեամբ գործէր դնում նոցա մօա, ոչ այլ ինչէն, եթէ ոչ նենգութիւն, այն բոլորը կեղառա դաւաճանութիւն էր, բոլորը անում էր միայն նորա համար, որպէս չի խէր որդում իւր հօր գրկից և ինչպէս հաւատական է կորցնէր նորան: Արտուրը տարակուածց, նա զեռ չէր կարողանում հասկանալ թէ ի՞նչն է սովորում իւր հօրելորը իւրեան հետ այդպէս ամարդի վարուելու: Նա բոլորովին թուլացաւ ու ոչ մի կերպ չէր կարողանում ուշքի գալ:

Վերջապէս նորա սիրոր թեթևացաւ արտասուքի յորդ վտակով: Արտուրը իւր ամբողջ կեանքում զեռ այնպէս դառնութեամբ չէր լաց եղել: Նա ճշում էր, հառաջում էր, գոռում էր, վազվում էր բանտի մէջ այն թռչնի նման, որը երկիւղից թռչ կոտում է իւր վանդակում և զուրս զնլու ճանապարհ է որոնում: Նա բռնցքով զարկում էր փակած զռան, փորձում էր այն կոտրել ոտների սասարկ հարուածներով, աշխատում էր պատի վերայ բարձրանալ որպէս զի անցք գտնի լուսանցոյց պատուհաններից—բայց ամենը ի զուր էր: Նա ցնորուած սկսաւ կանչել հօրը, կառավարիչ Ֆրանցիակին, սենեկապետներին և սպասաւորներին, որոց խիստ յաճախ վիրաւորում էր իւր չար արարքներով. ոչ ոք

չէր լսում նորան, ոչ ոք չէր գալիս նորան ազատելու. նորա աղաղակները բոլորովին իզուր էին, նորա ձայնը հանգում էր բանտի չորս հաստ պատերի մէջ: Սիր Թովմասը մի ուրիշ տեղ չ' գտաւ, որ այս տեսակից յարմար լինէր իւր չար նպատակների համար. ամրոցի այս առանձնացած կողմը երբէք ոչ ոք չէր գալիս, ուրեմն և ոչ ոք չէր կարող լսել անբաղա մանկան հոգեքաղ աղաղակները:

Երբ Արտուրը շատ բղաւելուց կոկորդի ցաւ զգաց, մտածեց աղերսել: Նա դռան մօտ ծունկ չուզեց և սրտաշարժ կերպով սկսաւ կանչել իւր հօրելքորը, որպէս զի ազատի իւրեան բանտից և ուզարկի հօր մօտ, խոստանալով հնագանդ լինել ու քաղաք վարուել ամենքի հետ: Բայց այս էլ իզուր էր:—Սիր Թովմասը չէր լսում նորա ձայնը, իսկ եթէ լսէր էլ հազեւ թէ խեղճ տղայի աղաջանքները կարողանային նորա քարէ սիրու դէպի ողորմածութիւն շարժել: Նա արդէն յանցանքի առաջին քայլն արել էր և արդէն ուշ էր յետ դառնալ նորանից: Նա պիտի շարունակէր, պիտի աւ արտէր իւր յանցանքը, եթէ չէր ուզում կորսաի հնթարկուել, որի մէջ արդէն ձգել էր եղբօրորդուն:

Արտուրը փոքր տու փոքր սկսեց հանդարտուիլ կամ աւելի լաւ է ասել, մի տեսակ թուլութիւն զգաց և վերջապէս լաց լինելուց ու շատ ազատուել ջանալուց հոգնած՝ ընկաւ խորը քնի մէջ: Երբ զարթնեց՝ արդէն զիշեր էր, գոնէ ոչ մի լուսի ճառագայթ չէր մտնում բանտի նեղ պատուհաններից: Արտուրը խոր ախ քաշեց և նորից լաց եղաւ. վեր-

ջապէս երկինքը խղճաց նորա վերայ և նա դարձեալ քնեց և մի գեղեցիկ երազ տեսաւ: Նա դարձեալ տանն էր և պառկած էր իւր հօր զրկում, որ նորան քնքութեամբ համբուրում էր: Արտուրը խոստանում էր հօրը երբէք չըաժանուել նորանից, սիրել նորան որդիական անկեղծ սիրով, ուղղուիլ և այլ ևս երբէք չըաւացնել նորան, Խեղճ աղան զգաց, որ յաճախ, շատ յաճախ վերաւորում էր իւր հօրը և այնպէս չէր վարւում ինչպէս իրան վայել էր: Երազի մէջ նա մաքուր սրաով զղջաց: Աւաղ—արդէն ուշ էր: Միայն ճակատագիրը դարձեալ սկսաւ հալածել նորան. դեռ ո՛քան ցաւ ու ո՛քան նեղութիւններ կային նորա առաջ:

Արանուրը բնութեամբ չար չէր. նա բարի սիրտ ունէր: Կրթութեան բացակայութիւնը դարձրեց նորան կամակոր, անհնագանդ ու կամապաշտ տղայ: Գուցէ, տանը մնալով նա ժամանակին բռնաւոր ու չարագործ դառնար: Ահա թէ ինչու Աստուած թոյլ տուեց նորա խիստ հօրեղջօր մտալրութիւնները երագործելու: Այն բանը, ինչ որ այժմ մեծ անբաղտութիւն էր թւում Արտուրին, կարող էր բարեբեր ազդեցութիւն ունենալ նորա ամբողջ կեանքի վերայ: Նա իրանց տանը կրթութիւն չէր ստանայ, միշտ կամապաշտ կ'լինէր և կ'տանջէր խեղճ ստորագրեալներին. կեանքի դառն ուսումնարանը, որի մէջ նա այժմ ընկել էր, պէտք է քաւել տար նորան իւր յանցանքները և ուղղուելու ցանկութիւն ծնէր նորանում: Ինչ որ նորա զլսով անցնում էր, բոլորն էլ Աստուծոյ կամքով էր և ուրեմն բոլորը դէպի լաւն

էին տանում նորան: Ճշմարիտ է, Արտուրը այդ ըսպէին չէր կարողանում այդ իմանալ, և դորա համար էլ ոչինչ միսիթարութիւն չէր գտնում այն ամենի բարի հետևանքի մասին, որ կարող էր ծագել այս ծանր փորձերից, բայց երբ տարիներ անցան, նա նորանում զգաց Աստուծոյ մատի մասնակցութիւնը, և փառաբանեց Արարէն՝ իւր հրաշալի գործերի համար:

Լուսացաւ: Արտուրը զարթնեց և հօր գրկից դարձեալ տեսաւ իրան բանտի մութ պատերի մէջ: Նա յիշեց անցած երեկոյեան պատահած սարսափելի անցքը և դարձեալ լաց եղաւ:

Ի՞նչ զարհուրելի հակասութիւն կար երեկուայ և այսօրուայ առաւօտների մէջ: Երեկ Արտուրը խոր քնից զարթնելով վերկացաւ փափուկ անկողնից. ծառաներից մինը հազցնում էր, միւսը ընտիր նախաձաշկի էր տալիս, երրորդը հարցնում էր, թէ ինչ կհրամայէ նա: Նա ամեն տեսակ յարմարութիւններ ունէր, ինչ միայն կարող էր տալ հարստութիւնը: Մնում էր, որ նա մի բան ցանկանար և իսկոյն ամենը կ'կատարուէր: Նա ամրոցում բացարձակ հրամանատար էր. բացարձակ հրամանատար էր նոյնպէս բազմաթիւ ծառաների վերայ, որոնք պարտաւոր էին նորա ամեն հրամաններն ու ցանկութիւնները կատարել: Իսկ այսօր: Այսօր նա խեղճ անօգնական կալանաւոր է, մասնուած մի ամարդի քանտապետի իշխանութեանը, պինդ նստարանը ծառայում էր նորան իբրև անկողին, ոչ ոք նախաճաշիկ չէր տալիս, ոչ ոք նորա կամքը չէր հարցնում:

Նա իւր գեղեցիկ, տաք ու ամեն յարմարութեամբ
լի սենեակը պիտի փոխէր խոնաւ, սառն ու մռայլ
անակի հետ նա, որ առաջ տասնաւոր ծառաների
հրամանատար էր, չէր կարողանում իւր անձն ան-
դամ կառավարել: Ի՞նչպէս սարսափելի կերպով փո-
փոխուեցան հանգամանքները:

Խեղջ տղան շատ լաց եղաւ անմիտիթար: Ա-
ռաջ նա մոտածեց փախչելով ազատուել կամ մի կերպ
հօրը իմաց տալ իւր դրութիւնը, բայց յետոյ դար-
ձեալ յիշեց, որ ամեն կողմից նորա յարաբերութիւնը
կարել են, որ ոչ ոքին չի կարելի հօր մօտ ուղարկել ո-
րովինեան նորա ձայնը լսող անգամ չկայ: Անբաղս Ար-
տուրը անցք չ'գտաւ իւր հոգեքաղ դրութիւնից ազա-
տուելու և նորից դառն արտասուքներն առուի նման
թափուեցին նորա աչքերից:

Յանկալիք նա մի լուսաւոր միտք յղացաւ, որ
մսիթարեց նորան և զօրացրեց թշուառութիւնները
տանելու համար:

—Ոչ ոք էլ որ չմտաբերի ինձ, ոչ ոք էլ որ չհո-
գայ իմ մասին, հայրս հո կանէ այդ, ակամայ աղա-
զակեց Արտուրը և յափշտակուած դորանով վեր
թաւաւ աթոռից, որի վերայ նստած էր մոտածմունքի
մէջ ընկղմուած: Սպասիր, սպասիր չար, խորամանկ
հօրեղայր, հայրս կազատի ինձ քո ձեռքից և վրէժը
կառնի: Նա իմ մասին հարցուփորձ կանի, կ'որոնի
ինձ և վերջապէս կ'գտնի. և վայ այն ժամանակ
քեզ, հօրեղայր Թովմաս: —Օգնիր, օգնիր, հայրիկ:
Այսուղ արի:

—Ի՞նչպէս պիտի սիրեմ քեզ էր ինձ ազատես

ոյս բանախից: —Օգնութեան հասիր, հայրիկ, Խեղջ
աղան սորանով մի փոքր միսիթարուեց, որովհետեւ
չգիտէր, թէ ի՞նչպիսի նախազգուշութիւններ է արել
նորա խորամանկ հօրեղայրը, իւր չար մաքերի յայտ-
նուիլն արգելելու համար: Արտուրը արտասուքը սըր-
բեց, ուրախացաւ, սկսեց ծիծաղել և ուրախ ուրախ
թռչկոտել սենեկում: Իւր ազատութիւնը նորան
Ճիշտ ու անկասկած էր թւում: իսկ ազատութիւնից
յետ պէտք է որ պատժուէր նորա անամօթ ու դա-
ւաճան ազգականը:

Մի քանի ժամ անցաւ այս հրձուելի յափրշ-
տակութեան մէջ: Գուռը բացուեց և սիր Թովմասը
իւր չարագործ սենեկապետի հետ մոտաւ բանտը: Ար-
տուրը ուրախ, անհոգ և համարեա յաղթական
կերպով դիմաւորեց նոցա: Սիր Թովմասն ու իւր ծա-
ւան խիստ զարմացան սորա վերայ:

—Այ էգապէս, Զօն Սմիտ, երեսումէ, որ գու շու-
տով ընտելացել ես նոր վիճակիդ, ասաց առաջինը
մօտենալով նորան: Միշտ այդպէս եղիր և բանտի
դռները շուտով կ'բացուեն քեզ համար:

—Դու երկար չես կանչի ինձ Զօն Սմիտ, պա-
տասխանեց Արտուրը հաստատապէս: Ես էլ չեմ վա-
խենում քեզանից և զու շուտով կ'զղջոս իմ զէմ
արածներիդ համար: Մի փոքր էլ սպասիր: Այն
բանտը, որի մէջ քեզ կ'բանտարկեն, աւելի խոր և
զարհուրելի կլինի սորանից, ուր ինձ ձգեցիր դաւաճա-
նութեամբ ու խարէութեամբ: Համբերիր, փոխարէնը
կ'հատուցանենք:

Արք Թովմաս Լոռվէլը զարմացմամբ նայեց իւր սենեկապետին:

— **Ի՞նչ է** պատահել սորան, հարցրեց նա: Ես կարծում էի, որ սորան կատաղած ու հառաջելիս կը տեսնէինք, իսկ ընդհակառակն, սա ուրախ է և մինչեւ անդամ համարձակում է ինձ սպառնալ: Այ տղայ, հօ չես ցնորուել, ի՞նչ է եղել քեզ:

— **Անպատճառ** երկիւղն ու զարհուրանքը մի փոքր ներգործել են նորա թող զլիի վերայ: Նա խելագարուել է և երբ ուշքի կդայ՝ կասկած չկայ, որ ուրիշ կերպ կիսուի այն ժամանակ:

— **Այս**, արդարե ուրիշ կերպ կիսուեմ, աւելաց լացրեց Արտուրը և դու էլու իմ գաւաճան հօրեղայրս էլ միասին կ'զողաք իմ առաջ: Վրեժը կառնեմ ձեզ զանից, անպատճառ կառնեմ: Թող մի ազատուեմ—ու ձեր պատիժը զարհուրելի կլինի:

— **Ե՞րբ** պիտի ազատուես, ծիծաղելով ասաց սիր Թովմասը: Եւ դու ի՞նչպէս դեռ յցս ունիս ազատուելու: Ո՞վ պիտի ազատի քեզ: Հետաքրքիր է ձըշմարիտ այդ իմանալը:

— **Հայրս** կազատի ինձ, պատասխանեց Արտուրը խրոխտ ձայնով: Ի՞նչ, կարծում ես թէ, նա չի իմանալ սրանք. նա կ'պահանջի քեզանից իւր որդին. ծիծաղիր, ծիծաղիր: Շուտով կ'զեղնես ու կղողաս ինձանից:

Արք Թովմասը սկսեց բարձր ձայնով ծիծաղել: Նորա սենեկապետի ժանի երեսին էլ դժոխային ժպիտ երևաց:

— **Ի՞նչպէս** չարաշար սխալում ես, յիմար տղայ,

վրայ բերաւ սիր Թովմասը դեռ էլի ծիծաղելով: Մի՞թէ դու իրաւ կարծում ես, որ ես իմ սկսած գործը կիսատ կ'թողնեմ: Հանգիստ եղեր, հօրդ համար էլ ենք հոգացել: Միադ բեր միայն, որ մենք այն խոստումով թողնել նորան, որ քեզ պիտի տանք ուսումնարան: Եւ յիրաւի, Միստեր Արտուր Էննէս-լէյն միքանի օրից յետոյ ուսումնարան կ'արուի, նա այժմ վերև իմ սենեկումն է, երեկոյեան ես ու նա կերթանք եղջերուներով զբօննելու: Եւ դու, Զօն Սմիթ (նա մի առանձին կերպով շեշտեց այս անունը) երբէք չես տեսնի Լորդ Էննէսլէյնի, դու կլինես Զօն Սմիթ, իմ զիւղացի մի այրի կնօջ որդի, և այդ անունով դու կ'մտնես ուսումնարան, որտեղ շուտով զլիիցդ կ'հանեն ամեն ցնորքները և կատիպեն մոռանալ թէ դու Լորդ Էննէսլէյի զաւակ ես:

Արտուրը կայծակնահարի նման կանգնած էր մի քանի րոպէ, նա գեղնեց ու թուլացած ընկաւ նոտարանի վերայ: Այժմ միայն հասկացաւ նա իւր հօրեղբօր գժոխային, ուղիղ համարած զաղափարը նա զգաց, որ կորուսար անփախչելի է, եթէ ազատուելը չ'յաջողուի և որ նա միայն հօր գրկում կարող է պահպանուիլ հօրեղբօր չար մտադրութիւններից: Եթէ յիրաւի սիր Թովմասը մի ուրիշ տղային Արտուր Էննէսլէյ անունով ուսումնարան տար, ի հարկէ, նորա հայրը երբէք չէր իմանալ այդ խաբէութիւնը, մանաւանդ որ սիր Թովմասը խոստացել էր իւրանքանչեւը շաբաթ տեղեկութիւն տալ նորան՝ աղայի յառաջադիմութեան և առողջութեան մասին: Այս բանը ճշմարիտ որ կ'անգորրացնէր ծե-

բունուն, որը հետեւաբար կարիք էլ չէր ունենալ ստուգելու. մանաւանդ որ Արտօւրը շատ լաւ գիտէր իւր հօր հիւանդաս զբութիւնը, եղ պատճառաւ գիտէր, որ նա չի կարող ճանապարհորդել: Այսպէս ուրեմն մի հարուածով չքացան նորա բոլոր յոյսերը:

— Արտած եմ, միրմնջաց նա ցածր ձայնով և անմիթար սկսեց լու:

— Ո՞չի, վերջապէս դու հասկացար, որ երբէք ոչ ոք չի ազատի քեզ իմ ձեռքից, ասաց սիր Թովմասը ծաղրական ձեռվի: Այ էդպէս, սիրելիս, դա ինձ հածելի է, այդպիսով դու շուտ կընտելանաս վիճակիդ և կ'հնազանդուես իմ կամքին: Սակայն հանգստացիր, Զօն Սմիտ, ես այլ ևս խիստ չեմ վարուի քեզ հետ, եթէ միայն խոնարհ ու հնազանդ կ'լինես, և երբէք չես անուենի քեզ Արտօւր Էննէսլէյ: Քեզ ուսումնարան կտամ, ուր դու կովորես լաւ լաւ բաներ և յատկապէս խոնարհութիւն ու հնազանդութիւն, և վերջը՝ բայց այս բոլորը իհարկէ այն ժամանակ կլինին, երբ չես հակառակի ինձ — քեզ միջոց կտամ միջակ կերպով ապրելու: Հաղարաւոր մարդիկ կ'նախանձեն քեզ և դու նորանով աւելի կմոռանաս այն բաները, ինչ որ անդարձ կորցրիր: Իսկ եթէ երբ և իցէ կհամարձակես ասել որ դու Զօն Սմիտը չես, այլ նշանաւոր ազգատոհմից ես ծագում, այն ժամանակի... սիր Թովմասը կանգնեց և մի խոշոր հայեացք ձգեց գոյացող մանկան վերայ — այն ժամանակ, շարունակեց նա զարհուրելի վճռականութեամբ, — այն ժամանակ Աստծուց ինդրիր ողորմութիւն, որովհետեւ դու ինձանից չես գտնի այն,

ես անողորմաբար կհալածեմ քեզ, կարտաքսեմ ամեն ապաստանարանից, կ'լսլեմ քեզանից իւրաքանչիւր հազի կտորդ և մինչեւ այն ժամանակ չեմ հանգստացնի. մինչեւ որ քաղցը, նեղութիւնն ու թշուառութիւնը գերեզման կ'տանեն քեզ: Մի մոռանալը այս և զգուշացիր, որ բարկութիւնս չգրգռես ու վրէժինդրութիւնս չձգես գէպի քեզ: Դու իմ իշխանութեան տակ ես բոլորովին, միշտ. ոչ ոք չի կարող քեզ ինձանից խլել: Եթէ, ես ձեռքս վերցնեմ քեզանից, այն ժամանակ ոսներիդ տակ անդունդ կրացուի և կընկնես նորանում: Եթէ կեանքդ թանգ է, ուրեմն լուիր և հնազանդուիր վիճակիդ: Արտօւրը չկարողացաւ նորան պատասխան տալ. նա բոլորովին թուլացած էր: Նա միայն ախ քաշել ու հիծել կարողացաւ ու աաք արտասուքներ թափուեցան նորա այտերի վերայով: Յանկարծ նա վեր թռաւ տեղից, ընկաւ հօրեղքօր ոտները և գողալով զրկեց նորա ծնկները:

— Նօրեղբայր, սիրելի հօրեղբայր, ողբրմիր ինձ, աղազակեց նա սրտաշարժ ձայնով: Ազատիր ինձ, թող գնամ հօրս մօտ, ես երբէք ոչ ոքի չեմ ասիլ, թէ դու ինչպէս վարուեցիր հետս: Սորա մասին մի խօսք չեմ տախ հօրս, միայն թէ ազատիր ինձ ու թող, որ անունս կրեմ:

Անձ գժուարութեամբ թողնել տուեց սիր Թովմասը իւր ոտները յուսահատ տղայի ձեռներից: Վերջապէս նորան այն կողմ հրեց և ոտների սասատիկ հարուածով ձգեց յատակի վերայ:

— Խնդիրներդ իզուր են, ասաց նա, բոլորովին

շշարժուած երեխայի յուսահատ դրութիւնից: Վիճակը արդէն որոշուած է և ոչինչ ոյժ, ոչ մի իշխանութիւն չի կարող այն փոխել: Մտածիր սորա մասին և հնազանդուիր սորան: Սա միակ միջոցն է, որ կարող է քեզ համար լաւ ապագայ բերել: Բաւական է: — Զօն Սմիտին նախաձաշիկ բեր, ֆան, և յետոյ ինձ մօտ արի: Զխանգարենք սորա մտած մունքները: Գուցէ մեր ներկայութիւնը շփոթում է սորան:

Ժանը շատապով դուրս գնաց և միքանի բռպէց յետոյ բերեց երկու ափսէ և մի ամսնով ջուր: Այս բոլոր նա դրեց նստարանի վերայ: Յետոյ սիր Թովմասը իւր սենեկապետի հետ հեռացաւ, մի կարեկցական հայեացք անգամ չճգելով ինեղծ տղայի վերայ, որը գեռ էլե ցաւից ու յուստհատութիւնից գլորում էր յատակի վերայ: Գուռը փակուեց, ամը ըոցը դղբդաց և Արտուրը նորից միայնակ մնաց իւր մոայլ ու տրտում բանտի մէջ:

Գլոհին Հինգերորդ

Հնազանդութիւն:

Ոիր Թովմաս Լոուէլը ոչինչ բան աչքից չէր թողնում, ինչ միայն, քիչ թէ շատ, կարող էր նորա չարագործութիւնները յայտնուելուն նպաստել: Ամենից առաջ նա պատուիրեց ժանին, որ իսկական Զօն Սմիտին ամրոցը բերի: Սենեկապետը բերեց նորան երեկոյեան մութ ժամանակ այնպիսի ճանապար-

հով որ ո՛չոք շտեսաւ նոցա և սիր Թովմասի բազմաթիւ ծառաները երբէք չկասկածեցին, թէ այս տղան, որ գտանւում էր իւրեանց տիրօջ սենեկում՝ Արտուր էննէսէյն: Ոիր Թովմասը այն տղայի հետ շատ քնքութեամբ էր վարւում, ամեն կերպ աշխատում էր փայփայել նորան, որպէս զի աւելի վարկ ստանայ այրի Սմիտից, և բոլորովին հանգստացնի նորան որդու վերաբերութեամբ: Եւ այս յաջողում էր նորան, մանաւանդ որ խեղծ հիւանդ մանուկն էլ բարի և ազնիւ սիրտ ունէր և ծշմարիտ որդիական սիրով սիրում էր իւր կեղծ պահպանողին և մեծահոգի բարերարին:

Ամենից առաջ հարկաւոր էր փոքրիկ. Զօնին ստիպել իւր անունը փոխելու Արտուր էննէսէյ: Այս անունով պիտի նա ուսումնարան մտնէր: Բայց այս արգելքին էլ սիր Թովմասը առանց մեծ դժուարութեան յաղթեց:

— Փո վիճակը շատ վրգովում է ինձ, բարեկամ, ասաց նա Զօնին: Եթէ ես ուսումնարան տամ քեզ խեղծ այրու որդու անունով, վայ թէ քեզ վերայ հարկաւոր ուշազբութիւն չ'դարձնեն, որովհետեւ աշխարհում միշտ այդպէս է լինում — հարուստների ու երեկոլի մարդոց որդիներին ամեն բանում նախապատռում են, իսկ աղքատներին միշտ արհամարշ հում են: Ես շատ կցաւէյի, եթէ քեզ էլ նոյնը պատահէր. և անպատճառ այդպէս էլ կլինէր, մանաւանդ որ ես միշտ չեմ կարող քեզ մօտ լինել: Բայց այս ցաւին կարելի է դարձնան տանել: Ես քեզ կյանձնեմ ուսումնարան իմ եղօրորդի Արտուրի, Լորդ Էն-

նէսլէյի որդու անունով, և քեզ աւելի բան չի մնայ անելու, բայց եթէ սովորել այդ Արտուրի անունը և երբէք ոչ ոքի շասել իսկական անունդ: Այնուհետեւ քեզ, ինչպէս մի հարուստ և նշանաւոր Լորդի որդուն, ամենքը ձեռների վերայ կմանածեն և միշտ ամեն բանում քեզ կ'յարգին ու կպատռւեն: Այդպէս չէ, իմ սիրելի Զօն:

Երեխան գլուխը կախեց ՚ի նշան հաւանութեան:

Ի՞նչքան ողորմած էք դուք, բարի տէրս, պատասխանեց նա: Եթէ դուք այդպէս էք կամենում, ես սիրով կ'անուանեմ ինձ Արտուր Անսէլյ և առհասարակ ամեն բան պատրաստ եմ անել, ինչ միայն կամենում էք դուք, որովհետեւ զիտեմ, որ իմ սեպահան օգուտու էլ դորանից է կախուած:

Այ էլպէս, շատ լաւ, սիրելիս. այժմ ես բոլորովին հանգիստ կինեմ քո մասին, ասաց սիր Թովմանը: Այսուհետեւ քեզ Արտուր կ'կանչենք, և դու էլ ինձ հօրեղայր կանուաննես: Չմոռանսս այս:

Նա մի քանի անգամ յիշեցրեց տղային չմոռանալ իւր նոր կոչումն ու անունը: Երկու երեք օրից յետոյ նա արդէն զիտեր իւր դասը և սիր Թովմանը այլ ևս չկամեցաւ բանը ուշացնել: Նա Զօնի հետ միասին մի գեղեցիկ կառքով գնաց Բրադֆօրդ քաղաքը, ուր Լուվէլ Կաստլից հեռու չէր և մեծ պատռվ ընդունուեցաւ ուսումնարանի կառավարիչ Միատեր Բրոնֆից: Վերջնը ի հարկէ բոլորովին չկառկածեց, որ իրեն ներկայացրած տղան Արտուր Էնսէլյն է, և խոստացաւ նորա վերայ առանձին հոգացողութիւն ունենալ:

— Ամենից առաջ աշխատեցէք երեխային լաւմարիկ տալ բժիշկ վարձեցէք դորա համար, որովհետեւ շուտ շուտ հիւանդանում է դա, ասաց սիր Թովմանը: Նայեցէք նորա դժգոյն ու նիշար դէմքին: Բացի դորանից խնդրում եմ, որ իւրաքանչիւր շաբաթ կամ մինչև անգամ աւելի յաճախ նամակաւ տեղեկութիւն տաք ինձ սորա առողջութեան, յառաջազիմութեան և ամեն բանի մասին, ինչ որ սորան է վերաբերում: Այն բոլորը պիտի հաղորդեմ ես իմ եղբայր Լորդ Էնսէլյին, որ յանձնեց ինձ Արտուրին ուսումնարան տալ:

Կառավարիչը յայտնեց, որ պատրաստ է սիր Թովմանի բոլոր ցանկութիւնները կատարել և նա մնաս բարեաւ ասելով իւր կեզծ եղբօրորդուն՝ բաւականացած գնաց տուն:

Մինչեւ այսուղ սիր Թովմանի զաղափարը բոլորովին յաջողում էր և նրան մնում էր միայն հոգաւը որ իւր յանցանքը չյայտնուի:

— Դեհ, փառք Աստծու, Զօն Ամիանի բանն էլ վերջացրինք, ասաց նա իւր սենեկապետին, երբ վերագարձաւ տուն: Բայց ի՞նչ անենք իսկական Արտուր Էնսէլյին: Նա դեռ ևս կարող է պատահմանք թէ զիտութեամբ շատ նեղութիւններ պատճառել մեզ: Ես բոլորովին վախենում եմ նորան ձեռներից զուրս թողնել. բանն այնպէս է, որ ոչ ոքի չի կարելի հաւատալ:

— Եհ, ձերդ ողորմածութիւն, այդ ցաւին էլ հեշտ է գեղ անել ասաց Ֆանը: Նորան աչքից մի հեռացնէք, թող բանոր նստի, մինչև որ նորա

Հայրը կամ կեղծ — Արտուրը կ'ննջեն յաւիտենական քնով: Երկար չենք սպասի. վեց, եօթ ամսից յիտոյ երկումն էլ չեն լինի աշխարհում: Ոչ ոք չե իմանալ, թէ երեխան բանտարկուած է. նորա բանար միայն մի գուռն ունի դէպի ձեր սենեակը, ուր բացի ինձանից ոչ ոք չե կարող մտնել: Եթէ պատահմամբ էլ մէկը կարողանար այդ կողմերը մտնել այն ժամանակ կասկածանքը ցրելու համար, բաւական է միայն, որ ձերդ ողորմածութիւնը նախասենեկի բանալին հետք պահէր: Կալանաւորն իւր ուտելիքը ձեր սեղանից է ստանում և այս էլ ոչ ոքին կասկածի մէջ չե ձգի — ուղղակի կ'կարծեն, թէ զուք այժմ աւելի լաւ ախորժակ ունիք, քան թէ առաջ: Բայց վերջապէս, սիր Թովմաս, մինչեւ ես այստեղ եմ, զուք կալանաւորի վերաբերութեամբ կարող էք բոլորովին ապահով լինել յոյժներդ բոլորովին ինձ վերայ դրէք, ես նորան աշքի բրի պէս կ'պահէմ:

— Հաւատում եմ, բոլորովին հաւատում եմ քո հաւատարմութեանդ, պատասխանից սիր Թովմասը: Առհասարակ քեզ շատ պարտական եմ ժան: Քո սերն ու բարեկամութիւնը յիրաւի այնքան մեծ է դէպի ինձ, որ ես բոլորովին հանդիսա կարող եմ լինել ձշմարիան ասեմ, ես չեմ իմանում, թէ ինչպէս արժանացայ այդ ամենին:

— Ո՛հ, ողորմած տէր, պատասխանեց սենեկապետը, զուք միշտ ինձ հետ այնպէս բարի ու ողորմած էիք վարւում, ձեզ մօտ ես երբէք մի բանի պահասութիւն չեմ զբացել և բացի դոբանից իմ սեպհական օգուտներս կապուած են ձեր դիտարուու-

թիւնների յաջողութեան հետ: Դուք չ'պիտէք այն առածը, թէ ողբան տէրը հարուստ է, այնքան էլ ծառաները լաւ են ապրում:

— Հըմ, այդ առածը բոլորովին իրաւացի է, ևս քեզ հասկանում եմ, ծիծաղելով պատասխանեց սիր Թովմասը: Բայց Արտուրի վրայ խօսենք. — ուրեմն դու կարծում ես, որ ամեն բան լաւ կլինի, եթէ որ նա մի ժամանակ այստեղ մնայ:

— Անկասկած, ձերդ ողորմածութիւն, ասաց Փանը, մանաւանդ որ շարունակ բանտարկութիւնը բարեբեր հետեւանք կունենայ, նա կ'զառնայ հետագանդ, խոնարհ և մինչեւ այն աստիճանի երկիւլած, որ նորա յանդպնութիւնն ու քաջութիւնը բոլորովին կ'անհետանան: Դեռ այժմ էլ նա էն Արտուրը չէ, նորանում կամակորութեան հետք անգամ չկայ. նա կարծես բոլորովին ընտելացել է իւր վիճակին:

— Այդ շատ լաւ է, ասաց սիր Թովմասը, բայց զիտեն որ ես չեմ կարող նորան տեսնել: Նորա մօտ, ժան: Թող նա ոչինչ բանի պակասութիւն չ'զգայ, եթէ միայն հնագանդ կլինի. ամենափոքր անհնագանդութեան ժամանակ՝ թոյլ եմ տալիս քեզ մինչեւ անգամ թեթև ուղղեց միջոցներ գործ դնելուն ես նորան չեմ կամենում շարչարել ու խիստ վարուել նորա հետ, բայց ինձ անպատճառ հարկաւոր է նորա կամակորութեանը յաղթել:

Ժանը զիտեն առեկց ի նշան հնագանդութեան, և Արտուրի վիճակը առ ժամանակ որոշուեցաւ: Աենեկապետը կարծ խօսքերով իմացցրեց մանկան՝ սիր Թովմասի վճիռը, և խեղճ կալանաւորը սառնասը:

առւթեամբ լսում էր նորան, ոչ մի անգամ ախ չքաշելով, և ոչ մի կաթիւ արտասուք չթափելով:

Ճշմարիտ որ Արտուրի քաջութիւնը սկսել էր թուլանաւ այն օրուանից, երբ իւր հարազատ հօրեղայրը անարդից իրան և երբ նա համոզուեց, որ հօրից երբէք չի կարող օգնութիւն սպասել: Արտուրը խորը մտածման մէջ ընկաւ և ամբողջ օրերով նոյնպէս մտածելով նստած էր աթոռի վերայ, խորհելով իւր վիճակի յանկարծակի փոխուելու մասին: Երբեմն նա աղաղակում էր ու լաց լինում, այնպէս որ քարերն անգամ կլանային նորան, բայց ժանը բոլորովին ուշագրութիւն չէր դարձնում տղայի այդպիսի ողորմելի դրութեան վերայ: Նա անողորմ խստութեամբ ծեծում էր նորան, չնայելով որ սկը թովման արգելել էր այդ, կարծելով որ այդպիս աւելի նպատակին կհասնի և նորան երկշուա ու բոլորովին հնագանդ կդարձնի: Արտուրը փոխուեց, երբ Զնի անունը տուին, և իւրաքանչեւր հարցին այնպէս պատասխանեց, ինչպէս որ իւր տանջօղը պահանջում էր: Ժանը ամեն օր քննում էր նորան և խեղձ տղան, իհարկէ, պէտք է հնագանդուէր նորան, որովհետեւ հակառակ դէպքում զրկում էր ճաշից ու ընթրիքից:

Անունդ ի՞նչ է, հարցնում էր առհասարակ ժանը ամենից առաջ, և Արտուրը խկոյն պատասխանում էր, ինչպէս որ իրան պատուիրել էին:

— Զօն Սմիտ:

— Ո՞վ է քո հայրը:

— Կա մեռած է:

— Ի՞նչով էր պարապում:

— Եթեղք բանեոր էր:

— Մայր ունին:

— Ունիմ:

— Ի՞նչով է ապրում նա:

— Լուացք է անում և ողորկում է:

— Դու ինչի՞նորան թողիր:

— Ելուա համար, որ նա խեղճ է և չի կարողանում ինձ կերակրել:

— Լաւ, դու շատ լաւ թութակ ես, ասում էր առհասարակ ժանը՝ քննութիւնը աւարտելուց յետոյ, դու աշխարհում չես կորչի: Մնաս բարեաւ:

Շարաթներն ու ամիսներն անցնում էին, իսկ Արտուրը դեռ բանտումն էր, ոչ մի մարդ չտեսնելով, բայց իւր տմարդի բանտապետից: Նարունակ բանտարկութիւնը սկսեց ներգործել նորա առողջութեան վերայ: Նորա այտերի նախկին կարմրութիւնը բոլորովին անցաւ, զէմքը հիւանդուի պէս գեղնեց, նորա կարմիր շրթունքները դեղնեցին, երիտասարդական հրով փայլող աշքերը մթնեցան: Նա այժմ միայն երկոյթն էր, ստուերն էր առաջուայ Արտուրի. նորա մատքերն էլ սկսուեցան խանգարուել: Այնպիսի բոպէներ էին լինում, երբ ինքը մանուկը կաշկածում էր, թէ Ճշմարիթ է, որ ինքը հարուստ ու երեկելի լորդի զաւակ է: Անցեալը նորան մի քաղցր երազ էր թւում, իսկ ոչինչ ապագայ չէր տեսնում նա իւր առաջ: Նա մի տեսակ առհամարհանք ու զգուանք էր զգում դէպի ժանը և վախենում էր նորանից, ինչպէս մի վայրի գաղանից. իսկ սենսկա-

պետք ամեն կերպ աշխատում էր առելի զօրացնել
այդ զգացողութիւնը: Նա տղայի հետ երեք քաղց-
րութեամբ չեր խօսում: Նորա դէմքը միշտ մոռայլէր,
ահարկու և խիստ, երբ մանում էր խեղճ կալանա-
ւորի մօտ: Նա առանց հաստ կաշուէ հիւս մորակի
չեր գնում նորա մօտ: Տղայի ամենափօքր անհնա-
զանդութեան ժամանակ, ժանր անխնայ ծեծում էր
նորան: Արտուրը դողում էր, երբ բանտի դռնից
տեսնում էր սենեկապետի դէմքը, և մի քանի շա-
բաթից յետոյ նա դառաւ հնազանդ ստրուկ իւր
բոնակալին, առանց ընդդիմութեան կատարելով նո-
րա ամեն ցանկութիւնները: Ժանին էլ հենց այս էր
հարկաւոր: Նա մեծ յաղթանակով յայանեց իւր
տիրօջ, որ այժմ Լորդ Էննէսլէյն ու կեղծ Արտուրը
երբ կամենան կարող են մեռնել, որովհետեւ իսկա-
կան Արտուրից երկիւղ չ'կայ, եթէ մինչև անզամա-
գատէին էլ:

Սիր Թովմասը այն ինչ իւրաքանչւր շաբաթ
տեղեկութիւն էր ստանում կեղծ—Արտուրի դաստի-
արակ Միատեր Բրոֆլից և բաւականութեամբ նկա-
տում էր, որ նա միշտ զրում էր իւր որդեգրի վատ-
առողջ զրութեան մասին: Նա միանգամ այցելեց
ուսումնարանին և հաւասարացաւ, որ հիւանդ ե-
րեխան իրաւ հետզհեաէ թուլանում է և շուտով
կ'սախպուի անկողին մանել: Սիր Թովմասը իւր կող-
մից նոյնպէս իւրաքանչւր շաբաթ տեղեկութիւն էր
առլիս Լորդ Էննէսլէյին իւր որդու մասին, բայց
զրում էր միայն նորա յառաջադիմութեան, լաւ
վարքի, և առողջ լինելու մասին: Երբեմն երեմն նա

ինքը գնում էր Էննէսլէյ-Կաստլ և ամեն կերպ աշ-
խատում էր եղքօրը հաւատացնել որ նորա որդին
շատ լաւ տեղ է և որ ժամանակին հօր միիթարող
կլինի: Լորդ Էննէսլէյն ուրախանում էր անում
իւր նենգաւոր եղքօրը: Նա միայն ցաւում էր, որ
ինքը երբ և իցէ չեր կարող նրադՓօրդ գնալ: Պարզ
բան է, սիր Թովմասը ամեն կերպ աշխատում էր նո-
րան այս զիտաւորութիւնից յետ դարձնել ասելով
որ Լորդ Զարլսը պէտք է պահպանի իւր առողջու-
թիւնը և որ երկար ճանապարհորդութիւնը շատ
վնաս է նորան:

— Դեհ, իմ եղքայրը ոյլ ևս երկար չե ապրի,
ասաց մի անգամ սիր Թովմասը իւր սենեկապետին,
հենց Էննէսլէյ-Կաստլից վերաբառնալուց յետոյ:

Նա շխալուեց: Արդէն երեք օր զրունից յե-
տոյ Էննէսլէյ-Կաստլից եկած ձիւաւորը իմացրեց, որ
Լորդ Էննէսլէյն մերձ ի մահ է և ցանկանում է
կրկին անգամ մեռնելուց առաջ տեսնել իւր եղքօրը:
Սիր Թովմասը շտապեց զէպի Էննէսլէյ-Կաստլ: Երբ
հասաւ այնաեղ արդին ամեն բան վերջացած էր: Զպային
հարուածը մի բավէում վերջ դրաւ Լորդ Զարլսի
տանջանքին, նորա կեանքի հետ միասին:

Սակայն սիր Թովմասը մնաց Էննէսլէյ-Կաստլ
եղքօր թաղմանը ներկայ լինելու համար: Հազիւ թէ
հանգուցեալ Լորդ Զարլսի մարմինը պահուեցաւ Էն-
նէսլէյների ժառանգական ստորերկրեայ գերեզման-
նոցում, երբ մի ուրիշ տխուր լուր հասաւ: Բրադ-
Փօրդի ուսումնարանի կառավարից Միատեր Բրոֆլի-

Նամակով իմացնում էր սիր Թովմասին, որ փոքրիկ Արտուր Եննէսլէյն բոլորովին անակընկալ կերպով զոհ դնաց իւր հիւանդութեանը: Այս լսելով սիր Թովմասը իրան բոլորովին վշտալի ու տխուր ձեայրեց, հրամայեց ծերունի կառավարիչ Ֆրանցիսկին կանչել և տուեց նորան Միստեր Բրոֆիսի նամակը:

— Զարհուրիլի է, զարհուրիլի, գոչեց ծերուկը վախեցած. դժուար է դորան հաւատալ ինչ, եթէ պյատեղ...

Արասափիլի կասկած ծագեց ծերունու հոգու մջ, նա հագիւ թագցրեց իւր մաքերը. բայց էլի առժամանակ կարողացաւ թօղնել և մի այնպիսի հայեացք ձգեց սիր Թովմասի վերայ, որ եթէ ուրիշը նորա տեղ լինէր, իսկոյն գետնին կ'նայէր: Առ նորան հասկացաւ:

— Աստուած սիրէք Ֆրանցիսկ. Հօ չէք ցնորուել, ասաց նա բոլորովին հանդարա: Միստեր Բրոֆիլ յայանի է, ինչպէս մի աղնիւ մարդ: Նորան ամենքը յարդում են, նա երբէք յանցանք չի գործի: Արտուրը արդէն մի քանի ամիս է ինչ հիւանդ էր, և ես նորա համար չէի ասում եղօրս, որ չէի կամենում դառնացնել նորա վերջին օրերը: Բարեհածեցէք Միստեր Բրօֆիսի ինձ գրած նամակները կարդալ, կուղարկեմ նրանք ձեզ մօտ, ինձ մօտ են գըտնուում Լուվէլ-Կաստում: Բացի գորանից տեսէք, ահա մեր խեղճ Արտուրի հիւանդութեան պատմութիւնը, նա ստորագրած է քաղաքային բժիշկների ձեռքով, և ահա դատաստանական վկայաթուղթն էլ

նորա մահուան մասին, արքունի կնքով վաւերացրած: Այս բոլորը նամակի հիւր էին ինձ ուղարկել:

Կառավարիչը գողգոչուն ձեռքով վերցրեց ուղարկուած վկայագրերը, շուտով նոյեց նոցա վերայ և տիրութեամբ շարժեց իւր ալեոր գլուխը: Արտասուցը թափուեցան նորա դժգոյն այտերի վերայից:

— Ուրեմն, Ճշմարիտ է այս, ասաց նա ծանր ախքաշելով: Որդին էլ հօրը հետեւեց, երկուսն էլ միասին: Ներկացէք նեղանալուս համար, Միլօրդ, ես ծեր, հաւատարիմ ծառայ եմ, ձեզ էլ և հանգուցեալ Լորդ Զարլաբին էլ ձեռներիս վերայ եմ կրել: Այժմ դուք էք այստեղի հրամանատարը, դուք նոր Եննէսլէյ Լօրդն էք: Թյուլ տուէք ամենից առաջ շնորհաւորել ձեզ բայց ներեցէք, ես այս ուրախ սրտով չեմ ասում—ես բարի տէր ունեի:

— Ես էլ այնպիսին կլնեմ, պատասխանեց սիր Թովմասը:

Ծեր ծառան չպատասխանեց: Նա խոնարհութեամբ ողջունեց և իւր նոր հրամանատարին թողեց միայնակ: Այժմ վերջինս կարող էր դիմակը վերցնել և իւր զգացմանքներին ազատ ճանապարհ բանալ:

— Ա երջապէս, գոչեց նա, վերջապէս հասայ նպատակիս: Նա Լօրդ եմ: Ես հարուստ եմ: Ես երեկի եմ: Իմ բաղաւուրութեան արեգակը դուրս է զալիս: Ոչ կ'համարձակի այժմ իմ մեղադրել: Ոչ կ'համարձակի կասկածել ինձ վերայ:

Արդարեւ, ոչ ոք չէր համարձակում կասկածել և մեղադիմել սիր Թովմասին: Նա այնպէս ճարտարութեամբ իրագոյ ծեց իւր գաղափարը, հենց հանգամնքը այնքան օգնեց նորա դիտաւորութիւնների կատարմանը, որ նոր Լօրդը այլ ևս դորանից լաւ բան չէր կարող ցանկանալ: Ի հարկէ կարող էր հանգուցեալ Լօրդի ծառաների մէջ մի անորոշ ձայն տարածուիլ բայց ովկ կ'համարձակէր բան խօսել զորա մասին: Չնայելով որ լող չկար, այնու ամենայնիւ ծառաները շնչում էին մի անսովոր դէպքի մասին, որ հայրն ու որդին համարեա միասին մեռան, որպէս զի իւրեանց մեռնելով մի երրորդի համար տեղ բանան: Ծառ անդամ այս պատմութիւնն անելս գլխները շարժում էին, բայց ոչ ոք չէր կարողանում իւր զգացմունքների մասին մի բան առել: Սիր Թովմասը էր և մնաց անվիճելի ախրապետ Էննէլէյ-Կաստի, որովհետեւ իսկական Արտօրի մահուան մասին ոչ ոք չէր կասկածում: Ծերունի ֆրանցիսկը տեսաւ Արտօրի մահուան գաասատանական վկայագիրը, ուրեմն Արտօրի մեռած էր և սորա համար պէտք էր հանգատանալ: Սիր Թովմասը մի քանի օրից յետոյ թողեց Էննէլէյ-Կաստիլլ իւր նախկին կալուածը վերագառնալու համար, տարաւ իւր հետ ծերունի ֆրանցիսկին: Նա ցոյց տուեց նորան Միստեր Բրոնի բոլոր նամակները և վերջապէս բոլոր կասկածանքները ցրելու համար առաջարկեց նորան անձամբ գնալ Բրագֆորդ և նոյն իսկ կառավարչէ բերանից իմանալ Արտօրի հիւանդութեան մասին տեղեկութիւններ: Ծեր, հաւատարիմ

ծառան մի տեսակ անխմանալի անհանգստութիւնից շարժուած, գնայ Բրագֆորդ և նոյն իսկ կառավարչէց տեղեկացաւ, թէ ինչպէս Արտօրի հիւանդացաւ, ինչպէս նա հեազնետէ թուլանում էր և վերջապէս մեռաւ: Միստեր Բրոնի իւր կողմից չկարողացաւ գովել Սիր Թովմասի այդպիսի հայրական հոգացողութիւնը դէպի Արտօրի: Թէպէտ և ծեր ֆրանցիսկը գեռ էլի շարժում էր իւր ալեզարդ գլուխը, սովորյան նորան աւելի բան չէր մնում անել բայց եթէ հաւատալ այսքան արժանահաւատ մարդկանց վկայութիւններին և վերագառնալ Էննէլէյ-Կաստի: Նորա վերագառնալուց յետոյ միւս օրը երեցաւ այնաեղ նոր Լօրդի սենեկապետ Փանը, ծառաներին հաւաքեց և յայտնեց նոցա իւր տիրոջ հրամանը, որ նոքա բոլորը նոյն իսկ օրը թողնեն ամրոցը: Նոցա իւրաքանչիւրին տրուեցաւ ամբողջ տարեկան ոռօդիկը: Այսպիսով սիր Թովմասը մի անգամից ազատուեց բազմաթիւ վկաներից, որոնք վաղ թէ ուշ կարող էին վտանգաւոր լինել: Այժմ նոր Լօրդին մնում էր միայն իւր կալանաւորի վիճակը որոշել և նորան մի այնպիսի տեղ թագցնել, ուր նա բոլորովին անվտանգ լինէր: Նորա կատարելն էլ դժուար չէր. Փանը շատ վաղուց կազմել էր Արտօրին դաստիարակելու գաղափարը: Մնացել էր միայն նորա կատարումը:

Դ. Ա. Ա. Վ. Ե Յ Ե Ր Ո Ր Ի

Ուսումնարան:

Բացի էնէսլէյ—Կաստլից՝ սիր Թովմասը եղբօր մահից յետոյ իբրև ժառանգութիւն ստացաւ այլ ևս հարուստ կալուածներ Խրլանդիայում։ Նոր լորդը հենց այստեղ կամեցաւ փոխադրել իւր եղբօրորդուն և կրթել նորան հայրենիքից հեռու։ Սիր Թովմասը վերցնելով իւր հետ Զօն Սմիտի ծագման, ծննդեան և մկրտութեան մետրիքական վկայականները՝ մի մուլժ, մառախլապատ գիշեր զուս զնաց Լուվէլ—Կաստլից։ Նորան ուղեկցեց և իւր հաւատարիմ ծառայ ժանր։ Խեղճ Արտուրի ձեռներն ու ոսները կապեցին և զրին մի արկղի մէջ, որի միջեց անցք կար օդ մոնելու համար։ Ճանապարհին մէջ զբուշութիւն զործ զրին, մինչև անգամ խեղճ տղայի բերանն էլ կապեցին՝ խօսելն արգելելու համար։ Մութը գիշերով հասան նորա սիր Թովմասի կալուածքին, որ գտնւում էր Խրլանդիայի մի ցուրտ ու առանձնացած տեղ։ Լօրդը բնակում էր իւր հին, կիսաւեր ամրոցում, որը շուտով նորոգուեց, երբ իմացան, որ սիր Թովմասը գնում է այնտեղ։ Ամրոցի կառավարիչը խորին խոնարհութեամբ դիմաւորեց նոր լորդ էնէսլէյին, տարաւ նորան առանձնասենեակը և երբ ճանապարհի բոլոր բաները ներս բերին, սիր Թովմասը կառավարչին հրամայեց զուրս զնաւ։ Հագեւ թէ նա հեռացած էր, իսկոյն ժանր

բացեց արկղը, որի մէջ գտնւում էր կիսաշունչ Արտուրը նորա ձեռներն ու ոսները քանդեց, թողեց մի փոքր ուշքի գալու և ամրոցում մի տնակ կտնելով—բանտարկեց նորա մէջ։

Միւս օր սիր Թովմասը հրամայեց իւր մօտ կանչել կառավարչին և սկսեց հարց ու փորձ անել մի գիւղական ուսումնարանի մասին, որը կառավարում էր Միստեր Վոտեր անունով մէկը։

— Ո՛հ, մեջօրդ, պատասխանեց կառավարիչը, նա մի ուրիշ տեսակ մարդէ—Միստեր Վոտերը ամբողջ շրջակայքում յայսնի է, նորա ուսումնարանը այստեղ մօտիկ մեր գիւղումն է։ Նա բաւական արժան է վերցնում, բայց ասում են, որ խեղճ երեխաների հետ այնպէս է վարւում, ինչպէս շների հետ։ մանուկները քիչ է մնում, որ սովոր մեռնեն։ Ամենաշնչին բանի համար անողումաբար ծեծում է նոցա։ Մեր գիւղում ով ուզում է, որ մի անպիտանի ձեռքից աղատուի, տալիս է նորան միստեր Վոտերի մօտ։

Միւր Թովմասը ուշադրութեամբ նայեց իւր սենեկապետին, այս վերջինը գլուխը կախեց։ Յետոյ Լօրդը ասաց կառավարչին։

— Ես ցանկանում եմ այդ մարդուն տեսնել։ Երբոր կ'մթնի, ուղարկեցէք նորան ինձ մօտ։

— Ծառայդ եմ, Միլօրդ, պատասխանեց կառավարիչը։ Էլ ոչինչ չէք հրամայում, ձերդ ողորմածութիւն։

— Հրամայեցէք նախաձաշեկ բերել ինձ համար և թող երկու ձի թամբեն։

Կառավարիչը հեռացաւ։

— Ամեն բան կարելոյն չափ լաւ է զնում, ասաց
սիր Թովմասը Փանին: Այսօր մենք կ'տեսնենք այն
ուսումնարանը, Միստէր Վառերին չասելով, թէ ովքեր
ենք մենք, և յետոյ հանգամներին նայելով կամ
երեկոյին կընդունենք ուսումնարանի կառավարչն և
Արտուրին կյանձնենք նորան և կամ կ'բաց ասենք:

Կախածաշելուց յետոյ սիր Թովմասը հրամա-
յեց, որ իւր բացակայութեան ժամանակ ոչ ոք չմոնի
նորա առանձնասենեակը և Ժանին իւր հետ վերց-
նելով՝ ձիով գնաց գիւղը: Մի պատուտած շորերով
տղայ ցոյց տուեց ուսումնարանի շինութիւնը: Սիր
Թովմասը կանգնեց մի երկաթէ վանդակի առաջ, որի
միջից երեռում էր ընդարձակ հրապարակ, շրջապա-
տած հաստ ու բարձր պատերով: Հրապարակի մջ
տեղ գտնւում էր զիւղական երկյարկանի տուն:
Նորա պատուհանները ծածկուած էին երկաթէ
վանդակներով: Այս բոլոր նորան աւելի բանտի տեսք
էին տալիս, քան թէ ուսումնարանի: Սիր Թովմասին
էլ հենց այդպիսի դպրոց էր հարկաւոր: Նա ձիոց
վերթուաւ, ձին յանձնեց Ժանին և զանդահարեց:
Տան գոնից իսկոյն գուրս եկաւ մի պառաւ, վատ
հագնուած կին և գոնիրը բացեց: Նա երբ տեսաւ
երեկի ու լաւ հագնուած մարդ, յետ քաշուեց,
խորը գլուխ տուեց և հարցրեց:

— Ի՞նչ էք կամենում, Միլորդ:

— Միստէր Վառերը տանն է, հարցրեց սիր Թով-
մասը. կամենում եմ նորա հետ խօսել:

— Կ'կամենայիք ինձ հետեւ: Ամուսինս մեծ պա-
տիւ կ'համարէ իւրեան Միլորդի հետ խօսել:

Նա դուռը նորից փակեց և առաջ դնաց:
Սիր Թովմասը հետևեց նորան և մտաւ մի մեծ զահ-
լիճ, որ ըստ երեսութին դաստան տեղ էր ծառայում:
Տասներեք թէ տասնուշորս երեխաներ ուտում էին
մի տեսակ անպիտան արգանակ, որ բերում էր նոցա
մի բարձրահասակ, նիշար մարդ խիստ ու տխուր գէմ
քով: Եւրաքանչիւրը վերցնում էր կաւէ ափսէով իւր
բաժին արգանակը և ագահութեամբ ուտում էր անագէ
զրգալով: Գրէթէ բոլոր երեխաները գժգոյն ու նի-
շար գէմք ունեին, նոքա համարեա մի մի վերար-
կու ունեին հազին և ահուղողով էին մտիկ տալիս
արգանակ բաժանող մարդու վերայ:

— Ա իսկապէս այնպիսի մարդ է, ինչպիսին ես
ուզում եմ, մտածեց ինքն իրան սիր Թովմասը: Այս
ուսումնարանն էլ շատ լաւ է Արտուրի համար:
Արգանակ բաժանելը վերջացնելուց յետոյ այն
նիշար մարդը մօտեցաւ սիր Թովմասին և խոնարհու-
թեամբ ողջունեց նորան:

— Ում հետ արգեօք պատիւ ունիմ խօսելու,
հարցրեց նա, զարձեալ վլուխ տալով:

— Ես կ'ցանկայի առժամանակ չիմանայիք այդ,
պատասխանեց սիր Թովմասը հպարտութեամբ: Ան-
կամած կուք էք Միստէր Վառերը, այնպէս չէ:

— Այս, ծառայդ է, Միլորդ:

— Ես ուզում եմ ձեր ուսումնարանը տեսնել:

— Հրամայեցէք, ձերդ ողորմածութիւն: Միայն
առաջուց պէտք է ասեմ, որ մեր ամեն բանը պարզ է
և անշուք: Մենք չենք կարող ճոխ ապրել եկամու-
տը շատ աննշան է, իսկ երեխաներին կերակրելն ու

սովորցնելը շատ թանգ է նստում: Մեր արհեստով
մարդ երբեք չե հարստանայ:

Այ աւազակ, մտածեց սիր Թովմասը: Դու
փողը վերցնում ես, իսկ երեխաններին կերակրում ես
միայն մի տեսակ սպարատական արժան արգանակով:
Մտնուկների գեմքերից իմացւում էր, որ նոցա լաւ
չեն կերակրում:

Սակայն նա զգուշացաւ իւր զգացմունքներն
արտայայտելու, և միայն ուսերը վեր քաշեց:

—Առաջ գնացեք, ասաց նա:

Միստեր Վատերը տարաւ նորան զանազան
սենեակներ: Ամեն տեղ երեւում էին աղքատութեան
ու խիստ ժլատութեան հետեանքներ: Տղայոց ննջա-
րանում գտնւում էին մաշճակալներ, ծածկուած
ցեխու ու պատուտած վերմակներով, դասատանը ոչ
կարգ կար և ոչ մաքրութիւն. ուսումնարանը մի
տիուր տեսարան էր ներկայացնում:

—Գուցէ որ ես մի տղայ յանձնեմ ձեզ, ասաց սիր
Թովմասը, բոլոր սենեակները մանգալուց ու բաւա-
կան նայելուց յետոյ: Տարեկան որդիան պէտք է վճարել:

—Հարիւր ֆունդ ստերլինդ, ձերդ ողորմածու-
թիւն.—առանց սակարկելու սա դեռ քիչ էլ է,
նայելով այս կողմերում ուտելիքի պաշարի թան-
գութեան:

Այ անպիտան, մտածեց նորից սիր Թովմասը:
Դու երեխաններին կերակրում ես միայն գետնախնձու-
րով և վարսակի հացով, իսկ իւրաքանչիւրից ամե-
նայետինը ութսուն ֆունդ օգուտ ես ստանում:

—Լաւ, ասաց նա. կաեմնուենք: Այս ասելով սիր

Թովմասը գուրս գնաց հայաթից, ձի նստեց և ժա-
նի հետ գնաց տուն:

—Բանը վերջացած է, ասաց նա ճանապարհին
Միստեր Վատերը անկասկած մի խարեբայ է, որ փողի
համար ամեն բան կանէ: Խո չեմ խնայի մի քանի հա-
րիւր Փունդ ստերլինդ: Օրը առանց մի առանձին գէպքի
անցաւ և երեկոյին երբ մթնեց Միստեր Վատերին
բերին ամրոցը՝ սիր Թովմասի մօտ: Նրա զարմանքը
քիչ չէր, երբ տեսաւ, որ Լորդ Էննէլէյն նոյն
ջէնալմէնն է, որ առաւօտը այցելել էր իւր դպրոցին:

—Զերս ողորմածութիւնը բարեհաճեց ինձ կան-
չել.... ասաց նա խորին խոնարհութեամբ:

—Այս, պատասխանեց սիր Թովմասը, ես կամե-
նում եմ ձեզ հետ խօսել: Նստեցէք և պատասխա-
նեցէք ինձ: Առհասարակ քանի տարի են մնում մա-
նուկները ձեր ուսումնարանում:

—Այդպէս մինչև տասնեւորս կամ տասնուշինդ
տարին:

—Եւ կարողանում են շատերը մինչև այդ տա-
րիներն ապրել:

Միստեր Վատերը այս խօսքերը լսելիս՝ դողաց
և զարմացմամբ նայեց սիր Թովմասին: Բայց
նորա ճակատին որ նայեց՝ իսկոյն բոլորովին հան-
գըստացաւ:

—Ե՞ս, ասաց նա անհաստատ կերպով, մահը նո-
ցա մեջ շատ չէ պատահում, սակայն մի քանի երե-
խաններ յաճախ տանջւում են այստեղի սառն կլե-
մայի ազգեցութիւնից:

—Հասկանում եմ, շարունակեց սիր Թովմասը:

Զեր աշակերտները ուսումնարանից դուրս գալուց
յետոյ ո՞ւր են մտնում:

— «Եղա, բացի հարուստներից, որոնք շատ փոքր
են թւով, առհասարակ կամ զինուոր են դառնում
և կամ մտնում են նաւային ծառայութեան մէջ:

— Ուրեմն նոքա ոչինչ կրթութիւն չեն ստանում
ձեզ մօտ, և կամ շատ փոքր:

— Ես անում եմ այն ամենը, ինչ որ միջոցներս
ներում են, Միլօրդ, բայց շատ երեխաներ բոլորո-
վն անհասկացող են լինում:

— Լաւ, հասկանում եմ ձեզ կրկնեց սիր Թով-
մասը: Ես ինքս էլ ունիմ մի այդպիսի անհասկացող
երեխայ, ես շատ կցանկացի նորան մի տեղ տալ:
Նա որբ է, անունը Զօն Սմիտ է. ահա նորա վկայա-
զիքը: Ոչ ոք նորա մասին չի անհանգստանայ. վերջը
նորան ուր կամենաք կարող էք տալ: Տարեկան
կ'ստանաս երկու հարիւր ֆունդ ստերլինգ, լսում
ես—երկու հարիւր ֆունդ. դորա համար ձեզանից
կ'պահանջուի միայն, որ խիստ վարուեք նորա հետ,
նորան տան բագից դուրս չթողնէք, և զրկէք նո-
րան թէ հարեանների և թէ ուրիշ որեիցէ մէկի
հետ յարաբերութիւն ունենալուց: Փողը կ'ստանաք
մինչև տղայի տամնեցրս տարեկան դառնալը, թէ-
պէտև նա այդ հասակին հասնելուց առաջ մեռնէր.
չ'մոռանաք այս: Բացի դորանից, ձեր ուշագրու-
թիւնը պիտի դարձնեմ մի հանգամանքի վերայ:
Նա երբեմն մի տեսակ տկարութիւն ունի, և այն
ժամանակ դուրս է տալի ամեն բան, երեակայում է
թէ ինքը մի կօրդի զաւակ է և այլ այնպիսի բա-

ներ: Երբ նորան այդպիսի մի բան պատահի, իսկոյն
նորան մի տեղ բանտարկեցէք և ամենախիստ կեր-
պով պատժեցէք: Հասկացա՞ք:

Միստեր Վոտերը երկու հարիւր ֆունդի ա-
նունը լսելու պէս՝ ականջները չորս էր շնորհ: Նա
նենգութեամբ ծիծաղեց ու պատասխանեց:

— Լսում եմ, Միլօրդ: Զեր հրամանները ճշտու-
թեամբ կ'կատարուին: Կաշխատեմ արդարացնել իմ
վարկը ձերպ ողորմածութեան առաջ: Ե՞րբ կ'յանձ-
նէք ինձ այն մանկան:

— Հենց իսկոյն: Այսաեղ բեր Զօնին, Ժան:

Մենեկապեալ գուրս գնաց և մի քանի բոպէից
յետոյ բերեց Արտօռբին, որը իւր հայեացքը դէպի
ներքե դարձրեց և չամարձակեց ոչ հօրեղօրը
նայել ոչ Միստեր Վոտերին:

— Այստեղ արի, Զօն, ասաց նորան Թովմասը:
Ահա մի պարոն, որ կամենում է քեզ լուսաւորեալ
մարդ գարձնել: Սորա հետ կերթաս, լսում ես:

— Լաւ, շնչաց մանուկը: Այժմ այս պարոնին
ասա, թէ ի՞նչ է անունդ:

— Ար..... ոչ, Զօն Սմիտ, պատասխանեց դժբարտ
երեխան, վախենալով այն խիստ հայեացքից, որ
ձգել էր նորա վերայ բռնակալը:

— Լաւ, ասաց սիր Թովմասը: Իսկ հայրդ ո՞վ է:

— Եա մեռած է:

— Մայրդ:

— Եա շատ խեղջ է և ինձ չէ կարողանում կե-
րակրել:

— Լաւ, կրկնեց սիր Թովմասը և նորից դարձաւ

զեպի Միստեր Վօտերը: Վեր առեք ձեր սանիկին
և ահա մի տարուայ վարձն էլ: Երբեմն երեխն դո-
րա մասին տեղեկութիւններ կհաղորդես ինձ: Մնաք
բարեաւ: Ես բոլորին հաւաաացած եմ ձեր բարե-
կամութեան:

— Բոլորովին հանգիստ կարող էք լինել Միջը, ես
հասկանում եմ, որ եթէ ևս ձեր բոլոր հրամանները
կատարեմ, ինձ էլ օգտակար են դոքա:

Միստեր Վօտերը խորին խոնարհութեամբ
զլուխ տուեց, Արտուրին ձեռքից բռնեց և դուրս
գնաց: Մանուկը, առանց ընդդիմութեան, բոլորովին
մեքենայաբար հետեւեց նորան, ինչպէս ոչխարը դէ-
պի վենումն: Ժանը ըբաժանուեց նորանից, մինչեւ որ
նա դռներից դուրս գնաց, որ և խկոյն փակեց:

— Ո՞յ էդպէս, այժմ ոչինչերկիւդ չունիս, միմնջաց
ժանը, ուրախ ուրախ ձեռները տրորելով: Այժմ
դու ամբողջ աշխարհից հեռու ես և չես կարող մեզ
վնասել: Միլորդը հանգիստ կ'վայելի մեր խորաման-
կութեան պառողները: Նա ծանր քայլերով վերա-
դարձաւ ամրոցը, ուր յայտնեց իւր տիրօջը, որ Ար-
տուրը արդէն աչքից կորաւ պատի ու երկաթի
վանդակի ետեւը:

— Ուրիմն, ամեն բան վերջացած է, ասաց սիր
Թովմասը, իրան խիստ բաւական ցոյց տալով. ար-
դարեւ մի անսովոր բան կ'լիներ, եթէ մանուկը կա-
րողանար Սնդդիայ վերադառնալ: Միստեր Վօտերը
երբէք չէ դուրս թողնի նորան ուսումնարանի դռնե-
րիցը, որովհետեւ այդ նոյն խսկ իւր օգտին վնաս էր:
Այժմ մենք այլ ևս բան չունենք անելու: Վաղը լու-

սանսալուն պէս՝ այստեղից դուրս կերթանք: Ճանա-
պարհի բոլը պատրաստութիւնները տես: Ես մշտա-
պէս պիտի տեղափոխուեմ Էննէսլէյ — Կաստլ:

Ժամնը ողջունեց ու դուրս գնաց, իսկ սիր
Թովմասը, ամենաբաւական կերպով պառկեց և շու-
տով էլ քնեց:

Իսկ հանգիստ քնեց նա արդեօք:

Ի՞նչպէս իմանեալ:

Ճշմարիտ որ միւս առաւօտ նորա դէմքը սովո-
րականից աւելի գգգոյն էր, նա տկար էր երեւում.
բայց աս կարող էր շատ վաղ ճանապարհորդութեան
հետեւանք լինել: Ամրոցից դուրս գալով նա մի հայեացք
էլ ձգեց այն կողմը, ուր գտնուում էր Միստեր Վօ-
տերի պարսպապատ ուսումնարանը, և յետոյ թեք
ընկաւ կառքի բարձի վերաց:

— Քչեր, գոչեց սիր Թովմասը կառափարին և
կառքը սահեց ու անյայտացաւ ոլորուն ճանապարհ-
ների մէջ:

Ո՞նք էլ առժամանակ կթողնենք սիր Թովմա-
սին և կ'գառնանք դէպի խեղճ խաբուած Արտուրը:

Գլուխ Եօթները:

Փամ իւ չելը:

Սիր Թովմասի և մանաւանդ նորա սենեկապետ
Փանի խիստ վարմունքը Արտուրի հետ, դարձ-
րեց սորան բոլորովին հնագանդ: Նա առանց բոլո-

բովին ընդդիմանալու, առանց մի խօսք անգամ ա-
սելու հնազանգուեց հօրեղբօր հրամաններին, լուռ
ու մունջ անտրտունջ Միստէր Վօտէրի հետ գնաց
ուսումնարան, անտրտունջ շորելը հանեց և ան-
տրտունջ պառկեց կոպիտ անկողնում, որ ցոյց տուին
նորան դպրոցի ընդհանուր ննջարանի մէջ։ Նա միւս
առաւօտ մի հետաքրքրութեան առարկայ դառաւ
իւր նոր ընկերներին, որոնք շրջապատեցին և ամեն
կողմից նայում էին նորան, առանց խօսելու նորա-
հետ։ Նոքա այսպէս էին վարդում ամեն նորեկի հետ,
այսպիսի անխոհեմութեամբ ցանկանալով վրէժ-
ինդիր լինել իւրեանց խիստ վերատեսչին, որ առհա-
սարակ ընդունում էր ամեն նորեկներին իւր հովա-
նաւորութեան տակ և նոցա անպատուելու համար
խիստ պատճում էր ուրիշ մանուկներին։ Սակայն
խեղճ նորեկը երբէք չէր համարձակում գանգա-
տուել Միստէր Վօտէրին, նորան ծեծելով հոգին
կ' հանէին. և առհասարակ տղէրիքը չէին համբերում
այն մանուկներին, որոց յաճախ պաշտպանում էր
վերատեսուչը։ Նատ ժամանակ էր ինչ Միստէր Վօ-
տէրի սանիկները նորեկներին չարչարելու բաւակա-
նութիւն չէին ունեցել, գորա համար էլ խիստ մեծ
բարկութեամբ սկսեցին չարչարել իւրեանց նոր զոշին։

Միստէր Վօտէրը առաւօտը վաղ մտաւ տղայոց
ննջարանը և զարթեցրեց նոցա։ Արտուրը միւսների
հետ 'ի միասին զարթնեց, բայց ոչ մի կերպ չ'կա-
րողացաւ հագնել այն շորերը, որ զբուած էր նորա
մահճակալի մօտ զբուած սեղանի վերայ։ Դա այն
բաճկոնը չէր, որով երեկ ուսումնարան մտաւ, այլ

մի ուրիշ, որ կարուած էր կոպիտ բրդէ կտորից։
Արտուրը չ'գիտէր ինչ անէր և շփոթուած նայում
էր երբեմն այն բաճկոնին և երբեմն իւր ընկերնե-
րին, որոնք ծաղրելով շրջապատել էին նորան։
— Դեհ, շուտ արա, աղաղակեց մինը։ Երեխ դու
ամեն օր քո հանդերձն ես կամենում հագնել։

Այս խօսերին հետեւեց տղայոց բարձրաձայն
ծիծաղը։ Արտուրը բոլորովին շփոթուեց և վերջա-
պէս լաց եղաւ։

— Զէ՞ որ այս իմ հանդերձս չէ, ասաց նա լաց
լինելով։

— Տեսէք է, սա վախենում է, ուսումնարանական
բաճկոնից, գոչեց ձայնը։ Ա'յ քեզ իւրօք տղայ, սա
զգում է, որ իւր առաջ ոչինչ լաւ ապագայ չկայ։
Բան չկայ, սիրելիս, այստեղ քեզ ուրիշ հանդերձ չեն
տալ, ուստի և պէտք է զորանով բաւականանալ։
Արտուրը լուռ ու մունջ հնազանդեց։ Բայց նա
սովոր չէր ինքն իրան հագնելու, տանը միշտ ծա-
ռան էր հազբնում։ այդ բանի մէջ նա շատ գան-
գաղ էր։ Տղայքը առաջուանից աւելի սաստիկ սկսե-
ցին ծիծաղել։ Մէկը նորա քիթն էր ձգում, միւսը
ականջը։ Արտուրը չ'հակառակեց նոցա, մինչև ան-
գամ չ'պաշտպանուեց, ընկերները չարչարեցին նո-
րան, մինչև որ վերջապէս իրանք դադրեցան։

— Ե՞հ, դա ցնորուած է, թողէք զրան, գոչեց
մէկը։

— Ի՞նչ յիմարութիւն, աղաղակեց միւսը, թէ-
պէտե ցնորուած է, սակայն կարող է կոշիկներս
մաքրել։ Այստեղ արի, ի՞նչ է անունը։

— Զօն Սմիա, պատասխանեց խեղճ աղան հազիւ
ըսուող ձայնով:

— Զօն, դեհ լաւ. Զօն, այստեղ արի: Դեհ, խուլ
ես ինչ է. երբ կանչում են՝ արի էլի:

Արտուրը տեղից շարժուեց: Յանկարծնա այն
մեծ յիմարների մէկից մի լաւ ապտակ ստացաւ
գէմքին:

— Քեզ որ ասում են՝ լսիր. ականջներդ ո՞ւր են,
գոչեց վերջնը: Այստեղ արի ու կոչեներս սրբիր:

Արտուրը երկիւղով նայեց նորան:

— Ես չեմ կարող այդ անել ես այդ երեք չեմ
արել ասաց նա:

— Տեսնում են, ծաղրելով գոչեց առաջինը, չես
կարո՞լ. երեի Լօրդի զաւակն ես գու, կես զիւժին
ծառաներ ես ունեցել որ քեզ հազցրել են, այն-
պէս չէ: Ճշմարիտ է, իսկ և իսկ այդպէս ես եղել
գու, զանգաղ ու յիմար:

Արտուրը վայրացաւ, երբ ստացաւ հարուածը.
Նորա գէմքը կարմիր վարդ դառաւ. նա այդ ան-
պատռութեան փոխարէնը կհատուցանէր, սակայն
տեսաւ, որ անօգուտ կլինէր: Խեղճը տասն և հինգ
տղայոց գէմ ոչինչ չէր կարող անել: Բայց այժմ, երբ
նոքա սկսեցին աւելի խիստ ծաղրել նորան, նա չը
համբերեց և կամակորութեամբ աղաղակեց.

— Այսո, ես Լօրդի զաւակ եմ. հայրս հարուատ
Լօրդ Էննէսլէյ է:

Կորա ընկերները գարմացան և իւրեանց ա-
կանջներին չին հաւատում: Բայց առաջ քան թէ
նոքա կ'կարողանային իւրեանց գարմանքը արտա-

յայտել բարձր ձայնով, երեաց Միստեր Վօտէրը,
որի մօտենալը նոքա շատ գարմանալուց չկարողացան
նկատել:

— Ի՞նչ ասացիր այժմ, որդիս, հազցրեց վերա-
տեսուչը Արտուրին. գու Լօրդի զաւակ ես. կարծեմ
դու ասացիր այս, այնպէս չէ:

— Այսո, պատասխանեց մանուկը, Ճշմարիտ է, ես
Լօրդի զաւակ եմ:

Միստեր Վօտէրը բարձր ձայնով ծիծաղեց:

— Ուրիմն ցնորդդ այդպէս շուտ է սկսւում, պա-
տասխանեց նա: Ինչպէս երեւում է, քեզ այստեղ բե-
րող պարոնի խօսքերը Ճշմարիտ են եղել: Նա ինձ
յայտնեց, որ ժամանակ առ ժամանակ գու ցնոր-
ւում ես և որ այդ ժամանակ ինչ ասես գուրս ես
տալի: Տես, զգուշացիր, բարեկամ: Ի՞նչպէս ասու-
ցիր, ինչ է անունդ:

— Անունս է Արտուր Էննէսլէյ, համարձակ պա-
տասխանեց մանուկը. իմ հայրս Էննէսլէյ Լօրդն է
և բնակւում է Էննէսլէյ-Կաստլի մէջ: Ես էլ չեմ
ուզում այստեղ մնալ, ուզում եմ գնոլ հօրս մօտ:

— Ճշմարիտ է, միանգամայն Ճշմարիտ է, սորան
մի բան է պատահէլ ինքն իրան ասաց Միստեր
Վօտէրը: Սորան պիտի սառն բաղնիք տանել գու-
ցէ այն ժամանակ խելքի գայ: Սամ, գոչեց նա բար-
ձրը ձայնով, այստեղ արի: Դուռը բացուեց, և մը-
տաւ այնտեղ մի բարձրահասակ ու լայնաթիկունք
գիւղացի մարդ: Նորա ձեռքին էր ուսումնարանի
վերատեսչի կատարողական իշխանութիւնը, մանուկ-
ները գողում էին նորանից, որովհետեւ նոցանում

մէկը չկար, որ փորձած շլնէր իւր վերայ Վօտերի
հրամանների այս արժանաւոր կատարողի ձեռքերի
ոյժը:

— Ամ, ասաց Վօտերը: Վերառ այս տղային ու
ջրհանի տակ զիր և խաչիր, մինչև խելքի գայ:
Յետոյ տասնեհինդ հարուած տուր մտակով և մի
օր ու գիշեր բանտարկիր: Ես այնպէս եմ կարծում,
որ այս միջոցները կօգնեն դորան:

Սամը առանց խօսելու մօտեցաւ Արտուրին,
որը երկիւղից աղաղակեց, մի բոպէի մէջ կապեց
նորա ձեռներն ու ոտները, այնպէս, որ նա չէր կա-
րողանում շարժուել և դուրս տարաւ նորան: Միտ-
եր Վօտերը և բոլոր աշակերտները հետեւցին նո-
րան: Արտուրին պառկացրին գետնի վերայ այնպէս,
որ նորա գլուխը զրած էր ուղղակի ջրհանի տնցքի
տակ: Սամը բռնեց նորա կոթը և յանկարծ Արտու-
րի զլիսին սառցի պէս սառը ջրի արուակ թափուեց:
Խեղճ տղան շնչառապառ եղաւ և սկսեց ողբագին ձայ-
ներ արտայայտել: Մի քանի բոպէ շարունակուեց այս
փորձը, յետոյ Սամը, Միտեր Վօտերի նշանով, թո-
ղեց ջրով չարչարելը: Արտուրը գունատ ու կիսամեռ
պառկած էր գետնին ու հազիւ էր շնչում:

— Դեհ ի՞նչէ, որդիս, խելքի՞ն եկար թէ չէ, ծաղ-
րելով հարցրեց վերատեսուչը: Այժմ կասես ինձ քո
իսկական անունը:

— Զօն Սմիտ, գուեց Արտուրը:

— Լաւ, լաւ, սիրելիս, այ եղակս, ասաց Միտերը
Վօտերը: Ես արդէն գուշակեցի, որ դու կ'ուշաբե-
րուեիր: Սառը ջուրը հրաշալի զօրութիւն ունի խել-

քի բերելու: Բաւական է, Սամ, յետ արա սորա
կապանքները և մի ամբողջ օրուգիշեր անհաց ու
անջուր բանտարկած պահիր: Այդ աւելի լաւ կ'օգ-
նէ բոլորովին ուշքի գալուն:

Սամը լրութեամբ հնազանդուեց իւր հրամա-
նատարին և փակեց Արտուրին մի սենեկում, ուր ոչ
մահճակալ կար և ոչ նատարան: Խեղճ տղան ամբողջ
քսան և չորս ժամը բաց գետնի վերայ պիտի անց-
կացնէր: Երբ նորան միւս օրը բաց թողին, նորա
գեմքի վերայ երեկուայ համարձակութեան հետքն
անգամ չէր երեւում:

Առաջն հայեացքից կարելի էր նշմարել որ
նա ամեն ընդգիմութիւնից խորշում էր: Միտեր Վօ-
տերը բաւականութեամբ նկատեց այս, սակայն մի
անգամ էլ հարցրեց նորան իւր անունը ասելու:
Յարգելի վերատեսուչը իւր ցանկացած պատասխանը
ստանալով իւր սանիկի զլիսին ձեռը քսեց ու ասաց.

— Գնա ընկերներիդ մօտ ու զգուշացիր միւս
անգամ աւել պակաս խօսելուց: Այժմ արդէն գիտես,
թէ զա ի՞նչ հետեւնք է ունենում:

Արտուրը լրու ու մունջ հնազանդեց և լր-
ութեամբ տանում էր այն ծաղրածութիւններն ու
անարդանքները, որ նորից սկսեցին բերել նորան իւր
ընկերները:

Խեղճ երեխան սկսեց այժմ զարհուրելի կեանք
վարել, նա ամենի ստրուկ գարձաւ և այս ամենը
մի տեսակ մռայլ սառնասրտութեամբ էր տանում,
որովհետեւ գիտէր, որ ոչ ոք չէ օգնի իւրեան: Միտ-
եր Վօտերը արհամարհանքով էր վարւում նորա

Հետ և համարեա բոլորովին չէր հոգում նորա մասին: Նորան ուսուցանելու խօսք անգամ չկար— Արտուրին մինչև անգամ դասառանն էլ չէին թողնում: Միստրիս Վատէրը նորան իւր խոհարար դարձրեց: Բացի դորանից նա պարտաւոր էր կրակ վառել Ծուր բերել ամաններ ու գանակներ սրբել, և առ հասարակ կատարում էր տան ամենաստոր պաշտօնաները: Ուտելու նորան միայն մնացածներն էին տալիս: Եթէ բան չէր մնում, որ շատ յաճախ էր պատահում, նա սոված էր մնում: Բացի դորանից, ընկերները ստիպում էին Արտուրին իրանց շրերն ու կոռչիները մաքրել խոկ Միտէր Վատէրը անսարքեր նայում էր սորա վերայ և երբէք չէր մտածում խեղճ նորեկին պաշտպանելու: Եթէ Արտուրը չէր կատարում նոցա կամքը, այն ժամանակ նոքա անխնայ ծեծում էին նորան: Նորան երբէք չէր թոյլ ուրում նոցա խաղին մանակցելու:

Այսպէս անցաւ երկու թէ երեք տարի: Արտուրը գեռ էլ այս գրութեան մէջ էր և անտարակոյս նորա վիճակը երբէք չէր փոխուի դէպի լաւը, եթէ մի հանգամանք չպատահէր, որ մեծ ազգացութիւն ունեցաւ նորա ամբողջ ապագայի վերայ:

Միտէր Վատէրի ուսումնաբանը մտաւ մի տասնեհինգ թէ տասնեվեց տարեկան նոր աշակերտ: Դա Իրլանդիայի մի զիւզացի Բրիւսի որդին էր: Նա պիտի կարդալ—զրել սովորէր, որ յետոյ օգնէր իւր հօր հաշիւները պահելու, որ մի հարուստ մարդ էր:

Գէորգը— այս էր նորա անունը—բարձրահասակ

և առողջ երիասարդ էր. նորա ջղոտ ձեռները մի սնբնական քաջութիւն էին ցոյց տալիս, իսկ նորա երեսի վերայ արտայայտում էր բարեսրտութիւն և կարեկցութիւն: Հին աշակերաները իրանց սովորութեան համաձայն սկսեցին կտուակել և ծաղըել նորան: Գէորգը առանց խօսելու նրանցից երկուսին վկից բռնեց, մէկին մի լաւ հարուած տուաւ շնչին, իսկ միւսին ստով դեն ձգեց այնպէս, որ նա մի քանի քայլ գէն ընկաւ: Յետոյ երլորդին բռնեց և բողազին հուփ տալով սկսեց խեղանել այնպէս որ նա սկսեց օգնութիւն խնդրել: Գէորգը խկոյն կանգնեց և ծիծաղելով ասաց:

—Այժմ ինձ ճանաշում էք, աղայք, և ես յոյս ունիմ, որ այսուհետեւ ձեր յիմարութիւններով չէք ճանձրացնի ինձ:

Այսպէս Գէորգ Բրիւսը մի հարուածով ապահովացրեց իւրիան ապագայում իւր ընկերների կողմից և ստիպեց նոցա վախենալու իւրմանից:

Ի հարկէ Գէորգին հենց սկզբից խորթ թուաց, որ Արտուրը ամենքին սորկի պէս էր ծառայում և ծեծ ու հայհոյանք էր կրում նոցանից: Նա խղճաց խեղճ տղային և վճռեց նորան իւր հովանաւորութեան տակ առնելու:

Մի անգամ Արտուրը նստած էր հեռու դռան անկիւնում իւր սովորական ճաշի, որ կազմում էր մի ամսն անհամ արգանակից, մինչդեռ միւս տղայք խաղում էին ու վազվացում Միտէր Վատէրի պարտիզում: Գէորգը մօտեցաւ խեղճ մանկան և կարեկցութեամբ հաղցրեց նորան:

— Ինչո՞ւ դու ել չես խաղում և չես վազվզում
միւսների հետ:

Արտուրը ափշած նայեց Գէորգի բարեսիրտ ու
բաց դէմքին: Նա խիստ զրդուուած էր իւրեան ան-
ձանօթ պատանու փաղանքշանքներով, որովհետեւ
իւր երեքամեայ աշակերտութեան միջոցին Միստէր
Վատէրի մօտ՝ ոչ մի քաղցր խօսք չէր լսել: Խեղճի
աչքերից արտասուք կաթեցին և նա վախով պա-
տասխանեց:

— Ես չեմ համարձակում նոցա մօտենալ—նորա
ինձ կծեծեն ու դուրս կանեն:

— Ո՛հ, եթէ ես քեզ հետ լինեմ, նոցանից ոչ
մէկը չեմ համարձակի քեզ անարգել ասաց Գէորգը
հաստատութեամբ: Բայց ես նկատում եմ, որ քեզ
հետ առհասարակ շատ վատ են վարւում: Այդ ին-
չեցն է: Մի յանցանք հօ չեմ գործել ընկերներիդ
մօտ:

— Ո՛չ ոչ, պատասխանեց Արտուրը արտասուե-
լով: Նոքա ուզում են միայն ինձ մինչի մահ չարչա-
րել աւելի ոչինչ:

Կա դառնութեամբ լաց եղաւ:

— Խեղճ տղայ, խեղճ երեխայ, ասաց Գէորգը ա-
ւելի քաղցր ձայնով: Հանգստացիր, սիրելիս: Եթէ
դու մի վատ բան չես արել ուրեմն ես այ-
սուհետեւ իմ հովանաւորութեան տակ կվերցնեմ քեզ
և կ'պաշապանեմ քեզ. Ել մի լաց լինիր: Պատմիր
ինձ, ով ես դու և ո՞րտեղացի ես:

Կա այնպիսի քաղցր ձայնով էր խօսում
ու այնպէս քաղցրութեամբ ձեռը քսեց աղայի գու-

նատ ու նիշար այտի վերայ, այնքան բարի էր
թւում, որ Արտուրը շուտով հաւատ ընծայեց
նորան:

— Լաւ, ես կ'պատմեմ քեզ ամենը. միայն խոս-
տացիլ ոչ ոքին չասել այն. եթէ Միստէր Վոտէրն
իմանայ, իսկոյն ջրհանի տակ կ'դնի ինձ. իսկ այս
զարհուրելի է:

— Ջրհանի ամկ, այդ ի՞նչ է նշանակում, հարց-
րեց Գէորգը հետաքրքրութեամբ. բայց այս հետա-
քրքրութիւնը զարհուրանքի ու ատելութեան փո-
խուեց, երբ Արտուրը նկարագրեց այն չարչանք-
ները, որ նա պիտի կրեր:

— Այդ տմարդութիւն է, այդ զգուելի բան է,
աղաղակից շփոթուած պատանին: Բայց ասա ինձ,
ինչի՞ համար են քեզ այդպէս չարչարում: Արտուրը
կպաւ նորա կրծքին և ահուգողով համարեա շշն-
չելով սկսեց պատմել: Նա ոչինչ չը թագցրեց Գէոր-
գից. պատմեց նորան, թէ ինչպիսի ստոր խարէու-
թիւն գործ դրեց նորա հօրեղբայրը, որպէս զի նո-
րան իւր ցանցի մէջ ձգի, ինչպէս նորան բանար-
կեց, ինչպէս վախեցնում էր սպառնալիքներով և
ինչպէս վերջապէս տուաւ նորան Միստէր Վոտէրի
ուսումնարանը: Բարի Գէրգը իւր ականջներին չէր
հաւատում, կալծում էր, թէ այս բոլորը երազումն
է լսում և աշխատում էր տղայի պատմածներից ոչ
մի խօսք անուշադիր չթողնել:

— Միթէ այս բոլորը ծշմարիտ է. Տէր իմ Աս-
տուած. խոստովանւում եմ, որ ես ոչ մի կերպ չեմ

Երեակայել, թէ աշխարհումն կարող էին այդպիսի
չար մարդիք լինել:

— Բոլորը ծամարիտ է, Գէորգ, պատասխանեց Ար-
տուրը ծանր հառաջելով: Երանի՛ թէ կարողանայի
այստեղից ազատուել իսկ յետոյ ևս ինքս կ'գտնեմ
հօրս ամրոցը. միայն նորա զբկում ես կարող եմ խիստ
հօրելքօրս դէմ պաշտպանուել:

— Եթէ բանը միայն դորա մէջ է, ասաց Գէորգը
քաղցրութեամբ, ուրեմն արդէն աղատուած ես: Ես
քեզ կ'օգնեմ այստեղից դուրս գալուն, բայց ինքս
բացի դորանից ոչինչ չեմ կարող քեզ անել: Այլ գի-
տե՞ս ինչ է, գարձիր հօրս: Նա այստեղից շատ հե-
ռու չե կենում, նորա տունը գիտեար չէ գանել:
Նորան բողոքվին կարող ես հաւատալ և նա ան-
պատճառ կ'օգնէ քեզ: Խեղճ աղայ. ի՞նչպէս խիստ
են վարվում նոքա քեզ հետ: Այո, դու անպատճառ
պիտի փախչես, որքան շուտ՝ այնքան լաւ: Կաշխա-
տեմ այս զիշեր դուրս տանել քեզ: յցադ ինձ վերայ
դիր: Այստեղ էլ չես կարող մնալ քեզ իրաւ որ այն-
քան կ'տանջէին, մինչեւ որ կըմեռնէիր: Ու ոքի բան
մի ասիր—կէս զիշերին դու ազատ կ'լինիս, թէչ ու
ես Գէորգ Բրիւսը չեմ լինի:

Կա վերկացաւ և Արտուրին թողեց միայնակ:
Աերջինը երկար նատած էր իւր առաջուայ աեղք մի
տեսակ հիացած դրութեան մէջ, նորան թւում էր,
թէ այս բոլորը երազ էր, նա չէր կարողանում այս-
պիտի մերձակայ ազատութեանը հաւատալ: Բայց յե-
տոյ Արտուրը խելքի եկաւ, ներկայացրեց իրան, թէ
որքան հածելի կինի հօրը գրկել հայրը ինչքան

կուրախանայ, երբ կիմանայ, թէ որպիսի տանջանք-
ներից է ազատուել իւր որդին: Խեղճ աղայ. նա զեռ
ևս չգիտէր, որ իւր հայրը վաղուց արդէն գերեզ-
մանումն էր և մտածել անզամ չկարողացաւ, որ էն-
նէլէյ—կասալ գնալով, նա ուղղակի մտնում է վայ-
րի գաղանի բերանը, և որ ուղղակի կ'ընկնի իւր
հօրելքօր, նոր էննէլէյ և օրդի ձեռքը:

Արտուրը անհամբերութեամբ սպասում էր
միժնելուն և նորա կուրծքը աւելի խիստ սկսեց զար-
կել երբ նա իւր ընկերների հետ պառկեց քնելու:
Նորա ներքին ալեհօծութիւնը այնքան մեծ էր, որ
չկարողացաւ աչքերը կացնել թէպէտ և շատ
ուզում էր այդ, որովհետեւ զիտէր, որ միւս օրը եր-
կար ծանապարհորդութիւն պիտի անէր և որ, այժմ
առանձին կարևորութիւն ունի իւր ոյժերի: Արտուրը
առանց քնելու պառկած էր մահմակալի վերայ և
վախով տկանջ էր դնում իւր ընկերների շնչառու-
թեան ձայնին, որոնք խորը քնած էին: Կէս զիշերի
մօտելքը նա թեթև քայլերի ձայն լսեց. և խկոյն
բարձրացաւ:

— Արտուր, քնած չե՞ս, ցածր ձայնով հարցրեց
մի ձայն:

— Ու պատասխանեց Արտուրը, նոյնպէս ցածր:

— Եաւ, վերկաց ու հագնուիր. ամեն բան պատ-
րաստ է: Արտուրը կամաց վերկացաւ անկողնից և
շտապով հագնուեց. նա իւր կոշիկները բռնեց ձեռ-
քին, որպէս զի աղմուկ շանի նորանով որով կա-
րող էին ընկերները կամ ով և իցէ զարթնել:

— Դեհ, գնանք էլի, շնչաց Գէորգը:

Արտուրը մօտեցաւ Գէորգին: Սա բռնեց նորան ձեռքից և զգուշութեամբ դուրս արաւ նորան զահլիճից նախասենեակը: Այստեղ նոքա սանդխտով ներքև իջան և դուրս գնացին: Նրկուսն էլ շտապով դուրս գնացին դոնից գէպի բակի դուռը: Գէորգը բաց արեց այն մի բանալիով, որ զրպանից հանեց և Արտուրին դուրս թողեց:

— Այժմ բոլոր ուժովդ վազեր, սիրելիս, ասաց նա: Միշտ ուղեղ գնա, մեծ ձանապարհով, մինչև որ գիւղին կհասնես: Զախ կողմի երրորդ տունը հօրս է պատկանում: Պատուհանը թխկթիւկացրու և խոփյն ներս կթողնեն քեզ: Բարեկիր իմ կողմից հօրս և ասա, որ ես առողջ եմ:

— Խակ դու, Գէորգ, Ասաց Արտուրը—քեզ էլ անկարելի է այստեղ մնալ. քեզ չե՞ն պատժի, երբ իմանան, որ ինձ փախցրել ես:

— Երբեք ոչ ոք չե իմանայ այդ, պատասխանեց Գէորգը: Ես Սամին մի շեշ փառաւոր օղի խմացրի և այդպէս հարբած ժամանակ նորա զրպանից հանեցի բակի դռան բանալին. Սամը այնքան հարբած է, որ յիրաւի մինչի առաւօտ չե արթնանայ. Եթէ նա կասկածի էլ այնուամենայնիւ ինձ չե կարող մատնել, որովհետեւ ինքը ձեռիցս խլեց զինին: Սանաւանդ որ ես այստեղ երկար մնալու չեմ: Երբ հայրս քեզանից կիմանայ, թէ ի՞նչպէս են այստեղ երեխաների հետ վարւում, անպատճառ իսկոյն դուրս կտանի ինձ և մի ուրիշ ուսումնարան կտայ: Վասնորոյ դու իմ մասին հանգիստ կաց, իսկ լաւ մտածիր քո սեպհական ապահովութեան մասին:

— Շնորհակալ եմ, շնորհակալ բարի Գէորգ, առաց Արտուրը զգացմունքով և կացնելով իւր կրծքին բարեգործ ու քաջասիրա պատանու ձեռքը: Աստուած վարձատիրէ քեզ այն ամենի համար, ինչ որ դու ինձ խեղճիս համար արեցիր:

— Դեհ, լաւ, բարեկամ, քաղցրութեամբ պատասխանեց Գէորգը: Շտապիր, չպէտք է ժամանակ կորցնել: Բարի ճանապարհ եմ ցանկանում քեզ:

Արտուրը մի անգամ էլ սեղմեց նորա ձեռքը և յետոյ արագ քայլերով գնաց գէպի գիւղը: Մի ժամ ճանապարհորդելուց յետոյ նա շների հաշելու ձայն լսեց. սորանից իմացաւ, որ գիւղը հեռու չէ արդէն: Նա շուտով մօտեցաւ առաջին տանը, անցաւ երկրորդը և վերջապէս կանգնեց երրորդի մօտ և պատուհանը բաղիւց:

— Ո՞վ է, տան ներսից հարցրեց մի ձայն:

— Գէորգ Բիրիւսից լուր, պատասխանեց Արտուրը: Իսկոյն տան ներսը աղմուկ լսուեց: Դուռը բացուեց և Արտուրը մտաւ տան շեմքը, ուր պիտի գտնէր հիւրընկալութիւն և պաշտպանութիւն:

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՒՐԴ

Պատնութիւն և վաճառումն:

— Արդարեւ, որ դա զգուելի ու տմարզի բան է, սիրելիս, գոչեց ծերունի Բիրիւսը, երբ Արտուրը միւս առաւելա պատմեց նորան բոլոր իւր գլխի անցածը:

Քո ասածների մէջ բոլորովին չեմ կասկածում ես և
շատ սիրով կանեմ այն ամենը, ինչոր ձեռից դուքս
կ'գայ: Քեզ փող ու ուրիշ շոր է հարկաւոր, որով
հետեւ այդ ուսումնարանական հանդերձով քեզ կրըս-
նեն ու կտանեն Միստէր Վասերի մօտ: Բացի դորա-
նից դու պիտի ու ղերուես Անգլեայ: Այդ բոլորը
ես կանեմ: Ես մի ծանօթ ձկնորս ունեմ, որը շատ
սիրով կհամաձայնէր քեզ իւր նաւակով անցկացնելու
նեղուցը. իսկ մեր տանը Գէորգի փոքր ժամանակուայ
շորեր շատ կան: Ցերեկը պիտի իմ անակումն մնաս
դու և ոչ միանդ դուրս չգնաս, որովհետեւ քեզ ան-
պահառ կորունին գիւղումը, իսկ այստեղ ոչ ոք չէ
մանի: Երբ կմթնի, կտանեմ քեզ ձկնորսի մօտ: Իսկ
Անգլեայ. համանելուցդ յետոյ դու պիտի հոգաս քո
մասին:

—Ո՛հ, դժուար չելինիլ հօրս ամրոցը զանել,
ասաց Արտուրը: Մեծ և գեղեցիկ ամրոց է, և շա-
տերին յայտնի:

—Շտատ գեղեցիկ. այժմ հաց կեր և հանգստացիր մի
փոքր, որպէս զի երեկոյին ոյժդ վըեզ լինի, ասաց
բարի գիւղացին: Իսկ ես իսկոյն պիտի զնամ ուսում-
նարան և Գէորգիս դուրս բերեմ այն տեղից: Քո
պատմութիւնից տեմնում եմ, որ նա էլ լաւ հալի
չելինի: Ես տան դուռը կողպէքով կ'փակեմ, որպէս
զի ոչ ոք չկարողանայ այստեղ մանել իմ բացակա-
յութեան ժամանակ: Քեզ էլ խորհուրդ եմ տալիս
պատուհանի մօտ չգնալ, որովհետեւ քեզ կարող են
Միսից աեսնել և այն ժամանակ զարձեալ պիտի հրա-
ժարական տաս ազատութեանդ: Ուստի զգոյշ կաց,

սիրելիս: մնաս բարեաւ, ես շուտ կ'վերադառնամ
Դէորգի հետ:

Արտուրը դողաց, մտածելով թէ դարձեալ Միս-
տէր Վօտէրի ձեռքը կ'ընկնի, և խոստացաւ բարի
Բրիստի բոլոր ասածները կատարել: Երկու ժամից
յետոյ ծերունի Բրիւսը վերադարձաւ իւր որդու
հետ, որ շատ ուրախացաւ Արտուրին տեսնելով:

—Ուսումնարանից փախչելի ընդհանուր սարսափ
ձգեց այնտեղ, ասաց նա տղային: Միստէր Վօտէրը
բարկութիւնից խելքը զիւխին չէ, սպառնումէ Սամին
սպանելու և ոչ մի կերպ չե կարողանում իմանալ,
թէ ինչպէս յաջողուեց քեզ դուրս ոլքուել: Ես, ՚ի
հարկէ, զգուշացայ ասելու մեր յարգելի վերատեսչին
այդ և շատ ուրախ եմ, որ ինքս էլ դուրս պրծայ
այդ գարշելի ուսումնարանից: Էլ մի շփոթուիր, սի-
րելիս: Չնայելով, որ Միստէր Վօտէրը, Սամը և էլի
մի քանի մարգիք որոնում են, այնուամենայնիւ նո-
ցանից ոչ մինը չե կարող դժնելքեզ: Նոցա մոքովն
անգամ չե անցնի, թէ դու հօրս մօտ ես թագ կա-
ցած, իսկ երբ արդէն կյաջողի քեզ Անգլեայ վերա-
դառնալ, այնժամանակ էլ ոչինչ չե կարող անել:

Պակայն ծերունի Բրիւսը հարկաւոր համարեց
Արտուրին մինչի երեկոյ վերնատանը թագնել, ուր
նա ժամանակը անցկացըց Դէորգի հետ խօսելով
զուարձալի բաների վերայ և այդպիսով չ'զգաց՝ թէ
ինչպէս անցաւ օրը: Երբ մթնեց, ծերունի Բրիւսը
Արտուրին դուրս բերեց և հազցրեց նորան Դէորգի
հին շորերը: Բացի դորանից բարի ծերունին զրեց
նորա զրպանում 12 չելինիք, առւեց նորան ճանա-

պարհի համար պանիք, մի մեծ կտոր հայ, և առաջարկեց իւր հետ ճանապարհ ընկնել դէպի ծովը:

Ավք բաւական հեռու է, ասաց նա, պէտք է շտապել որպէս զի կարողանանք այնտեղ իմ կոքահօրը գտնել:

Արտուրը ամեն բոպէ պատրաստ էր բարի ձերունուն հետեւելու: Նա ողջունեց Գէորգին և ուրախ հոգւով գնաց իւր պաշտպանողի հետ: Նոքա երկու ժամից հասան ափին, որի մօտ շինուած էր ձկնորսի փոքրիկ տնակը: Վերջինը սիրով համաձայնեց Բրիւսի խնդիրը կատարել և վճռեց իսկոյն և եթ փոխարրել մանկան Անդղիայի ափը:

—**Այժմ** յաջողակ քամի է, ասաց նա, պէտք է շտապել:

Նա հագաւ բրդից գործած շորը, ձեւց իւր ու Արտուրի վերայ մի բրդէ վերմակ, որ պիտի պաշտպանէր նոյա ցրտից ու գիշերուայ օդից և մօտեցաւ ափին, ուր կապած էր նորա ձկնորսական նաւակը: Արտուրն ու Բրիւսը հետեւեցին նորան:

—Գնա Աստծովի, որդիս, ասաց ծերանին, ցանկանում եմ, որ յաջողութեամբ հասնես հայրական տանդ: Մնաս բարեւաւ և մի մոռանար ինձ ու իմ Գէորգին:

Ես միանգամ էլ հոմքուրեց մանկան ճակատը և օգնեց նորան նաւակը մանելու, որի առագաստները արդէն բարձրացրած էին: Փոքրիկ նաւակը գնաւակի պէս սահեց ծովի վերայով և կտրեց ալիքները: Նոքա շուտով Անդղիայ համան և Արտուրը ուրախութեամբ ոտք կոխեց իւր հայրենի երկիրը:

Նորան դժուար չէր թւում էննէլէյ-Կաստլին հանելը, ուստի և միամիտ սրտով անցնում էր մեծ ձանապարհ:

Զինի ճաշուն չորս ժամն էր, ելք Արտուրը ափին հասաւ: Մօտ երեք ժամ ճանապարհորդելով նա հասաւ մի փոքրիկ զիւղի: Որովհետեւ արդէն սկսել էր մթնել, Արտուրը վճռեց այդտեղ զիշերել: Նա առանց մի մեծ զժուարութեան գտաւ մի փոքրիկ հիւրանոց, ուր խկոյն ներս թողին նորան: Նա սկսեց հարցնել պանդոկատիրօջ և երկու, երեք հիւրերին, որոնք այնտեղ օղի էին խմում, էննէլէյ-Կաստլի ճանապարհի մասին: Բայց ոչ պանդոկատերը և ոչ էլ հիւրերը կարողացան բաւարար պատասխան տալ նորան:

Ոչինչ, մտածեց Արտուրը, միշտ առաջ ու առաջ կերթամ, վերջապէս մէկը կ'գտնուի, որ իմանայ էննէլէյ-Կաստլի ճանապարհը: Նա զիշերը հանգիստ քնեց և միւս առաւօաը նորից ճանապարհ ընկաւ: Արտուրը գնումէր պատահած կողմը և իւրաքանչիւր պանդոկում հարց ու փորձ էր անում էննէլէյ-Կաստլի մասին, բայց այդ օր էլ նա ոչ մի տեղ բաւարար պատասխան չ'ստացաւ, նոյնպէս անցան և երկրորդ ու երրորդ օրերն էլ: Նորա քաջութիւնը փոքր առ փոքր սկսեց թուլանալ, նորա քսակը սկսեց հեղմեաէ թեթեանալ և վերջապէս մի առաւօտ ստիպուած էր իւր վերջին շելինը հատուցանել գեշերելու ու նախաձաշի համար:

Այժմ Արտուրը աղքատ էր. նորա կեանքը միանգամայն կախուած էր օտարների ողորմածու-

թիւնից: Սակայն նա գեռ բոլորպին չյուսահատեց: Աւելի լաւ է քաղցի ու ծարաւի համբերեմ, միիթարում էր ինքն իրան Արտուրը, աւելի լաւ է ամբողջ Անգլիան մանդամ Ճանապարհից ուռած ոտներով, բարի մարդոց գաների մօտ մի կառոր հաց կմուրամ, բայց երբէք չեմ վերագառնայ ուսումնարան, —ոչ, աւելի լաւ է մեռնել Նա սկսեց առաջ գնալ գարձեալնոյն ուղղութեամբ: Եթէ առուակ էր պատահում նորան, նա խոնարհում էր գետին, ձեռքով ջուր էր վերցնում և զովացնում էր իրան: Մտնելով որև է գիւղ, նա կանգնում էր առաջին պատահած խրճիմի մօտ և խորում էր մի կառոր հաց. շատ հազիւ էր պատահում, որ մերժէին խեղճ տղային: Ընդհակառակն, ամենքը ցաւում էին խեղճ տղայի վերայ, որ այդպիսի փոքր հասակում ստիպուած էր թափառել երկրէ երկիր: Առհասարակ նորան ներս էին հրաւիրում և ինչ լաւ բան ունեին տանը՝ տալիս էին նորան: Արտուրին հարցնում էին, թէ ի՞նչ է իւր առնունը, և թէ ո՞վքեր են նորա ծնողները. նա ոչինչ չէր ծածկում, այլ ամենքին պատմում էր իւր չօրեղօր արածները և ամենի մէջ կարեկցութիւն էր զարթեցնում: Կարկէ, կային մի քանիսներ, որոնք չէին ել հաւատում նորան, սակայն նորան չէին իմացնում այս:

Այսպէս երեք շաբաթ անցաւ այն օրուանից, երբ Արտուրը Անգլիայի ափը ոռք դրաւ: Նորա բոլոր հարցմունքները եննէսլէյ-Կաստլի տեղի մասին 'ի զուր էին: Նա յոյսը կտրեց հայրական տունը զբանելու մասին և երբեմն նորան մի տեսակ երկիւղ էր տիրում: Նա մոածում էր, թէ գուցէ ինքը յերաւի

սիսալուած է, գուցէ ամեն բան, ինչ որ յիշում է իւր հօր, հօրեղօր և ամրոցի մասին, ոչ այլ ինչ էին եթէ ոչ երազ: Այս մոքերը աւելի ճշմարիտ էին թւում նորան մանաւանդ, երբ մտաքերում էր որ Միատէր Վօտէրը սկզբում քանիցս աշխատում էր հաւատացնել նորան, թէ նորա խելքը տեղը չէր: Արտուրը մտածում էր, թէ ինքը յերաւի ցնորուել է, բայց չնայելով դորան, աւելի լաւ էր համարում իւր ամբողջ կեանքի մէջ չարչարուել քան թէ վերադառնալ Միատէր Վօտէրի մօտ: Բանն այսպէս էր, երբ Արտուրը մի օր ամբողջապէս անքերը տեղեր ըջելով՝ ուր ոչինչ մարդկային բնակարան չկար, երեկոյին հասաւ մի փոքրիկ գիւղի: Խեղճ տղային խիստ տանջում էր սովը, նորա ոտները շատ ճանապարհորդուց ուռել էր, նա սարսափելի յօգնած էր և ընկղմուած մեծ տիրութեան մէջ: Ամբողջ օր նա ոչինչ չէր կերել, ուստի և շատ ուրախացաւ, երբ վերջապէս տեսաւ մի գիւղ: Մեծ դժուարութեամբ հասաւ Արտուրը առաջին խրճին: բայց նորա ոյժերը բոլորովին սպառած էին, նա այլ ևս չկարողացաւ աւած գնալ և թուլացած ընկաւ այդ խրճին դռան մօտ, ու խոր ախ քաշեց: Այս խրճիում բնակում էր մի խեղճ պառաւ կին: Նա արդէն պատրաստում էր քնելու և արդէն գիշերուայ աղօթքն էր կարդում, երբ լսեց մի թեթև լացի ձայն: Նա սկսեց ականջ դնել և նորան թւում էր, թէ այդ ձայները իրան մօտ էին: Բարի կինը իսկոյն գուռը բացեց և զարմացաւ ու ափշեց, երբ տեսաւ որ իւր տան չէմքի մօտ մի տղայ է պառկած:

— Խեղճ աղայ, խեղճ երեխայ, միմնջաց նա և
սկսեց նորան բարձրացնել: Ի՞նչ է պատահել քեզ
որդիս, հիւանդ հօ չես:

Արտուրը գլուխը բարձրացրեց և թոթովից, —
և խիստ զարդած եմ և խիստ էլ սոված, մայրիկ:

— Ան, Աստուած իմ, խեղճ աղայ, պատասխա-
նեց պառաւը և ձեռը քսեց Սրառուրի գլխին: Աշ-
խատիր վերկենալ ես քեզ կօգնեմ, զնանք, սերս
գնանք: Բոլոր ունեցածս քեզ լինի, ես սիրով կծա-
ռայեմ քեզ:

Նա օգնեց տղային վերկենալու և տարաւ նո-
րան իւր սենեակը, նստեցրեց հին բազկաթոռի վե-
րայ և բերեց հաց, կաթն ու իւղ: Կաթը շուտով
զովացրեց Արտուրին. նա այնքան կերաւ, որ լաւ
կշացաւ և հոգեով չափ շնորհակալութիւն արաւ
բարի պառաւին: Բայց սա սորանով չբաւականացաւ,
այլ տղայի կոշիկները հանեց և սկսեց նորա բշտը-
տած ոտները քացախով ու ջրով լուալ. վերջապէս
նա Արտուրին իւր մահակալի վերայ պառկացրեց,
ցանկանալով նորան աւելի հանգստութիւն պատճա-
ռել: Իսկ ինքը բաւականացաւ մի քանի խուրձ խո-
տով, որ փոեց յատակի վերայ և ծածկեց վերմակով:

Միւս առաւօտ Արտուրն արդեն լաւ առողջ
էր և մեծ սիրով բաւականութիւն տուաւ պառաւի
հետաքրքրութեան, որ անպատճառ կամենումէր ի-
մանալ թէ ով է իւր հիւրը: Բայց որքան զարմացաւ
նա, երբ լսեց թէ այդ տղան, որ իր մօտ ապաստանա-
րան է որոնում, Լորդի զաւակ է և այն էլ Լորդ Էն-
նելլի զաւակ:

— Տէր իմ Աստուած, աղողակեց նա մեծ զար-
մանքով, ես շատ լաւ եմ ճանաչում քո պապին. ես
զեռ ջահել ժամանակս ծառայում էի քո մեծ մայր
Լէդի Էննէլլի մօտ և նորա մօտ էի լինում մինչեւ
մարդու գնալս հանգուցեալ ամռանոյս հետ: Այն ժա-
մանակ հօրդ փոքրիկ Զարլս էին կանչում, նորան ես
շատ եմ ման ածել նոյնպէս և փոքրիկ Միստեր Թով-
մասին: Աստուած քեզ բերեց խեղճ կիօջ մօտ, որ-
պէս զի նա կարողանայ մի փոքր շնորհակալութիւն
անել Էննէլլի յների ցեղին, որը նորան շատ բարե-
բարութիւններ է արել: Այժմ գու ինձ մօտ պիտի
մնաս, մինչեւ որ բոլորվին կառողջանաս, իսկ յիտոյ
ես քեզ կսովորցնեմ, թէ որ ճանսպարհով պիտի
գնաս Էննէլլի կասալ: Ես շատ լաւ գիտեմ այդ ճա-
նապարհը, որովհետեւ ամուսնանալուց յետոյ էլ
շուտ շուտ գնում էի մեծ մօրդ մօտ. նա ինձ միշտ
սիրով էր ընդունում, մինչեւ իւր մահը: Եւ այժմ
տեսնում էմ իմ առաջ նորա թոռան. Տէր Աստուած,
շնորհակալ եմ քեզանից այս բաղտաւորութեան
համար:

Արդարի բարի պառաւը խիստ շարժուած էր
այս անակնկալ գէպքից և ամեն ջանք գործ էր դը-
նում համոզելու տղոյին, որ մի երկու օր իւր մօտ
մնայ: Բայց երբ Արտուրը լսեց, որ մինչեւ Էննէլլի-
կասալ մնացէլ է մօտ 40 անդիքական մղոն, չնայե-
լով իւր անչափ շնորհակալութիւն գէպի բարի պա-
ռաւը, բոլորպին հրաժարուեց այնակը մնալու:

— Ես անպատճառ ուզում եմ շատ շուտ գրկել
հօրս, ասաց նա: Միայն նա կարող է պաշտպանել

ինձ չար հօրեղքօրս դէմ և պատժել նորան նորա ինձ
հետ խիստ վարուելու համար:

Բարի պառաւը (նորա անունը Մերի Բլունտ
Էր) վերջապէս սախառւեց զեջանելու մանկան խըն-
դիրներին և համաձայնեց թողնելու նորան, նա-
խապէս խոստումն առնելով նորանից, որ հայրական
տուն գնալուց յետոյ՝ շուտ այցելէ իրան: Արտուրը
չնորհակալութեամբ տուաւ նորան այս խոստումը:
Յետոյ պառաւը ցոյց տուեց նորան, թէ որ ճանա-
պարհով պէտք է գնալ էննէսլէյ-Կաստլ թուեց այն
գիւղերի անունները, որոց միջով պիտի նա անցնէր
և օրհնելով տղային ու սախպելով նորան վերառնել
իւր բոլոր հարստութիւնը, որ ընդամէնը կազմում
էր մի քանի շելինգից, թողեց նորան, չմոռանալով
նորա գրպանը լցնելու ուտելիքի պաշարով: Արտուրը
չնորհակալութեան արտասուքով հրաժարուեց բարի
պառաւից և նոր ուժով ու քաջալերուած երջա-
նիկ յոյսերով՝ ճանապարհ ընկաւ: Նա ուրախ էր
այն թռչնի նման, որ ազատում է վանդակից. այ-
ժը բոլոր երկիւղն ու բոլոր կասկածները անցայտա-
ցան: Արտուրը հաւատացած էր, որ մի քանի օրից
յետոյ կ հասնի իւր ծնողաց տունը և հօր գրկում
կլինի:

Արդարեւ չորրորդ աւուր երեկոյին Արտուրը
հասաւ վերջապէս էննէսլէյ-Կաստլին և ուրախ ու-
րախ ողջունեց գեղեցիկ ու հպարտ ամրոցին: Նա
ներս վազեց սրահը և հենց առաջին պատահած ծա-
ռային հարցը, թէ ուր է Լորդ էննէսլէյն:

— Աւր սենեկում, իհարկէ, ուրիշ ուր պիտի լիւ-

նի, պատասխանեց ծառան, զարմացած նայելով
փոքրիկ, պատուած շորերով մանկան:

Բայց Արտուրը ուշադրութիւն չգարձեց նորա
վերայ, նա գիտէր ամրոցի ներքին դրութիւնը,
վասնորոց նորան պէտք չէր հարց ու փորձ անել
թէ ուր է իւր հօր սենեկուր: Նա սանդղառվ վեր
բարձրացաւ, մասաւ նախասենեակը,—բայց յանկարծ
կանգնեց քարացածի պէտ: Իւր առաջ նա ոչ թէ
հօրը տեսաւ, այլ իւր ամենաչար թշնամի սիր Թով-
մաս Լուվելին—նոր էննէսլէյ Լորդին և նորա սե-
նեկապետ Մօսիօ Փանին:

Խեղճ տղան մի քանի րոպէ վախեցած կան-
գնեց անշարժ, առանց ձայն հանելու, և գլխից ոտը
նայում էր իւր հակառակորդներին, օրոնք նոյնպէս
պակաս չէին նեղն ընկնել ու վախեցել: Նոցա թւում
էր, թէ տեսիլ են տեսնում: Առաջին անգամ Մօսիօ
Փանը ուշքի եկաւ:

— Սա նա է, Արտուրնէ, գոչեց նա և կայծական
արագութեամբ վրայ ընկաւ տղային: Անպիտանը
ազատուել է, փախել է ուսումնարանից: Ո՛չ, այնպէս
պիտի անել, որ վտանգաւոր չլինի:

— Օգնեցէք, օգնեցէք, աղալակեց Արտուրը հոգեքաղ
ձայնով: Հայրիկ, Թրանցիսկ, —այսուղ, այսուղ: Աղ-
տեցէք ինձ իմ ապանողներից, օգնեցէք, օգնեցէք...

Երկար չգոռաց նա: Փանի խիստ հարուածը նորա
պլխին՝ անզգայ զլորեց նորան գետին: Խակոյն Արտուրին
ձգեցին մօտակայ սենեկուր, ուր երբէք ոչ ոք չէր մտնել,
բացի ժանից, և որից՝ միայն մի անցք կար, այն էլ
դէպի սիր Թովմասի սենեկուր: Այսուղ սենեկապետը

Արտուրի ձեռնելն ու ոտները կապեց, բերանը խցեց թաշկինակով, այսպէս որ խեղճը չէր կարողանում դոռալ այլ միայն արձակում էր ողբալի ձայներ:

— Ահա մի գեղեցիկ պատմութիւն, Միլօրդ, ասաց նա, վերադառնալով Լորդ Էննէլէյի առանձնաւունեակը և կողպէքով փակելով ետեի անեկի դուռը: — Տեսնում էք ինչ է լինում, երբ գործը կիսատենք թողնում: Միայն մեռածները չեն խօսում և չեն անհանգստացնում կենդանիներին: Նա միշտ ասել եմ ձեզ այս:

Սիր Թովմասը, այսպէս պիտի անուանենք նորան, որովհետեւ նա ապօրինի Էննէլէյ Լորդն է, ըստ ու մունջ կանգնած էր նոյն տեղը, ուր որ տեսաւ Արտուրին, նորա դեմքը մեռածի պէս գեղնել էր:

— Ես երկիւղից քիչ մնաց մեռնէի, ասաց նա, սելքին շփոթմունքից դողդուն ձայնով: Արտուրը համարձակ, առոյդ և առողջ է ու այստեղ է իւր սեպհական տանը....

— Անիր, Միլօրդ, լոիր, և ոչինչ մի ասիր դորա մասին, ընդհատեց սենեկապետը: Աս ձեր տունն է, դուք այստեղ տեր էք և հրամանատար, և մենք պիտի աշխատենք, որ միշտ այդպէս լինէք:

— Բայց, Տէր իմ Աստուած, մրմնջաց սիր Թովմասը — Արտուրն այստեղ է և ձանաշում է իւր իրաւունքները:

— Արտուր Էննէլէյն վաղուց արդէն մեռած է, պատասխանեց չար սենեկապետը, առանձին կերպով

շեշտելով վերջին բառը, — իսկ այս խաբեբային մշտապէս պիտի հեռացնել:

— Բայց ՚ի սէր Աստութոյ առանց սպանութեան, Փան, մրմնջաց սիր Թովմասը, որ գեռ այնպիսի չարգործ չէր, ինչպէս իւր սենեկապետը: Նո կեանքում շատ չարութիւն, շատ անիրաւութիւն եմ արել բայց էլ չեմ համարձակում անել: Ոչ, սպանութիւն չեմ թոյլ տալ անելու, բոլորովին չեմ թոյլ տալ:

— Պիտի անէք, Միլօրդ, պատասխանեց Փանը հանդարտ՝ բայց հաստատուն ձայնով: Ապա թէ ո՛չ դուք կ'կամենաք այստեղից ծառաներով ամօթալի դուրս գնալ ու բանտը մտնել: Բաղտը տղային դարձեալ մեր ձեռքն է ձգել հարկաւոր է այս յաջող հանգամանքից օգուտ քաղել: Ո՛չ որ չգիտէ սորա գալը, ձեր ծառաներից ու մէկը նորան չի տեսել և չգիտէ, թէ նա ձեր ազգականնէ: Նա մի թափառող ստուերի պէս երևաց և ստուերի պէս էլ պիտի անյայտանայ, քանի որ չեն տեսել նորան: Այսպէս պիտի լինի. Նա պիտի մեռնի:

— Ոչ, ո՛չ, ո՛չ, աղաղակեց սիր Թովմասը: Այդ չպիտի լինի: Նո նորանից ամեն ինչ խլեցի, — անունը, ժառանգութիւնը, կոչումը, թողնելով նորան միայն դատարկ կեանք, և այժմ էլ իւեմ նորանից և այս վերջինը ու նորա դահիճը դառնամ: Ո՛չ, ո՛չ երբէք. լսիր Փան, ես աւելի լաւ հնարք գիտեմ: Այս, նա պիտի անյայտանայ, մշտապէս անյայտանայ և մեզ համար բոլորովին անվտանգ ծանապար-

հով, բայց ես երբէք չեմ թոյլ տալ այժմ, որ նորա
արիւնը թափուի:

— Ո՞րն է այդ ամենալաւ միջոցը, հարցրեց Ժանը
ափշած:

— Իու գուցէ գեռ չգիտես, ասաց սիր Թովմասը
շտապով, որ Անգղիայի Վեստ-Խնդեայ գաղթականու-
թեան վարելահողերի տիրապետողները չե թէ
միայն սև սարուկներ ունենալու իրաւունք ունեն,
այլ և սպիտակներ, եթէ միայն կարող են ապացու-
ցանել որ օրինաւոր ճանապարհներով են ձեռք բե-
րել նոցա: Քիչ չե պատահում, որ նաւորդը չի կա-
րողանում ճանապարհածախիք վճարել և այն ժա-
մանակ ապրանաց նաւի նաւապետը լիակատար իրա-
ւունք ունի վաճառել՝ ակամայ վճարել չկարողացող
նաւորդին հենց առաջին պատահած կալուածատիրօջ
(պլանտատօր): Գուցէ ժամանակով այդ փոխուի էլ
իսկ այժմ, քանի որ մենք ապրում ենք տասնեւութ-
երորդ դարու սկզբում, ոչ մի օրէնք չի արգելում
նաւապետներին այս իրաւունքից շահուել: Խեցը
մենք էլ այս կերպով չուղարկենք Զօն Սմիտին: Բանը
միայն նորանումն է, որ մի այնպիսի նաւապետ գտնէ-
ինք, որը համաձայնէր նորան տանել Վեստ-Խնդեայ
և այնտեղ վաճառէր մի պլանտատօրի վերայ: Ճըշ-
մարիտ է, այդ տղան փոքրէ և գեռ չի կարող աշ-
խատել միւս սարու հներին հաւասար, դորա համար
էլ սկզբում նու մեծ օգուտ չի բերի իւր տիրօջ, —
բայց այս ցաւին էլ հեշտ է օգնել: Ես իմ գրապանից
սիրով կ'վճարեմ հինգ հարիւր ֆունդ ստեղինդ, եթէ
միայն հագատուիմ աղջից:

— Վ առ չե. արդարեւ ձեր գաղափարը լաւ է,
ասաց Ժանը: Բայց այն ժամանակ ի՞նչ պիտի անենք,
երբ նորա վաճառման ժամանակամիջոցը կլրանայ:
Մի՞թէ նա Անգղիայ չի վերադառնայ այն ժամանակ:

— Է՛հ, պլանտատօրները դորա հնարինէլ գիտեն,
պատասխանեց սիր Թովմասը: Նրբ արդէն մէկը
ընկնում է նորա ձեռքը, նորան այդպէս հեշտ չեն
դուրս լողնում, այլ ստիպում են մինչի մահ ծա-
ռայել:

— Ճըմ, յիրաւի շատ լաւ բան է, ասաց Ժանը: Բացի
դորանից, այնտեղ գաղթականութիւնների մէջ պա-
տահում են մաշացու հիւանդութիւններ, որոնք
յառաջանում են խոնաւ, տաք երկրից արտաշնչող
գոլորշներից, ինչպէս օրինակ, սարսափելի գեղին—
տենդը. եթէ սորան աւելցնենք այլ և տղայի ջա-
հիլութիւնն ու գործարանների լուլութիւնը, ծանր
աշխատանքը, որով անկասկած կծանրաբեռնն նորան,
— այո՛, սիր Թովմաս, ձեր գաղափարը լաւնէ: Նրաու-
րը միանգամ ծովն անցնելով, էլ երբէք չի կարող
վերադառնալ այնտեղից: Վեստ-Խնդիայում թագցրէք
դորան:

— Այժմ միայն նաւալարին պէտք է գտնել, որ
համաձայնէր յանձն առնել այդ ամենը, ասաց սիր
Թովմասը:

— Թողէք ես հոգամ այդ, պատասխանեց սենե-
կապետը: Եթէ դուք համաձայնումէք հինգ հարիւր
ֆունդ ստեղինդ վճարել նորան փոխազբելու հա-
մար, ուրիմն գժուար չի այդպիսի մի մարդ գտնելը
ձշմարիտ է սա մի կեղոսու դործ է, սակայն այս հան-

գամանքը իսկ և իսկ երաշխաւորումէ մեր անվտանգ լինեց: Նոյն իսկ նաւապետի շահը կ'պահանջի, որ այս բանը թագուն մնար, ուստի և նա դժուար թէ մանկան մի կամ երկու տարով վաճառէ: Այո, գաղափարը լաւ է, և եթէ դուք թոյլ կտաք, ես այսօր և եթ կերթամ մերձակայ ծովեզեայ քաղաքը և կորոնեմ այնտեղ մեր ցանկացած նաւապետին:

Սիր Թովմասը, 'ի հարկէ, շատ սիրով համաձայնեց դորան: Նորան մի կերպ երկիւղ էր տիրել երբ մոտաբերեց, թէ Արտուրը այդքան մօտ է իրան և մինչև անգամ մի յարկի տակ: Նա անպատճառ ուզում էր նորան շուտով հեռացնել և մի անվտանգ տեղ ուղարկել: Մի որ և է անյաջող դէպքը կարող էր յանցանքը բանալ և այն ժամանակ սիր Թովմասին սպառնում էին ամօթ և բանտ, և գուցէ կախաղանով մահ էլ: Այս պատճառաւ հարկաւոր էր վտանգը հեռացնել:

Շատ չ'աշխատեց ժանը որոնելու այն մարդին, որի շահասիրութիւնը բաւական մեծ լինէր, որպէս զի կարողանար խլացնել իւր մէջ խղճի ձայնը: Արդէն միւս օրը նա վերադարձաւ էննէսէյ-Կաստլ մի Անդէրսօն անունով նաւապետի հետ, որ ըմբռեց իւր գրպանը լրնել հինգ հարիւր ֆունդ ստերլինգով, և բացի գորանից մատաղահաս ստրկի վաճառուելուց ստանալի գրամը: Մի քանի րոպէում սակարկութիւնը արդէն աւարտուած էր: Սիր Թովմաս Լուիէլը Արտուրին տուեց հանգուցեալ Սմիտ կնօջ որդու փոխանակ, և նկարագրեց նորան իրբեւ մի անուղղայ անպիտան, որին տանը ոչինչ հնար չկայ ուղղելու:

— Լաւ, լաւ, պատասխանեց նաւապետը անտար-քերութեամբ. ինձ բոլորովին պէտք չէ իմանալ թէ ո՞վ է այդ տղան ու թէ ինչպիսի է. ինչ և իցէ լինէր, ես դորան կտանեմ Պէսսիլվանիայ: Այնտեղ պլանտա-տօրների մէջ բազմաթիւ լաւ լաւ ծանօթներ ունեմ և կարող էք հաւատացած լինել Միջըդ, որ տղան երբէք էլ չի անհանգստացնի ոչ ձեր ողբանածութեան և ոչ էլ ինձ: Բայց հինգ հարիւր ֆունդ ստերլինգը ես սկզբից պիտի ստանամ:

Սիր Թովմասը մօտեցաւ սահարանին, բացեց, հանեց մի կապ գրամատուներ և ձգեց սեղանի վերայ:

— **Ահա** փողը, ասաց նա. գուք կ'ստանաք այլ ևս մի հարիւր ֆունդ, երբ ինձ կիմացնէք, որ այդ անպիտանը անվտանգ տեղ է թագցրած:

Նաւապետը ուրախ ժպիտով քսակը դրեց գրպանը և ասաց.

— Ես իսկոյն Անդղեայ վերադառնալուց յետոյ զգբեմ ձեղ դորա մասին. իսկ մրտեղ կարող եմ վերցնել նորան:

— Հենց այստեղ, բայց միայն այժմ չէ, այլ աւելի լաւ է երեկոյեան, երբ կմթնի:

— **Շատ լաւ,—կամենաք ժամը** տասին կգամ ես իմ բուցմանիս հետ:

Բանը առանց գժուարութեան վլուխ էր բերած. մնացել էր միայն կատարումը: Երեկոյեան տասը ժամին, երբ ամրոցում ամենքը քնեցին, բացի յանցաւորներից ու նոյսա զոհից, եկաւ նաւապետ Անդերսօնը և տարաւ տղային: Միւս օր Արտուրին բան-

պատմա զանբաւամ ընմանասար ւայ ւայ
անարկեցին նաւի ներքնասենեկի մէջ և խիստ հողմու
տարաւ այն տարաբաղտին հայրենիքից հեռու, դէպէ
աշխարհիս մի հեռաւոր մասնի ան հիւրընկալ ափր:

Երբ նաւը մտաւ ծովի մէջ տեղը, ուր այլ եւ
չէր կարելի երկիւղ կրել չար մոքելը յայտնելու հաւ
մար, Արտուրին ազատեցին և թոյլ տուին տախտաւ
կամածի վերայ բարձրանալու: Նորան հազրին նաւ
ւային շորեր, պաշտօն տուին նաւի մէջ և առհա-
սպակ լաւ էին վարում նորա հետ: Ճշմարիտ է, եր-
բին երբեմն պատահում էր, որ մի մի բարի հա-
րուած էր ստանում նա որ և իցէ խիստ նաւաստից,
բայց նաւապետը նորա հետ քաղցրութեամբ էր վար-
ւում և միշտ պաշտպանում էր նորան: Նա պիտի
հացնէր ազային մինչի ստրուկների վաճառանոցը
առողջ ու զուարժ, որպէս զի աւելի լաւ գնուի ճա-
խէր նորան: Արտուրը, որ երբէք մտածել անզամ
չէր կարող, թէ նաւապետ Անդերսօնը այդպիսի մտա-
զլութիւն ունի, փոքր առ փոքր սկսեց հաւատ ըն-
ծայել նորան, և մինչեւ անզամ վճռեց մի օր նաւա-
սենեկը մտնել և նորանից կարեկցութիւն և ողոր-
մութիւն հայցել: Նաւապետը հանգարտ, բայց սառ-
նութեամբ ու առանց ամենափոքր կարեկցութիւն
անզամ ցոյց տալու, լսում էր Արտուրի պատմու-
թիւնը, որը չժագցրեց նորանից ոչ իւր խական
անոնը և ոչ էլ հօրեղբօր չար դիտաւորութիւնները:

— Այդ բոլորը շատ լաւ են, եթէ միայն Ճշմա-
րիտ են, ասաց Անդերսօնը: Ես դորա համար խսկոյն
Անդղիայ վերագառնալուց յետոյ կսկսեմ հետախու-
զութիւն անել և եթէ կտեսնեմ, որ քո ասածնելը

Ճշմարիտ են՝ խսկոյն քեզ հետ կբերեմ: Բայց մի ժա-
մանակ պէտք է Ամերիկայում ապրիս:

— Իսկ ի՞նչ պիտի շնորհ այնակը, հարցը Ար-
տուրը: Ես ուրիշ տեղ ոչ պի չեմ ճանաչում:

— Ես կաշեատեմ այնակը քեզ մի հաւատարիմ
մարդու յանձնել քեզ բարեկամ ու պաշտպան կ'զբա-
նեմ, որդիս, պատասխանեց նաւապարը: Մի փախիր,
այդ ամենը որքան կարելի է լաւ կանցնի, եթէ միայն
խելք ու հնագանդ կ'լինեաւ նթէ ես կարող կ'լինեմ
քեզ օգնելու, իմացիր որ խսկոյն կ'որանեմ քեզ: Եսկ
այժմ գու պիտի վիճակիդ հնապանդուես:

Կաւապետ Անդերսօնը այնպէս քաղցր ու հան-
գարտ էր խօսում: որ Արտուրը հաւատաց նորա խոս-
ուութիւնին և նորից յուսաց երբ և իցէ Անդղիայ վե-
րագառնալ և վեհժինդիր լինել իւր չար հօրեղօրը:
Բայց շուտով այս քաղցր երազից յիտոյ պիտի զարթ-
նէր զարհուրելի կերպով:

Երկար ճանապարհութութիւնից յետոյ նաւը
վերջապէս խարիսխ ձգեց Անսկիլվանիայի ափերի մօտ
ֆելարէֆիայի նաւահանգստում: Նաւապետը առա-
ջարկեց Արտուրին ափ գուրս գալ ուր նա արդէն
խսկոյն կամենում է բարի մարդուն յանձնել: Ար-
տուրը առանց ընդգիմանալու հետեւ նորան: Նոքա
անցան բազմաթիւ լայն ու գեղեցիկ փողոցներով և
վերջապէս մտան հրապարակ: Նաւապետ Անդերսօնը
Արտուրին տարաւ մի հիւրանց, ուր շատ մարդիք
կային: Նաւապետը դահլիճ մտնելով՝ մի շուտափոյթ
հայեացք ձգեց ամբոխի վերայ և յանկարծ ուրա-
խութեամբ աղաղակեց:

—Ահա, ահա այն մարդը, որին ես ցանկանում էի: Մի բողէ սպասիր այստեղ, որդի՞ս: Ես կիսնդրեմ սորանից քեզ իւր տուն վերցնել: Նստիր այստեղ—այ էդպէս: Ես իսկցին կվերագառնամ: Արտուրը միանգամայն հաւատացած լինելով նաւապետ Անդեմսօնի դիտաւորութիւնների աղնւութեան՝ նստեց աթոռի վերայ և հանգիստ սպասում էր նորա վերագարձին: Այդ միջոցին նաւապետը մօտեցաւ մի բարձրահասակ, լայնաթիկունք մարդու, որ նստած էր գահլիճի մի անկիւնում մի շեշ գինի էլ առաջը դրած և թեթև զարկեց նորա ուսին: Նա յետ նաւայց և Արտուրը նկատեց մի երկայն ու թուխ գէմք, որի գծագրութիւնը ոչինչ բարութիւն ու կարեկցութիւն չէր արտացյալում: Կարճ ու շէկ մորուքը և փայլուն աչքերը նորան մի դժնեայ տեսք էին տալիս: Նա հագած ունէր կալուածատիրօջ սովորական հագուստ,—լայն կինամնագոյն անդրավարտիք, բամբակէ շերտաւոր վերարկու (շօրտցեն) և պանամայի գլւարկ:

—Օ՛հ, նաւապետ Անդեմսօն, դուք գարձեալ այստեղ էք, գոչեց նա հաստ ձայնով և կոպտութեամբ սեղմեց նորա ձեռքը: Հը՛, ինձ համար ոչինչ չեն բերել:

—Ասյս անգամ շատ քիչ, Միստէր Դրումմոնդ: — մի փոքր բան, որ կարող է քո տնկանոցի համար պիտանի լինել: Նայեցէք այն տղային, որ նստած է դուն մօտ: Եթէ ձեզ պէսք է՝ արժան կտամ ձեզ:

—Թոյլ քնքոյշ արարած է, ասաց կալուածատիր Դրումմոնդը, նայելով Արտուրին գլխից մինչև ոտք

ձիշտ այնպէս, ինչպէս որ մեղանում մավաճառ ները նայում են իւրեանց եզներին ու հորթներին՝ գնահատոելու համար: — Առանձին ոչինչ չկայ, ապրանքը աննշան է: Առաջին տարիներում շատ փոքր օգուտ կ'երի, միայն ՚ի զուր տեղը պիտի կերակրեմ—իսկ օգուտ ոչինչ չի տալ:

— Ասկայն ժամանակով դա օգտակար կլինի, աւելացրեց նաւապետը: Թէպէտե մանտոկը տեսքով թոյլ է երեսում, բայց նա ամուր մինակներ ու ոսկրներ ունի: Բայց եթէ ձեզ պէտք է, կարող էք մի քանի տարով վերցնել:

— Դեհ, տասը տարուց հօ էլ պակաս չի լինի ասաց կալուածատիրը. այլապէս ես ոչինչ օգուտ չեմ ունենայ դորա գնելուց:

— Ինձ համար միենոյն է, ասաց նաւապետը, ես կարծում եմ, որ դուք կարող էք շարունակել և մինչև անգամ կրկնապատկել այս տաս տարին,— ինձ շատ հաճելի կլինի այդ: — Ես երբէք էլ չեմ պահանջի ձեզանից տղային: դորա ծնողները վաղուց գերեզման են մօտած—դա բոլորովին որբ է: — ինչ կամ մնաք արեք դորան:

— Հըմ, այս վատ բան չէ, մրմնջաց ինքն իրան Մ. Դրումմոնդը: Կարելի է այդպէս քառասուն կամ յիսուն ֆունդ տալ....

— Ի՞նչ, ընդհատեց նորան Անդեմսօնը—քառասուն ֆունդ: Ոչ, կամենաք հարիւր ֆունդ վճարեցէք, մի պէնսի (*) պակաս չեմ անի, երբէք չի կարելի.

(*) Անգլիական պղնձէ զբամէ $2^{1/2}$ կոպէկ արժողութեամբ, (Ճ. թ.)

Կթէ չէք ուզում, Ախատէր Վիլիսը ուրախութեամբ
և վերառնի. ինձ համար միենցն է:

—Օ՛հ, ձեղ հետ սակարկել անգամ չե կարելի,
քթիջեց Դրումմոնդը իւր հաստ ձայնով: Դա
վճռական գինն է: պահան չէք տալ:

—Ամենեին, հաստատութեամբ ասաց նաւապետք:

—Ե՛հ, զլուխը քարը, պիտի վասահանամ: Տես-
նենք. ինչ ուզում է թող լինի, ասաց Դրումմոնդը
Սկզբում, պարող բան է, որ մի քիչ պիտի խնայել
գորան, իսկ յետոյ—է՛հ, յետոյ էլ ժամանակը ցոյց
կտայ: Լաւ, վերցնում եմ տղային:

—Պուք հենց խկոյն կարող էք նորան վերց-
նել միստէր Դրումմոնդ, ասաց նաւապետք: Տղան
այնպէս է կարծում, թէ ձեղ մօտ հիւր պիտի լինի:
Իսկ դուք ուր հարկն է այնտեղ կուզարկէք դորան:

—Այսինքն իմ նեղըների ընդհանուր կացարանը,
աւելացրեց Դրումմոնդը ծիծաղելով, և զրտանից
հանեց մի կաշուէ ցեխուա քսակ: Տես, պատահամիք
հետա քիչ փող եմ վեր առել ծիսախոտ գնելու հա-
մար, բայց ծիսախոտ ուրիշ անգամ էլ կարելի է զը-
նել—ահա ձեղ հարիւր փունք:

—Ահա ձեղ օրինաւոր հաստատազիր մի քանի
ուրիշ թղթերի հետ, վրայ բերաւ նաւապետք. ո-
րոնք արդէն բոլորովին պատրաստ էին: Գնանք աղայի
մօտ: Դեռ մի փոքր քաղցրութեամբ խօսեցէք նորա
հետ, որպէս զե ոչինչ կասկած չտանի, իսկ յետոյ,
երբ կանահք ձեր տնկանոցը, է՛հ, յետոյ ուրիշ
բան է:

—Պարզ բան է այդպէս կ'անեմ. ես հօ նորուս

չեմ այդ գործերի մէջ, պատասխանեց Մ. Դրումմոնդը
և ծանրութեամբ վերկացաւ բազկաթոռից: Նաւա-
պետ Սնդերսոնը տարաւ նորան Արտուրի մօտ:

—Ահա Միստէր Դրումմոնդը—մի պարոն՝ որ կա-
մենում է քեզ իւր տուն վերցնել ասաց նա տղային:
Յոյս ունիմ, որ գոչ կիննես սորա բարութիւնից և
լաւ կ'պահես քեզ՝ մինչեւ իմ գալս:

—Կաշխատեմ, ասաց Արտուրը, երկշոտութեամբ
նայելով իւր նոր հրամանատարին: Ոյո, ես անպատ-
ճառ լաւ կ'պահէմ ինձ և խոնարհ կ'լինեմ:

—Շատ ուրախ եմ, շատ ուրախ եմ, սիրելիս,
մրժնջոց կալուածատէրը իւր խրոխա ձայնով, որին՝ի
զուր աշխատում էր փաղաքշական ձև տալ: Նա
բռնեց տղային ձեռքից և գուրս տարաւ դաշլիճից:
Գնանք, շարունակեց Դրումմոնդը—կառքս դռան
մօտ է կանգնած:

Արտուրը Համարձակեց ընդդիմանալու, թէ-
պէտե խիստ վախումէր այն բարձրահասակ ու հաստ
մարդուց, որի դէմքի վերայ բարեհոգութեան նշյլ
անգամ չէր երեսում: Նա ողջունեց նաւապետին, որը
դարձեալ մի քանի հանդարտեցնող խօսքեր շշնչաց
նորան և Դրումմոնդի հետ միասին գնաց կառքի
մօտ: Կառավարը նստած էր կառքի ծայրին և զար-
մացմամբ նայում էր երբեմն իւր պարոնին և եր-
բեմն տղային:

—Աս հիւր է, Կվիմբօ, ասաց կալուածատէրը մի
առանձին տեսակ՝ աչքով նշան տալով: Կառավարը
ոչ այլ ոք էր, բայց եթէ նեղների զլխաւոր վերա-
կացուն. Նա խմացաւ այս աչքով նշան անելը և

նենգութեամբ ժպտելով զլուխ տուեց իւր պարոնին:

Միստէր Դրումմնդը օգնեց Արտուրին կառքը նստելու և յետոյ ինքն էլ նստեց նորա մօտ:

— Քշե՛ր, գոչեց նա. կառքը արագ ընթացաւ հրապարակի վերայ և արագութեամբ էլ անցաւ Ֆիլադէլֆիայի գեղեցիկ փողոցներով: Քաղաքից դուրս գալիս միայն մի փոքր թուլացրին ձիաների սանձերը և կառքը գանդաղութեամբ սահում էր հարթ ճանապարհի վերայով: Վեց թէ եօթ ժամուայ ճանապարհորդութիւնից յետ, որի ընթացքում միայն մի անգամ էին մի փոքր հանգստացել, արևի մայր մանելու միջոցին հասան միստէր Դրումմնդի վարելահողին:

— Ահա այստեղ է, ասաց վերջնը ցոյց տալով մի մեծ գեղեցիկ շինութիւն, որից մի փոքր հեռու երեւում էին բազմաթիւ ցածր խրճիթներ: Նորանցից էլ հեռու գտնուում էր մի ահազին շինութիւն բարձր ծինելցյաներով—զա Միստէր Դրումմնդի գործարանն էր: Վարելահողի շուրջը մեծ տարածութեամբ գետինը լաւ մշակուած էր: Սջ կողմը երևում էր խիտ անտառ, իսկ ձախ կողմը կապտագոյն տեսնուում էր բաւական բարձր բլուրների մի կարգ:

— Այստեղ շատ ախորժելի պիտի լինի, ասաց Արտուրը հետաքրիրութեամբ նայելով վարելահողին և նորա շրջակայքին, որոնք գեղեցկապէս լուսաւուրուած էին մայր մտնող արեգակ ճառագայթներով:

— Այս, յոյս ունիմ, թէ այստեղ այնքան կ'հաւանես դու, որ այլ ևս չես կամենալ այստեղից վերադառնալ, պատասխանեց Միստէր Դրումմնդը,

որ ամբողջ Ճանապարհին ոչինչ չէր խօսացել Արտուրի հետ: Այժմ, երբ արդէն տեղ հասանք, պէտք է վերջ տանք կատակերգութեան, էլ ինչի՞ թագցնենք, սիրելիս, շարունակեց նա: Դու կարծում ես, թէ ինձ մօտ հիւր ես եկել այնպէս չէ: Բայց շատ սխալ տում ես. դու իմ ստրուկն ես: Ես քեզ տասը տարով գնեցի նաւապես Անդերսոնից՝ վճարելով դորա համար հարիւր Փունդ և դու շատ լաւ կանես, եթէ հանգիստ քո վիճակիդ հնագանդես: Ապա թէ ոչ, մի լաւ նայիր այն կառավարին, այսուհետեւ նա կլինի քո վլխաւոր վերակացուն: Նուռ արի, Կվիմրօ, թող մի լաւ տեսնի քեզ:

Կառավարը հնագանդեց և Արտուրը տեսաւ նորա գազանային ու զզուելի դէմքը, որ ոչ մի կերպ չկարողացաւ զբաւել Արտուրին: Խեղճ տղայի երակ-ներում արիւնը սառեց:

— Անկարելի է, անկարելի, աղաղակեց նա: Ես ստրուկ եմ: Ես էննէսլէյ Լօրդի զաւակս ծախուած եմ տաս տարով ստրուկ լինելու: Անկարելի է, այդ անկարելի բան է:

— Կարելի է թէ անկարելի, բանը վերջացած է: Խոկ թէ ես ճշմարիտ եմ տառմ, դորանում շուտ կհամոզուես, եթէ միայն անհնագանդ կ'գտնուես, ասաց կալուածատէրը խրսխս ձայնով: Սակայն, ես քեզ մի լաւ խորհուրդ կ'տամի: Զգուշացիր երբ և իցէ փախչել փորձելուց: Քեզ անպատճառ կ'բռնեն և խիստ կ'պատժեն: Այնպէս չէ, Կվիմրօ:

— Հենց այդպէս է, ձերդ ողորմածութիւն, էնքան կ'ծեծեն, մինչև որ մեռնի, պատասխանեց վե-

բակացուն դժոխային ժպիտով: Այդ առաջին անգամը չէ, մի քանի անգամ՝ փորձեր եղանայստեղ, բայց ոչ մինը չ'յաջողեց:

ՄԵՐ քանի լսութեց յետոյ կառքը կանգնեց պարոնի տան սրահի մօտ, որտեղից իսկոյն դուրս վաղեցին բազմաթիւ ստրուկ ծառայողներ, իւրեանց տիրօջը կառքից իջնելիս օդներու համար: Արտուրը բոլորն շտոթուեց, էլ չ'գիտէր ինչ աներ և այնպէս յուսահատ դրութեան մէջ նստած էր:

— Ի՞նչ, շուտ պիտի վերկենան թէ չէ, գոչեց ստրուկների վերակացու Կվիմբօն խրօստ ձայնով: Չինի՞ թէ ուզում ես, որ քեզ օգնեմ:

ԱՐՏՈՒՐԸ չ'լսեց նորա խօսքերը և դարձեալ նստած էր իւր կիսադրայուն դրութեան մէջ: Յանկարծ նորա հինց ականջի մօտ շառաչեց վերակացուի մըտրակը, դիպաւ նորա դէմքին և այնպէս ցաւացրեց, որ Արտուրը բարձրաձայն ազաղակեց և կառքից ընկաւ գետին:

ՎԵՐԱԿԱԳՈՒ նշանով նորան իսկոյն բարձրացրին երկու նեղը և բարձրաձայն ծիծաղելով աստրան նորան մի փայտաշէն խրճիթ, որ կառուցած էր անտաշ գերաններից: Նոքա դռնից ներս ձգեցին ազային, դուռը փակեցին և հեռացան: Արտուրը խորը մթութեան մէջ էր, խաւարը պատել էր նորան, խաւար էր թագաւորում և նորա ներսը: Նա ծանր հառաջեց և անզգայ ընկաւ գետին: Թալկութիւնը առ ժամանակի սախտեց նորան մոռանալ իւր ողբայի վիճակը: Նա ինչպէս թւումէր, ստրուկ էր ծառայ, խիստ ուսանողորմ պարսնին: Նա մատնուած

էր վաճառուած իւր ամենամօս ազգակամնից: Արտուրը մինչի ամենաստոր վիճակի էր հասած, նորա ներկան ու ապագան ծածկուած էին անթափանցելի քողով: Բայց երանի թէ նու մտածէր, որ օմութ գիշերին հետեւումէ գեղեցիկ առաւօտ:

ԿԱՅՈՒԹԻ ԽՆՍԵՐՈՐԴ:

ՀԵՄՄՈՒ ՊԱՌԱՄԱՐ:

Եթէ մինչև հիմի Արտուրը կասկածում էր, թէ ինքը ծախուած է գերի լինելու, միւս առաւած Միսակը Գրումննդի կալուածը զալուց յետոյ՝ նա հաստատ համոզուեց գորանում: Գեռ արել ծագելուց առաջ եկաւ վերակացու Կվիմբօն և սկսեց դէս ու դէն ձգել քնած նեղներին: Արտուրին պատուիրուած էր ստրուկների հասարակ շորը հազնելու. յետոյ Կվիմբօն տարաւ նորան մի հրապարակ, ուր հաւաքուած էին նորա ընկերակից բոլոր նեղները. վերջնին նորա մէջ տեղը կանգնացրին և վերակացուի նշանով բոլոր ամբոխը շարժուեց տեղից ու գնաց մօտակայ անտառը, փայտ կտրելու և տախտակիները սղոցելու համար: Արտուրին էլ ՚ի հարկէ, ստիպեցին կացինը վերցնել և միւսներից յետ չմնալ: Նորա զյժերը շատով նուազեցան, բայց նա խիստ սխալուած էլնէր, եթէ մտածէր, որ իւր քննոյշ երիտասարդութիւնը կարեկցութիւն կզարթեցնի խիստ վերակացուների մէջ: Արտուրը մտածել ան-

գամ չէր համարձակում հանգստանալու. հազիւ թէ նա թուլացած դադարեց գործելուց, և ահա իսկոյն շառաչեց կվեմբօի մորակը ու նորա քնկոյշ մորթու վերայ արիւնոտ վէրք գոյացաւ. նա պիտի աշխատէր՝ մինչև խիստ կ'նուաղէր:

Ա երջապէս կէսօրի մօտերքը առ ժամանակ պատ թողին աշխատելուց և ստրուկներին երկու ժամ հանգիստ տուին, երբ նոքա պիտի ուտէին իւրեանց խղճուկ ճաշը: Յետոյ վերակացուները նորից պատուիրեցին բանն սկսելու, և շարունակուեց մինչև խիստ մթնելը: Երբ արելը թագկացաւ մօտակայ լեռներում, բոլոր նեղքներին տարան իւրեանց խրճիթները, որոնք գտնուում էին բարձր պարապով պատած հրապարակի վերայ. խեղճերին տուին իւրեանց ընթրիքը և փակեցին այն մեծ գոները, որոնք միաւուրում էին նեղքների բնակարանը դաշտի հետ: Այժմ իւրաքանչիւրը պիտի մտածէր, թէ ինչպէս տեղաւորուեն այդ գիշեր իւրեանց բնակարանում:

Չնայելով, որ սարսափելի յոգնած էր ու խիստ խոռված էր հոգւով սակայն Արտուրը սոված էր և ագահութեամբ կերաւ այն անհամ մնէ արգանակը, որ զրին նորա առաջ ինչպէս մի շան առաջ: Յանհարծ նա խիստ ոռնալու ու հաշելու ձայներ լսեց, որ լսում էին պարապից և ահից վերթուաւ:

— Այս ի՞նչ բան է, ակամայ հարցրեց նա իւր հարեան երիտասարդ նեղբին:

— Զե՞ն լսում ի՞նչ է, պատասխանեց նա: Սոքա մեծ շար չներ են, որոց շղթաները միշտ գիշերները քանդում են, որպէս զե արգելեն ստրուկներին փախ-

չելու. վայ նորան, ով կիորձի պարսպից դուրս թըռչւ չելու: Այդ արիւնածարաւ գաղանները մի քանի րոպէում կտոր կանէին նորան:

Արտուրը դողաց: Նթէ առաջ մտածում էլ էր փախչելով ազատուել այժմ նա անկասկած պիտի թողնէր այդ միտքը:

Մատաղահաս նեգրը, որ պատմեց տղային շների մասին, շատ քաղցր էր վարւում նորա հետ: Նա առաջարկեց Արտուրին գիշերը իւր խրճիթում անցկացնելու, որպէս զե, թէպէտև փոքր, ազատէր նորան գիշերուայ ցրտից: Տղան շնորհակալութեամբ ընդունեց այս առաջարկութիւնը: Նորա համար մի փոքր միսիթարութիւն էր գտնել գոնէ մի մարդ, որի հետ կարողանար նա բաժանել իւր ցաւերը:

Միւս օր առաւոտ վաղ նորից սկսան աշխատել միենոյն ձեռվ և երրորդ ու հետևեալ օրերը: Միմիայն կիւրակէ օրերը ազատ էին ստրուկները, բայց այդ օրերին էլ նոքա իրաւունք չունեին պարապից գուլս գնալու, — դռները ամբողջ օր փակուած էին: Զարհուրելի էր տղայի վարած կեանքը, սա լի էր զրկանքներով ու խղճուկ էր. հարիւր անգամ ցանկանում էր նա մեռնելով ազատուել այս զարշուրելի տանջանքներից, բայց մահը չէր գալս ազատելու նորան: Բայց դորա համար էլ Աստուած միսիթարիչ ուղարկեց նորան, որին նա ամենից քիչ էր սպասում այս գերութեան մէջ: Մի կիւրակի Արտուրը նստած էր խրճիթի դասն մօտ ընկղմուած տևուր մտածմունքների մէջ, որ բաժանում էր մատաղահաս նեղբի հետ և դառն արտասուքներ էր

թափում: Յանկարծ նա զգաց, որ մեկը նորա ուսին
մի թեթև զարկեց և լսեց մի քաղցր ձայն, որ ա-
սում էր նորան, մի' լսր, որդի, Ամենակարող Աս-
տուածը կ'իղձայ քեզ վերայ և քո ախութիւնը ու-
րախութեան կ'փխուի: Նա չե թողնում իւր վերայ
յուսացածներին:

Արտուրը զլուխը բարձրացրեց և տեսաւ մի
վաթսունամեայ պառաւ կին, որ նայում էր նորան
մեծ կարեկցութեամբ: Նա շատ լաւ էր ճանաչում նո-
րան: Նա բարի Բետահ պառաւն էր, այսպէս էին անուա-
նում նորան Միստէր Գրումմնդի բոլոր նեղրները:
Նա, ինչպէս և մանուկը, Արոպական ծագումից էր, մի
բարի, աղնիւ ու զարգացած կին էր, որի թշուառ
զրութիւնը ամենի մէջ կարեկցութիւն էր զարթեց-
նում: Նորա խսկական ամուսինը մի սարսափելի ան-
պիտան, զող և արբեցող էր ու երկարտու ամուս-
նութիւնից յետոյ չիմանալով ինչպէս վճարել իւր
պարտաւորութիւնները, վաճառեց նորան սորկուհի
լինելու: Միստէր Գրումմնդը գնեց այս կնօջ: Նա
ծերութեան պատճառաւ այլ ևս չէր կարողնում
դաշտային աշխատանքները կատարել, ուստի և պէտք
է նեղրների համար կերակուր եփէր, հիւանդներին
պահէր և այլն: Նա բոլորալին բարի էր ու քաղցր
և անտրտունջ տանում էր իւր թշուառ վիճակը:
Նոյն խսկ վերակացուները, մինչև անգամ և խիստ
կլիմօն, յարգում էին նորան, խսկ սորուկները
քիչ էին մնում ձեռների վերայ մանածէին նորան:
Նա վակուց արդէն նկատել էր խեղճ սպիտակ ման-
կան և այժմ յաջող հանգամանքներից շահուելով

մօտեցաւ նորան և սկսեց միսիթարել նորա վշտակոծ
սիրալ:

Մի լսր, ասաց նա, երկրորդ անգամ: Պատմի՛ր
ինձ քո յաւիդ ու նեղութեանդ պատճառը, զուցէ
ես կարող եմ օգնել քեզ գործով կամ խորհրդով:

Ա՛ն, բարի Բետահ, պատասխանեց Արտուրը
խոր հոգւոց հանելով, ինձ օգնութիւն չկայ երկրիս
վերայ: Մահը միտյն ինձ համար բարերարութիւն
կլինէր, ես ամենքից թշուառ մարդ եմ ամբողջ աշ-
խարհում:

Դու զի՞ ջահել ես և պիտի իմանաս, որ
կայ Ամենուղորմ Աստուած, իսկ զու յուսահատ-
ւում ես, ասաց բարի պառաւը, մի թեթև նախա-
տելով: Զէ, զաւակս, աղօթիր երկնաւոր Հօրը՝ ամեն
բարութեան Աղբիւրին և նոր կմիսիթարէ քեզ, ինչ-
պէս միսիթարում է ամեն մի եւր անունը տուողին:

Արտուրը ուշագրութեամբ լսում էր և աշխա-
տում էր ոչինչ բան ուշագրութիւնից չմողնել պա-
ռաւ Բետահի ասածներից: Իրեք ոչ ոքի խօսքերը
գետ այնպէս սասափկ չէին ներգործել մանկան հո-
գու վերայ և նա ցանկացաւ անպատճառ պատմել
նորան իւր ամբողջ թշուառ վիճակը: Նա կատարեց
այս և բարի պառաւը մեծ կարեկցութեամբ լսում
էր նորան:

Խեղճ տղայ, ասաց նա, արտասուքը սրբելով,
որ կամաց հոսում էր նորա ալեօր այտի վե-
րայից, այո՛, չնայելով որ ջահել ես, այնու ամենայ-
նիւ գու արդէն շատ ցաւ ես կրել սակայն այդ ա-
մենը գետ իրաւունք չեն տալի քեզ յուսահատուե-

Հու և արտննջելու Աստծուց: Աստուծոյ գործերը անքըննելի են և շատ անգամ անթափանցելի: Խաւարելց յետոյ տանում է դէպի բարերեր լոյս: Քո դէմ խիստ են մեղանչել և կեղտոտ խարերայութիւն են գործ զրել բայց որովհենու Աստուած այդ թոյլ է տուշել դու պէտք է համբերութեամբ տանես այդ տանջանքները և անես — ամեն բանում նորա սուրբ կամքը թող լինի: Դու հայրական ամրոցումի մեծացել ես առանց վերահայեցողութիւնն և երբէք չես էլ լսել Տէր-Աստծու անունը. դու չարչարել ես հօրդ ծառաներին, և քո բոլոր գործերը չար ու ապօրինի են եղել: Ես կարծում եմ, որ Ամենաբարձրեալի Խասուածային իմաստութիւնը այսպիսի ծանր փորձերի է ենթարկում քեզ, միայն ուղղելու համար: Դու ժամանակով բարի ու ազնիւ մարդ դարձած կվերադառնաս քո ժառանգական ամրոցը և քո ծառաներիդ համար կլինես ոչ թէ կոպիտ ու խիստ հրամանատար, այլ ողորմած հայր: Ես կարծում եմ այսպէս է Աստուծոյ դիսաւորութիւնը: Նա ամենաապու միջոցներ է ընարել որպէս զի քո միաքը լուսաւորուի և սովորցնի քեզ հեղութիւն և ողորմածութիւն: Դու այժմ պիտի կրես չարչարանք ու թշուառութիւն, որպէս զի ժամանակով ընդունակ լինիս ուրիշ շատերին բազտաւորացնելու, որոց հետ, եթէ այս փորձերը չլինէին, անպատճառ խիստ ու անարդար կվարուեիր: Դու գեռ պիտի ծառայես, որ ժամանակով կարզանաս Սոլոմոննեան իմաստութիւնմբ հրամայել:

— Աստուած ասայ, որ այդպէս լինի, ասաց Ար-

տուրը՝ Խիստ շարժուած բարի պառաւի խրաներով: Եթէ քո խօսքերը ձշմարիտ են, եթէ ես յիրաւի երբ և իցէ ավատուեմ և իրաւունքներս ձեռք բերեմ, ոչ, այն ժամանակ ես իմ հպատակներիս հայր կլինիմ: ձշմարիտ ես ասում, ես յիմար ու գիտ աղայ էի և իմ ներկայ անբաղդութեանս վերայ կաշխատեմ նայել ինչպէս մի Աստուածային արդար պատժի վրայ:

— Եթէ այդպէս կանես, ուրիմն չեշտ կարողիս կրել բոլոր տանջանքներն ու նեղութիւնները, մինչև որ քո աղատութեան ժամը կ'զարկի: Յցագ Աստծու վերայ դիր, նա չի թողնի քեզ աղօթիր նորան միշտ և ամեն աեղ — գաշտում, աշխատանքի ժամանակ, անտառում, քնելիս և վերկենալիս: Աստուած կ'ըսի քո աղօթքը: Խոձ էլ իբրև մայր ընդունիր քեզ, և իշտ կ'սիրեմ քեզ մայրական անկեղծ սիրով: Արտուրը արտասուալից աշքերով ընկաւ նորա փոռւած շորերի վերայ և կպաւ բարի պառաւի կրծքին: Նորա կեանքում այս առաջին ուրախութեան արտասուքն էր և սա շատ թեթևացրեց նորա ձնշուած սիրալը: Այս օրից նա բոլորսին փոխուեցաւ: Քաջութիւնն ու յօյսը նորից վերադարձան նորա հոգու մեջ, իսկ ստրկութիւնը, որ առաջ յուսահատութեան էր հասցնում նորան, տանում էր համբերութեամբ և նայում էր նորան, իբրև Աստուածային արդար պատժի վերայ՝ մանկութեան յանցանքների համար: Բարի Քետարի պառաւը սովորցրեց նորան ձանաշել Աստծուն և աղօթել նորան և ողորմած Արարչե մասին մտածմունքը միուն-

գամից լուսաւորեց նորա հոգւոյ մթութիւնը ու նորոգեց նորա յոյսը:

Աստծու կամքը թող լինի, ասում էր Արտուրը այսուհետեւ, իւրաքանչիւր նոր շարշարանքի ժամանակ և Աստուծոյ մասին մտածմունքը օգնեց նորան դժուարութիւններին ու աղքատութեանը տանելու: Չնայելով իւր ստրկութեան, նա ծաղկեց ինչպէս մի գեղեցիկ բոյս: Նորա մարմինը կազմուրուեց, այտերը վարդի նման կարմիւցան, ցաւից պղտորած աշերը նորից փայլեցին կեանքի ու մարդկութեան կրակով: Բետախն աղատեց նորան, ցոյց տալով Այն, Որից բղնաւմ են ամեն բարիք, ամեն ուրախութիւններ ու ամեն տիպութիւններ:

Բայց այսուեղ ստրկութեան մէջ ով կմտածէր զօրա մասին: — Արտուրը լաւ կրթութիւն էլ ստացաւ: Նա սորա համար էլ պարաւական էր բարի Բետախ պառաւին: Նա, ինչպէս արդէն ասացինք, ինելօք ու կրթուած կին էր: Տեսնելով, որ Արտուրը զուրկ է կրթութիւնից՝ վճռեց պարապել նորա հետ: Ամբողջ կիւրակի օրերը և մինչև անգամ հասարակ օրերն էլ երբ ազատ ժամանակ ուներ, Արտուրը նրատած էր բարի պառաւի մօտ, որը փոքր առ փոքր սովորցրեց նորան իւր բոլոր գիտեցածը: Արտուրը շատ ջանանք ու ուսումնամէր աշակերտ էր և մեծ եռամդով պարապում էր այն գիտութիւններով, որի մասին առաջ չէ միայն ոչինչ հասկացողութիւն չունէր, այլ մինչև անգամ շգփակ էլ թէ գորտնք գոյութիւն ունեն: Նա Բետախից սովորեց կարդալ գրել թուարանութիւն, պատմութիւն աշխարհա-

զրութիւն և այնքան մանրամանաբար, որ հապես կարողանար այնպէս ուսումնարանում սովորել:

Պառաւը անդադար պարապում էր: Նա, ՚ի հարկէ, չուներ ոչինչ գպրոցական ձեռնարկ, բայց դարձեալ չէր դարձարում: Թղթի փոքրիկ կտորների վերայ նա զրում էր Արտուրի համար պատմութեան ու աշխարհապրութեան գաներ: Ծղան այս թղթի կտորները հաւաքում էր գաշտից, պարապ ժամերին օգուտ քաղելու՝ դասերը կրկնելու համար: Կիւրակի օրերը Բետախն քննում էր նորան և աւելացնում էր մի քանի նոր մանրամանութիւններ: Այսպիսով նա փոքր առ փոքր զարգացրեց Արտուրին այնպիսի գիտութիւններով, որոց հապել թէ կարողանար նա ստանալ տանը ապրելով: Մանուկը այնքան ջանանք էր, որ երբեմն գամը պատրաստելիս մնուանում էր աշխատանքը և յետոյ ստիպուած էր տանել այս խխտ պատիժութէ Բայց նա սորա վերայ ուշադրութիւն չէր դարձնում, այլ ընդհակառակն որոնում էր ու գրանում էր իւրեան միիթարութիւն իւր մոտառը զանձարանը հարստացնելու մէջ:

Այսպէս անցաւ մի քանի տարի Արտուրը դառաւ մի գեղեցիկ, բարձր ու ուժեղ երիտասարդ: Նա մօտ տանեւութ տարեկան էր, երբ մի կիւրակի Բետախն կանաց մօտեցաւ նորան ու ասաց.

— Իսր, որդիս: Ինձ թւում է, թէ քո փորձերիդ վերջը մօտեցել է: Նս շատ աշխատեցի, որ մի գէպք գտնեմ քեզ փախցնելու, սակայն մինչև հիմայ չյաջողուեց: Նս մի եղաջը ունեմ: Նա բարի ու ազնիւ մարդ է, միայն ցաւում եմ, որ աղքատ է,

ապա թէ ոչ փաղուց արգէն ինձ կ'զնէր այս սոլոր-
կութիւնից: Աս երեկ խօսեցի նորա հետ քո մասին:
Նա մի գեղեցիկ ձիունի: Եղբայրս համաձայնեց այն
քեզ տալ մինչև Ֆիլադելֆիայ: Այնտեղ դժուար չէ
լինիլ մի անդղիական նու գտնել որ կարող է քեզ
ապաստանարան լինել: Վաղը դու պիտի փախչես:
Երեկոյեան երբ գործը կաւարտեն և տուն կվերա-
դառնան, դժուար չէ լինի քեզ փախչելու: Զի՞ն կը
գտնես վարելահողից ոչ հեռու Ֆիլադելֆիայի մեջ
ճանապարհի վերայ, նու ծառից կապած կինի: Նրա-
տիք նորա վերայ և գնա առանց յետ նայելու: Գի-
շերուայ մթութիւնը կմժագցնի քեզ հետախոյցների
աչքից, բացի դորանից նոցա ոչ ոք ել չի ասի, թէ
որ ճանապարհով ես ուղեսորուել դու: Ֆիլանդել-
ֆիայում ձին կյանձնես «Կազմիայ աերե» անուա-
նած հիւրանոցում, որ հեռու չէ նաւահանգստից:
Եղբայրս ել այնտեղ կ'գայ ձին վերցնելու: Իսկ այժմ
լոիր: Լաւ մոտածիր առածներիս վերայ և ոչ ոքի
բան մի տսի: Վաղը արեւը ծագելուց առաջ ես կը
գամ քեզ մօտ և նշան կ'տամ: Ոյզ կնշանակէ որ
ձին պատրաստ է: Առիր, և չնօրհակալութիւն մի
արտ ինձ: —Աստուած պահպանի քեզ:

Մինչև որ Արտուրը զարմանալուց ու ուրախու-
թիւնից կ'կարսզանար սթափիել, պառաւն արգէն
անյայտացաւ: Նա գիշերն անցկացրեց խիստ ազմկած
հոգւով, սակայն միւս օրը բալորովին հանգստացաւ, ոչ
ոքի չցոյց տալով՝ թէ նորա հոգու մէջ մի անբնական
բան է անցնում: Երեկոյեան եկաւ թետախն և պայ-
մանադրած նշանը տուաւ: Արտուրը մի քանի բոպէ

էլ սպասեց, մինչև որ բոլորովին մթնեց: Հազիւ թէ
ստրուկներին հրամայածէր հաւաքուելու, նա խկոյն
թաքկացաւ մօտակայ թփերի ետև և այսաեղեց
ամենայն գօրութեամբ փախաւ այն տեղը ուլ ձին
պիտի լինիր: Ճշմարիտ որ նա աեսաւ ծառից կապած
մի ձի: Ձիու մօտ խոտի վերայ նատած էր իւրեան
անծանօթ մի մարդ: Նա Արտուրին տեսնելուն պէս,
իսկոյն վերթուաւ տեղեց, շտապեց դէպի նա և
տուաւ նորան մի քանի ոսկի:

—Ես եետափի եղբայրն եմ ասաց նա: Եռւա ձի
նսաեցէք և թռէք Ֆիլադելֆիայ: Մի՛ ինայէք, սո-
րան, սա առաջը ու պնդակազմ անասուն է և կա-
րող է տեղ հասցնել Դէ՛հ, Տէր լնդ ձեզ:

—Աստուած օրհնի ձեզ և ձեր բարի քրօջը, իմ
սիրելի մօրս, պատախանեց Արտուրը՝ ձի նստելով:

Բետափի եղբայրը մի թեթև զարկեց ձիուն և
նա խկոյն և եթ առանց յետ նայելու փախաւ:

Արտուրը հիացած էր, բայց այս հիացումը
շուտով մթնեց՝ մոտածելով, թէ կալող են իրան հաս-
նել և բռնել: Նա խիստ քշում էր ձին և սա թըռ-
չում էր թռչունի պէս: Արտուրը գեռ մանկութիւ-
նից լաւ ձի նստել դիտէր, այս հանգամանքը այժմ
շատ օգնեց նորան: Նա պէտք է առանց հանգստա-
նալու արշաւէր վարելահողից մինչև Ֆիլանդել-
ֆիայ, որին հասաւ առաւօտեան արշալուսին: Ար-
տուրը վաղեց դէպի հիւրանոցը. ձիուց վայլ իջաւ,
և յանձնեց ախոռապետին, ասելով, որ յանձնի այն
ում հարկն է: Յետոյ առանց կանգնելու վագեց դէ-

պի նաւահանդիստը, յոյս ռւնենալով, որ այնաեղ կդժնի մի որևէ Անգղիական նաւ։
—Խաւարից դեպի լոյս, մրմնջաց ինքն իրան եւ բիսասարդը, անցնելով ծովի ափի մօտից։ Յանկարծ նորա հայեացքը ընկաւ մի մեծ եռակայմ նաւի վերայ։ Անգղիական զրօշի տակ։ Արտուրը հիացած նատեց հենց առաջին անգամ պատահած ձկնորսական նաւակը և պատուիրեց տանել իրան այն նաւի մօտ։ Այժմ այլ ևս պէտք չեր հետախուզութիւնից վախենալ։ —Խաւարից դեպի լոյս, նորից աղաղակեց Արտուրը թռչելով նաւի տախտակամածի վերայ։ Նա ձեռները ծալեց, աչքերը բարձրացրեց դեպի երակնք և ասաց, «Աստուած, Հայր Երկնաւոր — շնորհառ կալ իմ քեզոնից։ Դու մինչեւ ցայժմ օգնեցիր ինձ — օգնիր և այժմ էլ»։

ՔՈՒԻԹ ՏԱՄՆԵՐՈՇ

||, ո յ ս:

Արտուրը կանգնած էր տախտակամածի վերայ և աչքերով որոնում էր մէկին, որ կարողանար տանել նորան նաւի հառավարչի մօտ։ Յանկարծ նանկատեց, որ մի ալեռոր մարդ գուրս եկաւ նաւասենեկից և սկսաւ բարձրանալ սանդիստով տախտակամածի վերայ։ Ծերունին կամաց բարձրանալով տախտակամածի վերայ՝ կանգնեց, ու կամենում էր իմանալ թէ որ կողմից է հողմը փչում և յետոյ պատահամբ դարձաւ այն կողմը, ուր Արտուրն էր

կանգնած։ Արտուրը ապշեց։ Ծերունու դէմքը նորան ծանօթ թռուաց։ նա աշխատում էր մտաբերել թէ ուր է տեսել նորան։

— Տէր իմ Աստուած, յանկարծ գոչեց Արտուրը, սա Ֆրանցիսկն է, ծեր, բարի Ֆրանցիսկը, հօրս ամբոցի կառավարիչը։ Ֆրանցիսկ, Ֆրանցիսկ, աղաղակեց նա աւելի բարձր և արագ քայլերով սկսաւ մօտենալ ծերունուն։ — Ֆրանցիսկ, մի՞թէ ինձ շես ծանաչում։

Կախկին կառավարիչը մինչեւ այդ ժամանակ գեռ չէր նկատել տախտակամածի վերայ կանգնող անձանօթին, այժմ էլ զարմացմամբ նայեց նորան, յանկարծ գոշաց և յետ ու յետ վնաց։

— Ո՞վ սուրբ խաչի զօրութիւն, գոչեց նա։ — Մեռելները գերեզմաններից վեր են կենում։ Աստուած սիրես, այ մարդ, ասա ով ես գու։

— Իրաւ չես ճանաչում ի՞նձ, Ֆրանցիսկ, աղաղակեց Արտուրը։ — Ես աւելի լաւ յիշողութիւն ունեմ քեզանից։ Ես հենց առաջին նայելուց իմացայ, որ գուք մեր ամրոցի կառավարիչն էք։

— Տէր իմ Աստուած, սա նա է, Արտուրն է, իմ հանգուցեալ Լօրդիս կենդանի պատկերը, գոչեց այժմ ծերուկը և իւր գողդոչուն ձեռները տարածեց դեպի երիտասարդը։ — Այս նորա աչերն են, աշա էննէսէլյ Լօրդի ժառանգական ճակաար, այս նոյն իսկ քիթն է, որ նա մի անգամ ձիուց վայր ընկնելիս ջարդեց։ Տէր իմ Աստուած, — իսկ Աստուածոյ, այ մարդ, ասա ով ես գու։

— Ես Արտուրն եմ, Լօրդ էննէսէլյի գաւակը, իսկ

դու բարի Ֆրանցիսկն ես, որ շատ անգամ ձեռքին
ման է ածել ինձ, պատասխանեց Արտուրը:

Ծերուկը բարձր ճշաց, իսկ երիտասարդը ընկաւ
նորա գիրկը:

— Այս, դու ես,—սա իմ Լորդիս զաւակն է, իսկ
և իսկ նա է, գոչեց Ֆրանցիսկը: Գերեզմանները բաց-
ւում են. կամ չէ, Աստուածային ողորմութիւնն, ու
իմաստութիւնը բաց են անում մեզ մի իմաստ ու
չսուած չարագործութիւն: Ո՛չ, ես նախազգացի,
որ այստեղ մի անազնիւ բան կայ: Ես ոչ մի կերպ
չէի կամենում հաւատալ քո մահուան լուրին.
Ինքս զնացի Բրադֆորդ և միայն նոյն իսկ վերա-
տեսչի բերանից լսելով այս՝ վերջապէս ստիպուած էի
հաւատալ որ դու մեռել ես: Սակայն ես էլլ
կասկածում էի, կասկածում էի միշտ, կասկա-
ծում էի մինչև ցայդմ էլ: Եւ ահա, —իմ գալու-
նի յօյսը կատարուեց: Պատմ' ինձ, կամ չէ, աւելի
լաւ է պատմես իմ նոր պարոն ծովապետ Համբոնի
մօտ: Նա քեզ կապաշտպանի և կօգնի քեզ ժառան-
գութիւնդ. վերագարձնելու: Գնանք նորա մօտ: Տէր
Ապուած, ինչպէս անիմանալի են Քո Ճանապարհ-
ները և ինչպէս հրաշալի կերպով անց ես կացնում
նորա վերայօն Քո մանուկներին: Սիր Թովմաս Լոռվէլը՝
քո անամօթ հօրեղայրը, զիտութեամբ հեռացրեց
ամրոցից իւր եղբօր բոլոր հաւատարիմ ծառաներին,
որպէս զի ապահովի իւրեան բազմաթիւ կասկածա-
ւոր մարդերից, որոնք կարող եին բանալ նորա յան-
ցանքները և սոյն այս հանգամանքը, որ ստիպեց
ինձ համար ուրիշ տեղ գտնել իմ կեանքիս արևմտի

Ժամանակ բերեց ովկիանոսի այս կողմը՝ մի ուրիշ
աշխարհ, որպէս զի կարաղանամ վկայել քո օգտի
մասին: Ոյստեղ պարզ երեսում է, որ Աստուծոյ
մատը խառնէ սորանում: Առանց իւր վկայութեան
զժուար կարող էիր համոզել ծովապետ Համբոնին,
թէ զու Եննէլէյների ծագումից ես: Բայց գնանք
նորս մօտ: Նա հեռու բարեկամ է հօրդ և խղճա-
լով վերցրեց ինձ իւր մօտ ծառայելու, նա անպատ-
ճառ կ'արեկցի և քո վեճակիդ:

Ծերունին մի տեսակ երիտասարդական եռան-
գով ոգեսորուած՝ տարաւ Արտուրին ծովապետի նա-
ւասենեակը:

Համբոնը զարմացմամբ վեր կացաւ տեղից, երբ
Ֆրանցիսկը ներկայացրեց նորան երիտասարդին և
արտաքերեց Արտուր Եննէլէյնի անունը և հրաւի-
րեց նորան նատելու:

— Խօսեցէք, խօսեցէք, երիտասարդ, ասաց նա:
Որովհետեւ իմ ծեր Ֆրանցիսկը վկայում է ձեզ հա-
մար, ես երբէք չեմ կասկածում ձեր աստծների նըշ-
մարտութեան մասին ձեր ծագումի վերաբերութեամբ:
Ինձ միայն խորթ է թւում, որ Լօրդի զաւակը, իմ
լրաբեկամներից մինը երեսում է ինձ սարկի շրե-
րով, Բայց յիրաւի, Փրանցիսկ, այս երիտասարդը
մեցէք, մատաղ, ուզում եմ իմանալ թէ ինչ կարող
եմ անել քեզ համար:

Արտուրը պատմեց ծովապետին բոլոր իւր պիսի
անցածը հայրական տնից հեռանալուց: Եթէ որ Հա-
մբոնը զիս ես կասկածում էր իւր առաջ կանգ-
միլուոնը զիս ես կասկածում էր իւր առաջ

նող երիտասարդի ծագման մասին, վերջինի պատմութիւնը արդէն ամեն կասկած ցըեց: Արտուրը մոտեբերեց մի քանի անցքեր իւր մանկութիւնից, որոնք կարող էին յայտնի լինել միտյն նորան և ֆրանցիսկին: մանրամասնաբար նկարագրեց ամրոցի աեսքն ու ձեր և ինքը խոստովանեց, որ տանը ինքը զիժ, կամակոր և անհնազանդ երեխայ էր: Նորա պատմութիւնից մի քանի հանգամանքներ յայտնի էին և նոյն իսկ ծովապետ Համբաւոսին և այժմ նորա կասկածները անյայտացան, ինչպէս անյայտանում է խուարը ծագող արեի ճառապայթների առաջ:

— Այս, այսուղ զարհուրելի շարագործութիւն է յայտ գալիս, ասաց նա հանդիսաբար, երբ Արտուրը աւարտեց իւր պատմութիւնը: Տէր Ասառածը, որ այդ թոյլ տուեց, կ'օգնի մեզ բանալու այն և չարագործին պատճելու: Մենք իսկոյն և եթ Անդղեայ կուղերուինք, ես առանց այդ էլ այսօր կամենում էի խարիսխը վերցնել Այնուղ քեզ երես առ երես կ'հանդնացնենք քո չարագործ հօրեղբօրդ հետ և վեր կառնենք նորանից նենգութեան դիմակը: Դու պիտի ստանաս քո իրաւունքները, Արտուր, եթէ հօրեղբայրդ չե համաձայնի տալ քեզ հայրական ժառանդութիւնդ՝ այն ժամանակ մենք օրինաց զօրութեամբ կատիպենք նորան տալ:

Ծովապետ Համբաւոնը չուշացրեց իւր խոստումը կատարելու: Նոյն իսկ օրը նորա նաւը Ճանապարհ ընկաւ և փեց շաբաթից յետոյ Արտուրը նորից սկըսեց իւր հայրենիքի օդը շնչել: Նա ծովապետի ու

Ֆրանցիսկի հետ միասին Դուվը մօտ մտաւ անգղիական հողը և երկքը միասին խաղյն Ճանապարհ ընկան գէպի Եննէսլէյ-Ասաւլ:

— Եթէ մենք զեռ կենդանի գտնէինք պառաւ Մերի Բլունտին, շատ օգտակար կլինէր մեզ այդ: Նորա վկայութիւնը շատ կօգնէր մեզ: Սակայն եթէ նա մեռած էլ լինի այնու ամենայնիւ գեռ էլի յոյս ունիմ նպատակին համելու: Պէտք է յանկարծ երեալ յանցաւորին, որպէս զի աւելի լաւ ստիպենք խոստովանուելու:

Առքա հասան այն գիւղը, ուր երբեմն պառաւ Մերին ընդունեց իւր տուն յոզնած ու սոված Արտուրին և մեծ ուրախութեամբ լսեցին, որ նա զեռ պատճելու: Բարի պառաւը իսկոյն Ճանակնդանի է և առոյդ: Բարի պառաւը իսկոյն Ճանակնդանի է և խիստ ուրախացաւ նորա համար: Եսկ երբ նորան սասցին, թէ գուցէ հարկաւոր լինի նորա վկայութիւնը, որպէս զի օգնի Արտուրին հայրական ժառանդութիւնը վերագարձնելու համար՝ այն ժամանակ նորա ուրախութիւնը փոխուեց մեծ հիացման:

— Ես հազար անգամ կ'երգուեմ, որ այս երիտասարդը իմ Լօրդիս զաւակին է, ասաց նա: Ել ո՞վ պիտի իմանայ այդ, եթէ ո՞ւ ես զորա հօրն ակ ձեռիս ման եմ ածել: Այս, ես ոչքից չեմ վաել ձեռիս ման եմ ածերկիւդ կ'կանգնեմ չարագործ սիր Թոփիսի, այն տմարդի խարեբայի առաջ:

Մերիին հրաւիրեցին գնալ իսկոյն Արտուրի ու ծովապետի հետ Եննէսլէյ-Ասաւլ և նորա անյապաղ հայրենիքի ընկան: Համբաւոնը ՚ի զգուշութիւն վեր Ճանապարհ ընկան:

առաւ իւր հետ կարևոր դէպքի համար և մի իրան ծանօթ իրաւագէտ:

Այդ խումբը յաջողութեամբ հասաւ էննէսլյամատ: Միւր թովմասը տանն էր: Ծովագետ Հայիլտօնը հրամայեց յայտնել իւր գալուստը: Ամենքը կառքից դուրս եկան և բարձրացան քարե լայն սահմարտի վերայիդ:

— Թթէպէտ ևս չեմ կասկածում, ասաց ծովապետը
շածր ձայնով, որ մենք հասարակ ճանապարհով էլ
կհասնենք մեր նպատակին, սակայն կարծում եմ, որ
մեր յանկարծակի մոռնելը առաւել կօգնէ մեզ։ Ամեն
ժամանակ պէտք է զգոյշ կենալ։ Ինչ, քաջալերուիր,
Արտօնւր։ Համարձակ գնա շարագործի մօտ և մի վա-
խիր, մենք իսկոյն կազմակենք քեզ։ Յառաջ։

Ծառան (բազմաւորաբար ժանը չէր նա) հիւ-
րերին տարաւ իւր պարոնի սենեակը։ Նախասեննե-
կում ծովապետ Համիլտոնը իրը անգիտակցաբար նո-
րան սկսեց մի բան հարցնել։ Այդ միջոցին Արտօնը
դուռը բաց արաւ և միայնակ մտաւ սիր Թովմափ-
առանձնասենեակը։ Մանելիս նա իրը անհոգութեամբ,
այլ իսկապէս գիտութեամբ, դուռը կիսատ բաց թո-
ղեց, այնպէս որ նորա ուղեկիցները, որոնք գանւում
էին հարեան սենեկում, իրաքանչիւր խօսքը կարող
էին լսել։

Այս սենեակը, ուր մտաւ Արտուրը, երբեմն
նորա հօր առանձնասենեակն էր: Գոան զէմ պա-
տուչանի մօտ նստած էր սիր Թովմասը: Արտուրի
մտնելիս՝ նա վերկացաւ բազկաթոռի վերայից և ա-
ռաջ եկաւ դէպի նա (սիր Թովմասը մթան մէջ չկա-

լողացաւ ծանսաչել նորան): Արտուրը շուառվ մի
կողմ քաշուեց և այնպէս կանգնեց, որ լապտերի
լոյսը ուղղիղ ընկնում էր նորա դէմքի վերայ:
Հօրեղբայր թովմաս, ասաց նա ծանր կերպով—
ես դարձեալ այստեղ եմ:

—Աստուած իմ—Արտուրն է, աղաղակեց սիր
Քովմասը՝ շփոթուած այս անակնկալ երեսյթով՝ Ա-
մերիկայից փախար, այ տղայ, դու կտրեցի՞ր սովը-
կութեան շղթան։ Մի՞թէ ես երբէք չպիտի ազա-
տուեմ քեզանից։

—Աստուած է աղասում ինձ, հօրեղայր, պատասխանեց Արտուրը հաստատ ձայնով.—և այժմ ես այլ ևս այն անպաշտպան երեխան չեմ, որին գուծախեցիր անբարոյական նաւապետ Անդերսոնին: Ես ձանաշում եմ իրաւունքներս և եկել եմ քեզանից պահանջելու այն:

— Իու կ'ստանաս ինչ որ հարին է, գոչեց սիր
թովմասը զարհուրելուց խելքը կորցնելով և զան-
գահարեց: Այո՛, դու երբեք այլ ևս չես դուքս գալ
այս ամրոցից: Ամբողջ կեանքդ մութ բանտում
կանցկացնես և ամբողջ կեանքումդ կ'զջաս, որ
դարձեալ համարձակեցար անհանգիստ անել ինձ:
Փան, Փան:

Ետևի սենեկի դուռը յանկարծ բացուց և
սենեկապետը մտաւ Լօրդի սենեակը: Նորա դէմքի
վերայ երևեցան զարհութանք և երկիւղ, երբ տե-
սաւ իւր առաջ հասակաւոր բարձրահասակ, գեղե-
ցիկ ու առողջ երիտասարդին:

— Гимназия, где

— Այս, նա ինքն է, ասաց սիր Թովմասը սթափուելով արդէն առաջին զարհուրտնքից: Սա եկելէ դարձեալ անհանգստացնելու մեզ բայց երդումեմ, որ այս վերջին անգամը կլինի: Բռնիր սորտն, ժան, թող դա մութ բանտումը կորչի:

Ժանը վրայ ընկաւ Արտուրին, բայց նա յետ մղեց նորան և մօտեցաւ հօրեղբօրը:

— Մտածիր, հօրեղբայր, ասաց նա հանդարտութեամբ, այն բանի վերայ, ինչ որ զու ուզում ես անել: ԶԵ՞ որ ես այլ ևս երեխայ չեմ, որ երբեմն ձեզ զողալով հնապանդում էր: Քու կամքովդ տուր ինձ իմ ժառանգութիւնը և այն բոլորը, ինչ որ դու ինձ արլեցիր, բոլոր տանջանքները, որ տուիր ինձ, վաճառելը՝ ի սարկութիւն—բոլորը կ'մոռացուին: Հակառակ գէպքում ես կարսղ եմ օրինաւոր կերպով ստանալ իմ ժառանգութիւնը և այն ժամանակ քեզ կմնայ բանտ կամ մինչեւ անգամ կախաղան:

— Ան անգամ չեմ կամենում, երբէք չեմ տալ բոնիր գորան, ժան:

— Կանգնիր, գոշեց յանկարծ մի հրամայողական ձայն և մոտաւ այնաեղ ծովապետ Համիլտոնը, ծերունի Ֆրանցիսկի, իրաւագէտի և պառաւ Մերիի շետ:

— Այր Թովմաս Լոռեփէլ սկսեց առաջինը, դուք արդէն խոսառվանեցաք, որ այս երիտասարդը Արտուր էննէլույն է: Մենք չորսս էլ լսեցինք այդ: Ահա Ֆրանցիսկը, նորա հօր ու քու եղբօր ծեր ծառան, ահա Մերի Բլունտը՝ ձեր հանգուցեալ մօր աշխախինը: Այս երկուսը պատրաստ են վկայելու դա-

տաստանի առաջ, որ այն երիտասարդը Լօրդ Էննէլույնի որդին է: և դուք անպատճառ այլ ևս չէք ընդդիմանալ և չէք ծածկի ձշմարտութիւնը:

Կայծակնահարի պէս կանգնած էր սիր Թովմասը և չէր կարողանում մի խօսք անգամ արտաքերել: Նորա ծառայ ու խորհրդակից ժանը ուզում էր քարշել նորան, բայց ծովապետ Համիլտոնը բըռնեց նորա ձեռքը և ստիպեց կանգնելու:

— Խոստովանիր, անպիտան, գոշեց նա, ապա թէ ոչ քո վարձը կլինի կախաղանը:

— Աղօրմեցէք, ձերդ գերազանցութիւն, ողորմեցէք, խոստովանում եմ ամենը, աղերսելով գոշեց չարնգործը ծնկաչոգ:

— Խաստանում եմ, որ կեանքիդ չեմ ձեռք տալ եթէ միայն կխոստովանես ամեն բան և ոչինչ բան չես թագցնի, ասաց Արտուրը: Բայց խնդրում եմ չուշացնես: Պատասխան տուր ինձ. ո՞վ էր այն թշուառ մանուկը, որ կրթւում էր Բրադֆորդում իմ անունով:

Չարագործը վախեցած խոստովանեց ամենը, բոլորովին չ'ինսայերով իւր աիրօջ, որպէս զի, բոլը մեղքը նորա վերայ ձգելով՝ աղատի իւր կեանքը: Սիր Թովմասը լուռ ու մունջ կանգնած էր, Համարձակելով ոչինչ խօսք ասել իւրեան արդարացնելու համար: Յանկարծակի զարհուրանքը կապեց նորա լեզուն:

Ծովապետ Համիլտոնը նայում էր շարագործին կասկածու կերպով, մինչդեռ իրաւագէտը զրում էր սենեկապետի պատասխանները և յետոյ պատուիրեց վերջինին արձանագրութիւնը ստորագրելու:

— ինչ, գուշ գեռ չէք յանձն առնում, ասաց
ծովապետ Համբարձունը, դառնալով գեղի միլ թովմասը:

— Արած եմ, մրմնաց վերջենը: Իմ նախատիւնը
սպանում է ինձ: — Ո՞չ, երանի թէ ևս երբէք չ' եկի
այս անպիտանի խորհրդին:

—Ուրեմն, դու խոստովանում ես իմ իրաւունք-ները, հօրեղբայր Թովմաս, ասայ Արտուրը: Լաւ, դու էլ ստորագրիր այս արձանագրութիւնը և այնու-չետեւ ես կ'հրաժարուիմ առեն վրէժինդրութիւնից: Գնա քեզ համար Լուվել—Կաստլ և հանգիստ տի-րապետիր քո օրինաւոր ժառանգութիւններիդ:

Սիր Թովմասը ապատ չնշեց, երբ լսեց այս խօսքերը: Նա վերցրեց արձանագրութիւնը և թէպէտ դողդոշուն ձեռքերով՝ այնուամենայնիւ ստորագրեց այս: Յետոյ նա աչքերը գետին խոնարհած դուրս գնաց սենեկից և մի քանի րոպէից յետոյ թողեց ամրոցը՝ Լոռվէլ-Կառալ ուղևորուելու ու այնտեղ թագինելու իւր նախատինքը: Փանը կամենում էր հետեւ նորան, բայց ծովագետը չթողեց:

— Կեանքդ քեզ ենք պարզեւում, ասաց նա խիստ
ձայնով, և դորա համար կարողես շնորհակալ լինել
էննէլէյ Լօրդից, բայց դու նորա փոխանակ կեր-
թաս Ամերիկայ և կ'վաճառուես ստրուկ լինելու:
Քեզ առանց պատժելու ան կարելի է թողնել:

Այդպէս էլ եղաւ: Յանցաւորը ուղարկուեց Ֆիւլադելֆիայ և տրուեցաւ Միստէր Գրումմոնդին փախած Արտօւրի փոխանակ, և այնտեղ ծանր աշխատանքի մէջ զղաց իւր յանցանքները: Արտօւրն էլ լիապէս իշխեց իւր հօր ժառանգութեան: Նորա

կեանքի խաւալը տեղ տուաւ լուսին, որ ուղարկեց
նոյսն Աստուած՝ Ճանր փորձերից յետոյ:

Ասակած չկայ, որ Արտօնը իւր բաղսաւորութեան ժամանակ ընուացաւ նոցա, որոնք ծառայեցին նորան աղքատութեան ու նեղութեան օրերում։ Ֆրանցիսկը և Մերի Բլունար մնացին ամրոցում։ Բետամին էլ անյապաղ գնուեցաւ գերութիւնից։ Արտօնը գնեց նորա համար մի փոքրիկ կտոր գետին ու տնակը Պենսիլվանիայում, ուր նա հանգիստ կարողացաւ անցկացնել իւր մնացած օրերը։ Նորա մահից յետոյ Արտօնը ոյդ գետինն ընծայեց նորա եղբօրը։

Մեր պատմութիւնը վերջացաւ, սկզելի՛ ըն-
թերցող։ Եթէ սորանում շատ բան անհաւատակի ու
բոլորովին անբնական թուայ քեզ՝ կարող ես մեզ
հաւատալ որ այս պատմութիւնը գրուած է բոլո-
րովին իսկական անցքին համաձայն։ Արտուրի կեան-
քից այս իմացէք միայն։ աշխարհում այնպիսի
զարհուրելի գրութիւն չկայ, որ հաստատ յոյս ու-
ննալով Ամենակարող Աստծու վերայ՝ անկարելի
լինէր տանել այն համբերութեամբ։ Նատ ան-
գամ Աստուած իւր ծառաներին խաւարի միջեց
դէպի լոյս է տանում։ Մտաբերիր այս, երբ քո կեան-
դէպի լոյս է տանում։ Կտածկուեն մութ ամպերով, ո-
քի պարզ երկինքը կծածկուեն մութ ամպերով, ո-
րովհետեւ խաւարի մէջ քեզ մօտ գտնուում է Տէր
Աստուածը, իսկ ամպերի միջեց բարերեր արեն է
փայլում։

Ա պատրիարք կու մասունք առաջ պատրիարք է գլուխ

քառակ բնութագի պատճ նույն առաջ անդա

անդ առաջ գոյ պատճ կու պատճ անդա

Յ Ա Ն Կ

Թարգմանողի յառաջաբանը	I
Զարագործը շարութիւն և որոնում	1
Գիտ տղայ	18
Ուսոււրը սթափւում է	33
Խորին մժութիւն	47
Հնագանդութիւն	58
Ուսումնարան	72
Փախչելը	81
Մատնութիւն և վաճառութեցման մասին	95
Բետափ պառաւը	121
Եղան	132

Ա պատրիարք կու պատճ անդա

անդ առաջ գոյ պատճ կու պատճ անդա

1. «ՀԱՅՈՏԱՐՄՈՒԹԻՒՆԸ ԱՄԵՆ ԱՐԳԱԿԱՑՆԵՐԻՆ ՅԱՂ»
ԹՈՒՄ է. գործ Ֆրանց Հոֆմանի. **1877.** գին է
40 կողէկ.

2. ԽՍՀԱՐՔՑ ԴԼՎԻ 1,080. Խոյն Հոփմանի. **1877** գիննէ
40 կողէկ.

Ծախւառմ են

Թիֆլիսում՝ Պ. Զաք. Գրիգորեանցի գրավաճա-
ռանցում, ևազօր Յարութիւնեանցի
Բեյի խանութում (Ոխոնի հանգէտ)
և Թարգմանողի մատ Ներսիսեան
Գպրոցում

Բագրատում՝ Պ. Գևորգ Ա. Գրիգորեանցի մատ.
Երևան՝ Պ. Վարսոս Առավելանցի խանութում.
Եռևէլք՝ Պ. Միրզաջան Ա. Յակովիանցի գրա-
վաճառնացում, և զանազան հայու-
թակ քաղաքներում՝ հոգեւոր զպրոց-
ների ուսուցիչների մատ

Հայուղութեան համար պատրաստում է. «ՔՕՆ»
ՔԵՆՈՑ. զբքի Հայ թարգմանութիւնը

1449

7013

